



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ցեղաստանություն. վկայություններ, նոթեր, հուշագրություն



génocide : évidences, notes, mémoires C i l i c i e

A. ADOSSIDÈS

---

ARMÉNIENS

ET

JEUNES-TURCS

---

LES MASSACRES DE CILICIE



PARIS  
P.-V. STOCK, Editeur  
155, Rue Saint-Honoré

---

1910

Նվիրվում է Ադանայի 1909 թ. կոստրածների զոհերի հիշատակին

A. Adossidès  
**ARMÉNIENS ET JEUNES-TURCS**  
**LES MASSACRES DE CILICIE**

Traduit du français en arménien par Varoujean Poghosyan

Erevan 2012

Musée-Institut du Génocide arménien

Ա. Ադոսիդես  
**ՅԱՅԵՐ ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐ.**  
**ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ**

Ֆրանսերենից հայերեն թարգմանեց՝ Վարուժան Պողոսյանը

Երևան 2012

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



Գիրքը երաշխավորվել է հրատարակման  
ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի կողմից

Recommandé à la publication par le conseil scientifique  
du Musée-Institut du Génocide arménien de l'Académie nationale des sciences d'Arménie

ՀՏԴ 941 (479. 25)  
ԳԱԴ 63. 3 (2Հ)  
Ա 206

Աղոսիդես Ա.

Ա 206 Հայեր և երիտուրեր. Կիլիկիայի կոտորածները /Ա. Աղոսիդես.—  
Եր.: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012.—XX+116 էջ:

**A. Adossidès**

Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie.— Erevan: Académie nationale des sciences  
d'Arménie, Musée-Institut du Génocide arménien, 2012.—XX+116 pages.

Եւրփի հայեցակարգ՝ Հ. Դանդեյան, Է. Դանդեյան, Հ. Սամունեյան  
Գրաֆիկական հայեցակարգ՝ Հ. Սամունեյան, Է. Դանդեյան


ՀՏԴ 941 (479. 25)  
ԳԱԴ 63. 3 (2Հ)

ISBN 978-9939-822-21-1


©Académie nationale des sciences d'Arménie, Musée-Institut du Génocide arménien, 2012

©ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012

Գասփրինք տղարան, Երևան



# CARTE GÉOGRAPHIQUE partielle de VILAYETS D'ADANA et D'ALEP




Ch. de Fer vers Konja

Gravée par Mathieu (Paris)

Longitude, Méridien de Paris

E. Fonné dess Paris



Echelle

1909 թ. Կիլիկիայում և հարակից տարածքներում տեղի ունեցած հայկական կոտորածները, որոնք կազմակերպել և իրականացրել է երիտթուրքական վարչակարգը՝ համիդյան վարչակարգի աջակցությամբ և հանցակցությամբ, Հայոց ցեղասպանության գործընթացի (1894-1922) ամենանվազ ուսումնասիրված դրվագներից է: Առ այսօր հրատարակվել է իրադարձության պատմությունն արտացոլող փաստաթղթերի միայն մեկ ժողովածու՝ հայազգի Պետրոս Ազնավուրի աշխատասիրությամբ, որը հանդես է եկել Ժորժ Բրեզոլ կեղծանվամբ<sup>1</sup>: Ի սկզբանե նշենք, որ կիլիկյան կոտորածների ժամանակակից հեղինակների աշխատությունները ևս աչքի չեն զարնում բազմազանությամբ: Նույնիսկ այս թեմային նվիրված առաջին գիտական ուսումնասիրությունները լույս են տեսել ոչ հեռավոր անցյալում<sup>2</sup>:

Անտարակույս, այս հանգամանքները հաշվի առնելով է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը վերջերս իրականացրել կիլիկյան կոտորածների պատմությունը լուսաբանող վերոհիշյալ փաստաթղթերի ժողովածուի, ինչպես նաև աղբյուրագիտական մեծ արժեք ունեցող՝ կոտորածների արևմտյան ժամանակակիցներից Ֆերիման Դաբեթի և Ալեքսանդր Ադոսիդեսի գրքերի վերահրատարակությունը, որոնք լույս են տեսել «Ցեղասպանություն. վկայություններ, նոթեր, հուշագրություն. Կիլիկիա» մատենա-

շարով<sup>3</sup>: Միևնույն մատենաշարով է հրատարակվում նաև հունական ծագում ունեցող ֆրանսիացի լրագրող Ա. Ադոսիդեսի «Հայեր և երիտթուրքեր. Կիլիկիայի կոտորածները» գրքի հայերեն թարգմանությունը, որի բնագրի առաջին հրատարակությունը լույս է ընծայվել կոտորածներից անմիջապես հետո<sup>4</sup>:

Կիլիկյան կոտորածների՝ ֆրանսիացի ժամանակակիցների գրչին պատկանող աշխատությունների թվում<sup>5</sup>, Ա. Ադոսիդեսի գիրքն իր կարևորությամբ ունի առանձնահատուկ նշանակություն և օրինաչափ է, որ այն դեռևս մնում է 1909 թ. կիլիկիահայության բնաջնջմանը վերաբերող այն ամփոփիչ աշխատություններից, որին հղում են Հայոց ցեղասպանության ժամանակակից պատմաբանները<sup>6</sup>: Հավելենք, որ այդ գրքից որոշ հատվածներ ընդգրկվել են նաև ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի ջանքերով 1966 թ. լույս ընծայված՝ Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված փաստաթղթերի ժողովածուի մեջ<sup>7</sup>:

Ա. Ադոսիդեսի գրքի աղբյուրագիտական հենքը տպավորիչ է. հիմնվելով գլխավորապես այլազգի բազմաթիվ ականատեսների հավաստի վկայությունների վրա՝ նա քրեմարկում է ոչ միայն Կիլիկիայում, այլև Հալեպի տարածաշրջանում տեղի ունեցած հայկական կոտորածներին առնչվող մանրամասները, ջանում վերլուծել դրանց պատճառ-

<sup>1</sup> G. Brézol, Les Turcs ont passé là... Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres d'Adana en 1909, Paris, 1911.

<sup>2</sup> R.H. Kévorkian, avec la collaboration de P.B. Paboudjian, Les massacres de Cilicie d'avril 1909 // La Cilicie (1909-1921). Des massacres d'Adana au mandat français. Volume préparé par Raymond H. Kévorkian, Paris, 1999 ; Հ. Միմոնյան, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009 ; Վ. Պողոսյան, 1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության զննատմամբ, Երևան, 2009:

<sup>3</sup> G. Brézol, Les Turcs ont passé là... Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres d'Adana en 1909. Préparé à la publication par Varoujean Poghosyan, Erevan, 2009 ; Turkish Atrocities. The Young Turks and the Truth about the Holocaust at Adana, in Asia Minor, during April, 1909. Written and compiled in April, 1911, by Ferriman Dukett, Yerevan, 2009 ; A. Adossidès, Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie. Le texte d'autotypie est préparé à la publication par Varoujean Poghosyan, Erevan, 2011.

<sup>4</sup> A. Adossidès, Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie, Paris, 1910. Սույն գիրքի արևմտահայերեն թարգմանությունը վերջերս տպագրվել է նաև Միլիայում. Ա. Ադոսիդես, Հայերը և երիտասարդ թուրքերը: Կիլիկիայի կոտորածները, ֆրանսերենից թարգմանեց՝ Էմմա Ազարիկեան, Հալեպ, 2009:

<sup>5</sup> Les massacres d'Adana et nos missionnaires. Récit de témoins, Lyon, 1909 ; G. Vayssié, Les vèpres ciliciennes // « La Revue » (Ancienne « Revue des revues »). 1<sup>er</sup> novembre 1909, N 21 ; J. d'Annezay, Au pays des massacres, saignée arménienne de 1909, Paris, 1910.

<sup>6</sup> Տես օրինակ՝ R.H. Kévorkian, op. cit.; idem : Le génocide des Arméniens, Paris, 2006.

<sup>7</sup> Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М.Г. Нерсисян, Р.Г. Саакян. Под редакцией проф. М.Г. Нерсисяна. Ереван, 1966; Второе, дополненное издание. Ереван, 1982, с. 204-220. Տես նաև հայերեն թարգմանությունը (Երևան, 1991):

ները և բացահայտել կազմակերպիչներին<sup>8</sup>: Ըստ նրա բնորոշման՝ «այն, ինչը Ստամբուլում եզակի մեղմությամբ անվանել են Ադանայի խառնակություններ, իրականում ամենահերեշավոր հանցափորձերից է, որը կարող էր արձանագրված լինել հայկական մարտիրոսության մեջ»<sup>9</sup>:

Ի դեպ, իր ֆրանսիացի ժամանակակիցների թվում Ա. Ադոսիդեսը միակն է, որը հստակորեն փաստում է 1909 թ. կոտորածների զուտ հակահայկական միտվածությունը, մատնանշում, որ Ադանայում և այլուր դրանց հրահանգն առնչվում էր բացառապես հայերին<sup>10</sup>, չնայած այն բանին, որ այդ ողբերգության զոհը դարձել էին նաև մի քանի հարյուր հույներ և սաղրիներ:

Ինչ վերաբերում է «ատելի ազգության» բնաջնջմանը, Ա. Ադոսիդեսն այս պարագայում նշում է «մարդկային կերպարանքից այլևս զուրկ արարածների»՝ առանձնահատուկ դժնի վերաբերմունքը տղամարդկանց հանդեպ<sup>11</sup>, հանգամանք, որը Հայոց ցեղասպանության գործընթացին բնորոշ յուրահատկություններից է<sup>12</sup>:

Ջոհերի թվաքանակի առնչությամբ չունենալով դեռևս ստույգ տեղեկություններ, հեղինակը թեև այն նվազեցնում է 20000-ի<sup>13</sup>, այդուհանդերձ, դրան իրավամբ հավելում է նաև նրանց, ովքեր «այդ դժոխքից» փրկվել են հաշմանդամ կամ անաշխատունակ դարձած, ավելի ուշ մահկանացուն կնքել են վերքերից կամ սովից ու տարածված համաճարակներ:

<sup>8</sup> Նշենք, որ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ Ա. Ադոսիդեսի ցուցաբերած անթաքույց հետաքրքրության մասին է վկայում դեռևս 1901 թ., Դորիս կեղծանվամբ, նրա հրատարակած՝ Արդուլ Համիդի կենսագրությունը (G. Dorys, Abdul-Hamid intime, Paris, 1901; 2<sup>me</sup> éd. 1903): Այդ մասին տե՛ս Վ. Պողոսյան, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի զննահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), Երևան, 2011, էջ 131:

<sup>9</sup> Ա. Ադոսիդես, Հայեր և երիտթուրքեր. Կիլիկիայի կոտորածները, էջ 1: Այստեղ և այսուհետ՝ հղումներն ըստ սույն հրատարակության:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 24, 25:

<sup>12</sup> Տե՛ս օրինակ՝ Beginning Again at Ararat. By Mabel Evelyn Elliot, New York-Chicago-London and Edinburgh, [1924], p. 104; G. Horton, The Blight of Asia. An account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers; with the True Story of the Burning of Smyrna, Indianapolis-Kansas City-New York, 1953, p. 131.

<sup>13</sup> Ա. Ադոսիդես, նշվ. աշխ., էջ 65: Նշենք, որ զոհերի թվաքանակի շուրջ պատմաբանները հայտնել են իրարամերձ կարծիքներ: Նրանցից ոմանք, օրինակ, գտնում են, որ հայերը սովել են շուրջ 25000 զոհ (տե՛ս V. Dadrian, Histoire du génocide arménien. Conflits nationaux des Balkans au Caucase, Paris, 1996, p. 305; R.H. Kévorkian, Le génocide des Arméniens, p. 100): Փոխաբերելով ըստ ակադեմիկոս

րից, ինչպես նաև բռնի իսլամացած կանանց և երեխաներին, առևանգված երիտասարդ աղջիկներին<sup>14</sup>:

Նշենք Ա. Ադոսիդեսի մոտեցման մեկ այլ արժանիք ևս, այն է՝ Ադանայում և ամբողջ տարածաշրջանում հայ ժողովրդի կրած նյութական վնասների քննարկումը, առավել ևս, որ սկզբնաղբյուրների բացակայության պատճառով այս հիմնահարցը Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ խիստ նվազ ուսումնասիրված հիմնախնդիրներից է: Նա մատնանշում է ոչ միայն տների, դպրոցների, եկեղեցիների ավերումը, այլև ամայացված դաշտերը, գողացված գյուղատնտեսական մեքենաները, անասունները, ապրանքները, շարժական գույքը<sup>15</sup>: Հավանաբար, այս առնչությամբ չունենալով մանրամասն տվյալներ՝ նա բավարարվում է սոսկ փաստերի արձանագրմամբ, առանց հստակեցնելու այս կարևոր հարցին առնչվող մանրամասները:

Այժմ համառոտ անդրադառնանք 1909 թ. կոտորածների պատճառներին առնչվող Ա. Ադոսիդեսի մեկնաբանություններին: Հարկ է նկատել, որ նրա տեղեկություններն այն ամենի շուրջ ինչը տեղի է ունեցել Օսմանյան կայսրությունում 1908 թ. երիտթուրքական հեղափոխությանը հաջորդած ժամանակաշրջանում, ամբողջական չեն եղել, ինչն անվերապահորեն արտացոլվել է նրա՝ երբեմն հակասություններով լի շարադրանքում: Ա. Ադոսիդեսը, ինչպես նաև անկախ ազգային պատկանելությունից՝ նրա ժամանակակիցներից շատերը, դեռևս ի վիճակի չի եղել ամբողջությամբ կողմնորոշվելու կիլիկյան կոտորածների ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունն ալեկոծած բարդ քաղաքական խնդրումներում: Արդյունքում, նրա մտորումներում հաճախ դժվար է զանազանել կոտորածների բուն պատճառները դրանց շարժառիթներից, ինչպես նաև կողմնորոշվել, թե ովքեր են եղել 1909 թ. կոտորածների կազմակերպիչները:

Պատճառների թվում Ա. Ադոսիդեսն իրավամբ մատնանշում է Կիլիկիայում բնակվող քրիստոնյաների բարգավաճ կացությունը, տարբեր վիլայեթներից մեծ թվով հայերի հոսքը դեպի այս տարածաշրջան և նրանց կենտրոնացումն

Հ. Սիմոնյանի հաշվարկների՝ կոտորածների զոհ դարձել են շուրջ 40000 հայեր. տե՛ս Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 206:

<sup>14</sup> Ա. Ադոսիդես, նշվ. աշխ., էջ 65-67:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 69:

այդտեղ: Բացի այդ, նա մեծ նշանակություն է հատկացնում թուրքերի մոտ արմատացած՝ հայերի ունեցվածքի կողոպուտին: Թեև նա, անկասկած, իրավամբ հավաստում է, որ քրիստոնյաների ունեցվածքի թալանը, որը մշտապես խիստ բնորոշ է եղել օսմանյան ցեղասպան հասարակությանը, օժանդակել է 1909 թ. կոտորածների սանձազերծմանը, այդուհանդերձ, այս առնչությամբ տուրք է տալիս ակընհայտ ծայրահեղ դատողությունների և գտնում, որ գողությունը հաճախ եղել է կոտորածի «միակ շարժառիթը»<sup>16</sup>:

Կիլիկյան կոտորածների պատճառների քննարկման հենքի վրա հաջորդ հիմնախնդիրը, որին մանրամասնորեն անդրադառնում է Ա. Ադոսիդեսը, 1908 թ. վերահաստատված՝ 1876 թ. օսմանյան սահմանադրությամբ՝ մահմեդականների և քրիստոնյաների իրավունքների միջև հավասարության հնարավոր հաստատման, մասնավորապես հայերին զենք կրելու արտոնության ընձեռնման հետևանքով առաջ եկած գերլարվածությունն է<sup>17</sup>: Այս առիթով նա իրավամբ նշում է. «Կիլիկիահայերը շտապեցին օգտվել այն իրավունքներից, որոնք տեսականորեն նրանց էր շնորհում նոր վարչակարգը (երիտթուրքերի – Վ. Պ.)»<sup>18</sup>: Ամենևին չառարկելով հեղինակի այս հետևությանը, նշենք, այդուհանդերձ, որ մեր համոզմամբ, այդ հանգամանքը կարելի է դասել միայն 1909 թ. կոտորածների դրդապատճառների, այլ ոչ թե հիմնական նախադրյալների թվում:

Այս պայմաններում օրինաչափ է, որ մեծ նշանակություն հատկացնելով քրիստոնյաների հանդեպ մահմեդականների տաճած ատելությանը՝ կիլիկիահայության կոտորածներն Ա. Ադոսիդեսը, ի վերջո, պատճառաբանում է թուրքերի մոտ արմատացած՝ քրիստոնյաների վրա իշխելու մտայնությամբ, ըստ որի՝ հարկ է, որ թուրքերը լինեն «արտոնյալ ժողովուրդ»: Սահմանադրական վարչակարգի օրոք իսլամի՝ քրիստոնեությանը ստորադաս դառնալու հնարավորության անցանկալի հեռանկարը շրջանցելու անհրաժեշտությամբ է նա մեկնաբանում Կիլիկիայում հայերի բնաջնջման գործընթացի առանձնահատուկ սաստկությունը և զոհերի մեծ քանակը՝ համեմատաբար սահմանափակ տարածքում<sup>19</sup>: «Անկասկած, վրա չի հասել այն ժամանակը..., երբ Թուրքիայում քրիստոնյայի իրավունքը հավասարա-

կշռի մահմեդականի շահի հետ»,– եզրակացնում է նա<sup>20</sup>: Թեև հարկը չկա շրջանցել այս անառարկելի իրողության նշանակությունը, սակայն կիլիկյան կոտորածների պարագայում, մեզ թվում է, որ այն նպատակահարմար է ընդգրկել սուկ երկրորդական հանգամանքների շարքում: Ուստի, նման եզրակացությամբ, կամա թե ակամա, հեղինակը բացառում է կիլիկիահայության բնաջնջման իրականացումը նախօրոք մշակված պետական քաղաքականության մակարդակով՝ առաջնային նշանակությունը տալով կրոնական հակամարտությամբ պայմանավորված հոգեբանական գործոնին:

Ինչպես և կոտորածների պատճառների վերլուծության հարցում, միանշանակ չէ Ա. Ադոսիդեսի դիրքորոշումը նաև իրադարձության կանխամտածվածության բացահայտման խնդրում, որը ցեղասպանության՝ իբրև երևույթի հիմնական բաղադրիչներից է: Նա բազմիցս փաստում է թե՛ կոտորածների կանխամտածվածությունը և թե՛ օսմանյան կենտրոնական և տեղական իշխանությունների թողտվությունն ու նրանց ղեկավար դերը տարածաշրջանում կոտորածները նախապատրաստելու և իրականացնելու ընթացքում: Հեղինակը մերկացնում է հատկապես տարածաշրջանում՝ իրենց ենթակայության ներքո գտնվող պաշտոնյաներին՝ մահմեդականներին պաշտպանելու շինձու պատրվակի տակ հայերի ոչընչացմանն առնչվող հրահանգներ ուղարկող Կիլիկիայի կուսակալ՝ Ջևադ բեյի և օսմանյան տեղական այլ ղեկավար գործիչների գործելամիջոցների իրական դիմագիծը, փաստում մահմեդական խաժամուժին զենքի ու զինամթերքի տրամադրումը, թուրքական ոստիկանության հանցակցությունը և այլն: Չնայած այս հավաստումներին, նա այնուամենայնիվ ձեռնպահ է մնում կոտորածներին առնչվող խիստ էական հանգամանքներից մեկի շուրջ իր որոշակի կարծիքը հայտնելուց. արդյո՞ք դրանք կանխամտածված և նախօրոք կազմակերպված էին: Նշելով այս առիթով հայերի և թուրքերի իրարամերժ կարծիքները, Ա. Ադոսիդեսը գերադասում է այս հարցը թողնել «օդում կախված», քանզի կոտորածների սանձազերծման համար վերստին էական է համարում սուկ «կայծի» բռնկումը<sup>21</sup>:

Այս հետևությունը բացահայտորեն հակասում է Ա. Ադո-

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 8-10:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 62:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 92:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 13:

սիդեսի մեկ այլ, մեր կողմից ընդունելի եզրահանգմանը: Համեմատելով 1909 թ. Ադանայում տեղի ունեցած կոտորածները 1890-ական թվականների Հայոց ցեղասպանության առաջին փուլի հետ, նա շեշտում է դրանց իրականացումը, ինչպես և նախորդ ժամանակաշրջանում, կանխամտածվածության հիման վրա: «Ադանայում նկատելի է եղել միևնույն կանխամտածվածությունը. այստեղ ևս ամեն ինչ նախապատրաստվել և իրականացվել է ըստ հրահանգի», - ընդգծում է նա<sup>22</sup>: Այդուհանդերձ, ի վիճակի չլինելով ամբողջությամբ հաղթահարել 1909 թ. կոտորածների մեկնաբանության հարցում իր որդեգրած՝ քրիստոնյաների նկատմամբ մահմեդականների մոտ արմատացած ատելությանն առաջնային նշանակություն տվող հայեցակարգի սահմանափակվածությունը՝ նա կրկին նախապատվությունը տալիս է մահմեդականների մոլեռանդության հանգամանքին<sup>23</sup>: Ակնհայտ է, որ դիտավորության հիման վրա հայկական կոտորածների իրականացումը, Ա. Ադոսիդեսն, ըստ էության, ըմբռնում է խիստ սահմանափակ կտրվածքով: Արդյունքում, հեղինակի մեկնաբանությունները վկայում են նրա մոտ կիլիկյան կոտորածների հարցում օսմանյան իշխանությունների կանխամտածվածության շուրջ դեռևս համապարփակ պատկերացումների բացակայության մասին:

Օսմանյան տարբեր՝ համիդյան և երիտթուրքական վարչակարգերի, 1909 թ. Կիլիկիայում տեղի ունեցած կոտորածների խնդրում կրած պատասխանատվության հարցի շուրջ ևս հեղինակը, ինչպես և նրա ժամանակակիցների գերակշռող մասը, չի ունեցել հստակ դիրքորոշում: Տարբեր առիթներով մանրամասն անդրադառնալով այս կարևոր խնդրին՝ Ա. Ադոսիդեսը հայտնում է իրարամերժ կարծիքներ: Ելնելով կոտորածների մեկնաբանության իր հայեցակարգից՝ նա դրանց իրականացման խնդրում վերստին առանձնացնում է մոլեռանդ կատարածուների դերակատարությունը. «Անկախ այն բանից, թե Կիլիկիայի կոտորածն Աբդուլ Համիդն է ոգեշնչել, թե ոչ, այն եղել է Ադանայի թուրքական տարրի գործը և հետադիմական շարժում, որը թե՛ ծագմամբ և թե՛ միտումներով խիստ բնորոշ է Ասիական Թուրքիայում տիրող տրամադրվածություններին»<sup>24</sup>:

Առաջին հայացքից՝ հեղինակը խուսափում է հայկական կոտորածների պատասխանատվությունը բացահայ-

տորեն երիտթուրքական վարչակարգի կամ սուլթանի վրա բարդելուց, քանզի «տիրապետող ցեղի» և «հպատակ ցեղերի»՝ քրիստոնյաների ժողովուրդների հակամարտությունը դիտում է իբրև հաշտության եզրեր չունեցող իրողություն: Նա գտնում է, որ սահմանադրական դարաշրջանն ի վիճակի չի եղել այն հաղթահարելու, ուստի և կիլիկիահայության բնաջնջումը մեկնաբանում է երկու ժողովուրդների փոխհարաբերություններին բնորոշ հակամարտությամբ, որը նոր վարչակարգի օրոք ևս կարող էր միանգամայն հնարավոր լինել, ուստի և Օսմանյան կայսրությունում նույնքան անպատժելիորեն իրականացվել է սահմանադրության հոչակումից հետո<sup>25</sup>:

Այնուամենայնիվ, առավել հետաքրքիր են երիտթուրքերի պատասխանատվության բացահայտմանն առնչվող Ա. Ադոսիդեսի որոշ դիտարկումներ: Նա ընդունում է, որ 1908 թ. աշնանից ի վեր, Կիլիկիայում նկատվել է «հակահայկական շարժում» և իրավամբ նշում, որ կիլիկիահայերի ղեկավարների՝ թե՛ Ջևադ բեյին և թե՛ մասնավորապես ներքին գործերի նախարարին հղած բողոքները որևէ արդյունքի չեն հանգեցրել, քանզի Կոստանդնուպոլսում այդ նախագաղաշացումները հաշվի չեն առվել<sup>26</sup>: Այլ կերպ ասած, հեղինակն այս պարագայում անուղղակիորեն ընդունում է երիտթուրքերի որոշ պարագլուխների իրազեկությունը նախապատրաստվող կոտորածներին և նրանց չկամությունն իրավիճակը շտկելու, հետևաբար՝ կոտորածները կանխարգելելու հարցում:

Ա. Ադոսիդեսը տեղյակ է նաև 1909 թ. սուլթանական հեղաշրջման ճնշմանը հաջորդած ժամանակահատվածում երիտթուրքերի նախապատրաստական գործողություններին, որոնց ընթացքում նրանք ձեռքակալել են մարտունակ հայերին, հայ բնակիչներից առգրավել զենքերը, իսկ մահմեդականներին թե՛ զենք և թե՛ զինամթերք հատկացրել. «Կարճ ասած՝ ամեն ինչ նախատեսեցին և նախապատրաստեցին, որպեսզի այս անգամ գործողությանը ձեռնամուխ լինեին արագ, արմատական և անվրեպ»<sup>27</sup>:

Շատ ավելի դիպուկ է երիտթուրքերի՝ հայկական կոտոր-

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 11: Այս մասին մանրամասն տես Շ. Թ. Թորոսյան, Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, 1987, էջ 28-29:

<sup>27</sup> Ա. Ադոսիդես, նշվ. աշխ., էջ 33:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 62:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 2:

րածների իրականացման խնդրում ունեցած դերին տված նրա մեկ այլ գնահատական. «Ճակատագրի անըմբռնելի հեզանքով հենց այս վարչակարգը, որից նրանք (հայերը – Վ. Պ.) ակնկալում էին փրկություն, ... դարձավ Կիլիկիայում և Կոյեյսիքիայում ինն ամիս առաջ տեղի ունեցած սարսափելի ողբերգության թե՛ պատճառը և թե՛ առիթը (ընդգծումը մերն է – Վ. Պ.)»<sup>28</sup>:

Սակայն Ա. Ադոսիդեսի շարադրանքում հանդիպում ենք այս իրատեսական մեկնաբանությանն անհարիր դատողությունների ևս, որոնք վկայում են կոտորածների պատասխանատվությունը բացառապես համիդյան վարչակարգի վրա բարդելու միտումի մասին: Մի առիթով նա նշում է. «Առանց համիդյան հետադիմական հեղաշրջման նկատմամբ երիտթուրքերի տարած հաղթանակի՝ կասկած իսկ չի կարող լինել, որ կոտորածը կտարածվեր ամբողջ Անատոլիայում»<sup>29</sup>: Առարկելի է նաև նրա մեկ այլ եզրակացություն. «Կիլիկիայի հոլոքոստն՝, անտարակույս, երիտթուրքերի գործը չէ: Այս հրեշալիոր հանցավորձի պատասխանատվությունն ամբողջությամբ բարդվում է համիդյան հետադիմական վարչակարգի վրա»<sup>30</sup>: Նման եզրահանգումներով նա երիտթուրքերին, փաստորեն, զերծ է պահում կիլիկիահայության կոտորածներում ունեցած նվազագույն պատասխանատվությունից, իսկ փոխարենը նրանց հանդիմանում սուկ՝ ջարդերից հետո հայերին անհրաժեշտ փոխհատուցումներ չհատկացնելու համար<sup>31</sup>: Առավել ևս հեղինակի նախորդ դիտողությունների ետնախորքի վրա, կարող է տարօրինակ թվալ, որ նա հանգում է թե՛ իրականությանը և թե՛ իր իսկ հավատումներին հակասող նման եզրակացության: Այդուհանդերձ, ավելորդ չէ մեկնաբանել, որ նա, հավանաբար, դեռևս լիարժեք պատկերացումներ չի ունեցել 1908 թ. հեղափոխությունից հետո կայսրության ղեկավարման հարցում երիտթուրքերի ունեցած վճռորոշ դերակատարության մասին: Այս հանգամանքը եղել է յուրօրինակ «աքիլլեսյան գար-

շապար» կոտորածների մեկնաբանության հարցում բոլոր ժամանակակիցների, այդ թվում Ա. Ադոսիդեսի համար:

Նրա քննարկած շատ այլ կարևոր հիմնախնդիրներ արդիական հնչեղություն ունեն: Նշենք դրանցից՝ հայերի կարծեցյալ ապստամբության վարկածի հերքումը, օսմանյան գորբերի՝ կոտորածներին ունեցած մասնակցության, օսմանյան տարբեր ղեկավար գործիչների՝ հայերին ցուցաբերած օգնության փաստումը, տարբեր վայրերում հայերի ինքնապաշտպանության արժևորումը, եվրոպական երկրների կառավարական շրջանակների անտարբեր դիրքորոշման մեկնաբանումը, ինչպես նաև՝ անգլիացի և ֆրանսիացի որոշ դիվանագետների հերոսական վարքագծի արձանագրումը, որոնք ջանացել են իրենց հնարավորությունների սահմաններում փրկել հայերից շատերին:

Եզրափակելուց առաջ կրկին փաստենք Ա. Ադոսիդեսի՝ 1909 թ. կոտորածների առաջին հետազոտողներից մեկի, անառարկելի ներդրումը իրադարձության պատմության համակողմանի ուսումնասիրության ասպարեզում, ինչն իրավասու չենք մոռացության մատնել: Մենք կատարելապես համամիտ ենք Ա. Մանդելշտամի՝ դեռևս 1917 թ. նրան տված հետևյալ հակիրճ, սակայն ընդգրկուն գնահատականին. «1909 թ. կոտորածների առնչությամբ պ[արոն] Ադոսիդեսն արել է այն, ինչ պ[արոն] Լեփսիուսը՝ 1895 թ. սպանությունների, իսկ լորդ Բրայսը՝ 1915 թ. կոտորածի կապակցությամբ»<sup>32</sup>:

*Վարուժան Պողոսյան*

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>29</sup> «Հոլոքոստ» բառեզրը բազմիցս օգտագործվել է տարբեր ժողովուրդների բնաջնջման գործընթացները, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությունը բնորոշելու համար: Բառի ծագման և գործածության մասին մանրամասն տես I.W. Charny, en collaboration avec R.P. Adalian et S.L. Jacobs, *Holocauste et Shoah : le sens des mots. – Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israel Charny, Toulouse, 2001, p. 76-79:*

<sup>29</sup> Ա. Ադոսիդես, նշվ. աշխ., էջ 60:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 90:

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> Shtu A. Mandelstam, *Le sort de l'Empire Ottoman*, Lausanne-Paris, 1917, p. 203.



գրեթե չի հետաքրքրվում այն ամենով, ինչ տեղի է ունենում հեռավոր Հայաստանում: Նրան բաժին հասած դժբախտությունների պատճառած հուզմունքը հոգնեցնում է անգամ կարեկցողներն: Ինչ վերաբերում է պետական քարտուղարություններին, ապա հայտնի է, որ նրանք համաձայնության են հանգում այն հարցերում, որոնք չեն հակասում կամ սպառնում նրանց կողմից հովանավորվող ֆինանսիստների շահերին և որդեգրել են հայերին սրախողխող անելու հնարավորություն ընձեռող մեղմ դիրքորոշում: Անկասկած, դրանով է պայմանավորված Ադանայի ողբերգության՝ Եվրոպայում գրեթե աննկատ մնալու պատճառը: Պատճառներից էր նաև այն, որ դա համընկավ Կոստանդնուպոլսի իրադարձություններին, որոնք մի քանի շաբաթ շարունակ դարձան միջազգային մտահոգությունների առանձնահատուկ առարկան. իրոք, ապրիլի 13-ին Կոստանդնուպոլսում իրականացվում էր համիդյան հետադիմական հեղաշրջումը, իսկ 14-ին՝ Ադանայի նահանգում կոտորում էին:

Նախ և առաջ դեպքերի համընկնումը կարծել տվեց, թե Կիլիկիայի կոտորածները կազմակերպվել և իրականացվել են Աբդուլ Համիդի հրամանով: Ոմանց կարծիքով, ի դեմս դրանց կարելի կլիներ տեսնել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի դեմ՝ նրա նյութած շարժումից ուշադրությունը շեղելու միջոց, իսկ այլոց կարծիքով՝ նոր գաղափարների նկատմամբ թշնամաբար տրամադրված մահմեդական զանգվածների մոլեռանդության զարթոնքի միջոցով երիտթուրքերի իշխանությունը վարկաբեկելու և իր իշխանությունը վերահաստատելու հնարավորություն: Անձի անցյալն արդարացնում էր այս բոլոր ենթադրությունները: Մինչդեռ ոչ ոք չկարողացավ ներկայացնել Կիլիկիայի խնդրին առնչվող նրա մեղսակցության որևէ ապացույց: Բազմիցս քննարկվել է նաև ապրիլի 13-ից քիչ առաջ օսմանյան նահանգներում շրջող Ելզըզի խորհրդավոր գործակալների հարցը, որոնք ունեին նշանակալից ֆինանսական միջոցներ և հրահանգ, որը պետք է տարածվեր համայն Փոքր Ասիայում. այս հարցը, սակայն, չպարզաբանվեց, եթե իհարկե, սահմանադրական կառավարությունը չուներ՝ նվազագույնը կանխամտածված ձևով, ճշմարտությունը կոծկելու կանխակալ մտեցում: Ձերբազատելով Աբդուլ Համիդին պատասխանատվությունից, որպեսզի կոտորածը վերագրի հայերի կարծեցյալ հեղափոխական մեքենայություններով հրահրված՝ մահմեդականների մոլեռանդության ժայթքումին, նա մեկ հարվածով մեղմացնում էր Ադանայի օսմանյան իշխանությունների պատասխանատվությունը և այդ կերպ իրեն գերծ պահում մեղավորներին խստորեն պատժելու հոգսից: Ամեն դեպքում, անկախ այն բանից, թե Կիլիկիայի կոտորածն Աբդուլ Համիդն է ոգեշնչել, թե ոչ, այն եղել է Ադանայի թուրքական տարրի գործը և հետադիմական շարժում, որը թե՛ ծագմամբ և թե՛ միտումներով խիստ բնորոշ է Ասիական Թուրքիայում տիրող տրամադրվածություններին:

Այստեղ մեր առջև համնում է այն հարցերից մեկը, երբ կրկին ի հայտ է գալիս թուրք ցեղի, ըստ գործածումից դուրս չեկած արտահայտություններից մեկի՝ «տիրապետող ցեղի», թշնամանքը «հայատակ ցեղերից» մեկի՝ կայսրության քրիստոնյաների հանդեպ: Սահմանադրական դարաշրջանի հոչակումը չէր կարող, իհարկե, բավարար լինել այդ թրշնամանքը վերացնելու համար: Չնայած Կոստանդնուպոլսում խորհրդարանը սկսեց իր աշխատանքը՝ օսմանյան հեղափոխությունը չիրականացվեց: Հեղափոխություն կամ բարեշրջում. երիտթուրքերը դեռևս շատ բան պետք է անեն քաղաքական և սոցիալական փոխակերպությունն իրականացնելու համար, որի սկզբունքներն իրենք են ի ցույց դրել, եթե իհարկե այդ փոխակերպությունը հնարավոր լինի: Ազատական վարդապետությունները մահմեդական զանգվածների վրա ազդեցություն չունեցան, ինչն ակնհայտ է, որ չի կարող զարմանք հարուցել: Ասիայի թուրքը չընդունեց այս նոր վարչակարգը, նա ենթարկվեց դրան, նույնիսկ դրա նկատմամբ ակնբախտեն թշնամաբար է տրամադրված: Նա բնագոյաբար վանում է ցանկացած բարենորոգում, հատկապես, երբ այն կրում է օտարի դրոշմ և միտում ունի իրեն նույնացնելու քրիստոնյայի հետ: Այս հանգամանքներով է մեկ անգամ ևս բացատրվում այն իրողությունը, որ հայերի կոտորածը կարող էր հնարավոր լինել նոր վարչակարգի օրոք և որ Թուրքիայում այն կարող էր սահմանադրության հաստատումից հետո նույնքան անպատիժ մնալ, որքան և նախքան այդ:

\*\*\*

1895-1896 թթ. մեծ կոտորածներին հաջորդեց անդորրի մի ժամանակաշրջան. կատարյալ հարաբերական անդորրի, քանի որ Անատոլիայի նահանգներում, ուր ամենուրեք հայի հարևանը քուրդն է կամ թուրքը, քողարկված կամ վայրագ հալածանքը երբեք չի դադարել: Բացառությամբ Կիլիկիայի, որտեղ հայ ազգությունը, որը չնայած որոշ չափով ապահովված էր, այդուհանդերձ՝ դատապարտված պարբերական հարձակումների, բաշիբոզուկների ասպատակություններին, նահանգներում պատուհաս դարձած պաշտոնյաների, բեյերի, աղաների՝ այդ յուրօրինակ բռնակալների կեղեքումներին, նվազում էր և դառնում ընչազուրկ: Երբ հոչակվեց սահմանադրությունը, Թուրքիայում հայերի վիճակը շարունակում էր մնալ ծայրահեղ անկայուն: Ուստի նոր դարաշրջանը նրանք ընդունեցին անսահման խանդավառությամբ, որից ակնկալում էին իրենց ազատագրումը:

Թուրքական «հեղափոխությանը» հաջորդած օրերին այդ անսպասելի իրադարձությունը փառաբանող տոների, Կոստանդնուպոլսում, Չմյուռնիայում և Անատոլիայի մի շարք կենտրոններում տեղի ունեցած ցույցերի ժամանակ թուրքերն ու հայերն առանձնահատուկ սրտակցու-

թյամբ եղբայրացան: Նույնիսկ չլաված բաներ տեղի ունեցան: Տեսնողներ եղան, թե հայ քահանաներն ու մահմեդական «փաթթոցավորները»՝ մոլլաներն ու հոջաները, ինչպես են ողջագուրվել և հաշտություն խորհրդանշող համբույր փոխանակել: Եկեղեցիներում թուրք հռետորները խարազանեցին համիդյան վարչակարգի արարքները: Գերեզմանատներում հավաքված մահմեդական ամբոխներն աղոթեցին մեծ կոտորածների գոհերի համար: Հայերն իրենց հերթին դամբանական ծեսեր մատուցեցին ազատության համար նահատակված երիտթուրքերի հիշատակին: Թե՛ առաջինները և թե՛ երկրորդները հաշտված, համաձայնության միևնույն գաղափարի շուրջ համախմբված և ազատության միևնույն ցանկությամբ տոգորված, միմյանց անվանում էին նույն հայրենիքի զավակներ և արդեն խորիմոմ դժվարին աշխատանքը համատեղ իրականացնելու մասին, որին կոչում էր վերածննդի գործը:

Հայկական կոմիտեները, որոնք ազգի մտածող ու մարտնչող վերնախավն են, նույնիսկ նախքան այս դարաշրջանն ազատական Թուրքիայի հանդեպ իրենց անկեղծության և նվիրվածության մասին երաշխիքներ էին տվել: Երիտթուրքերի հաղթանակից քսան ամիս առաջ՝ 1907 թ. դեկտեմբերին, երբ այդ ժամանակ անհայտ, միջոցներից զուրկ և իր արագ հաջողությունը կանխատեսելուց բավական հեռու «Միություն և առաջադիմություն» կոմիտեն համիդյան վարչակարգի դեմ գործողության ծրագրի հաստատման համար Փարիզում խորհրդածողով էր գումարել, Օսմանյան կայսրության տարբեր ազգությունների՝ հրավիրված բոլոր ներկայացուցիչներից միայն Հայ հեղափոխական դաշնակցության անդամներն արձագանքեցին այդ կոչին: Երկու խմբերը չհապաղեցին համաձայնության հանգել և պայմանագիր կնքել: Իրենց համերաշխությունը հայտնելով երիտթուրքերին՝ հայերը, բնականաբար, ձգտում էին գործել իրենց հայրենակիցների փրկության համար: Այդուհանդերձ, հեռու լինելով անջատողական ձգտումներից, նրանք առաջարկում էին իրենց օգնությունը մի նախաձեռնության, որը միտված էր Թուրքիայի վերածնությանն այնպիսի մի կառավարության հաստատման միջոցով, որը տեղում կապահովեր արդարության և իրավունքի վրա հիմնված խաղաղություն:

Այն է՝ մահմեդական կամ ոչ մահմեդական տարբեր և բազմազան բոլոր այն ժողովուրդների թվում, որոնցից բաղկացած է ընդարձակ կայսրությունը, թուրքերից հետո Թուրքիայի հետ առավել կապված են հայերը, որոնք ուղղակիորեն շահագրգռված են նրա պահպանությամբ: Իրենք իսկ՝ բանաստեղծները, հայրենասերները, հեղափոխականները, որոնք նախկինում մտահղացել էին Հայաստանի թագավորության վերականգնման երազանքը, հրաժարվել են այդ ազնվաբարո պատրանքից: Ինչպես է կարելի միավորել Պարսկաստանում, Թուրքիայում և Ռուսաստանում ցրված այդ էթնիկ ընտանիքի անդամներին: Ամենուրեք խառնված տարասեռ բնակչությանը, որևէ

տեղ չունենալով բավարար հիմք, որը հնարավորություն կընձեռեր հաջողության ակնկալիքով գործադրել այդ բեկորների հավաքագրմանն ուղղված ջանքերը, ի տարբերություն Օսմանյան կայսրության այլ ժողովուրդների՝ չունենալով ազատագրված եղբայրներ և ազատ հայրենիքի գեթ մեկ անկյուն, որը կարողանար լինել ձգողական կենտրոն, իրենց համար ամենաաղետալի պահին գերադասելով, ըստ էության, նույնիսկ թուրքական բռնակալության չարիքները՝ Կովկասի իրենց հայրենակիցների ազգային գոյությանը սպառնացող ռուսականացման քողարկված համակարգից, օսմանյան հայերը հակված էին, անշուշտ, սատարելու երիտթուրքերի կառավարությանը:

Ի թիվս այլոց, այն նրանց ևս կընձեռեր ազատություն, կերաշխավորեր նվազագույնը կյանքի իրավունք և կամոքեր նրանց կացությունը:

Ճակատագրի անըմբռնելի հեգնանքով հենց այս վարչակարգը, որից նրանք ակնկալում էին փրկություն, ինչպես հետո կտեսնենք, դարձավ Կիլիկիայում և Կոյեյսիիայում ինն ամիս առաջ տեղի ունեցած սարսափելի ողբերգության թե՛ պատճառը և թե՛ առիթը:

\*\*\*

Աղետը վնաս է պատճառել միայն Կոյեյսիիայի հյուսիսային մասին և որոշակի վայրերի, ինչպիսիք են Անտիոքը, Քեսաբը, Բեյլանը, Ջըրըկիանը, Լաթաքիան և Ալեքսանդրետը: Կոտորածի թատերաբեմ դարձավ հատկապես Կիլիկիան: Այս հնագույն նահանգը, որի սահմանները համապատասխանում են մոտավորապես Ադանայի վիլայեթի սահմաններին, գտնվում է սիրիական և փոքրասիական ափերի սահմանագծում: Իր մեծ դաշտավայրով այն օղակում է Ալեքսանդրետի ծոցը, իսկ այդ դաշտավայրն ամբողջությամբ շրջափակված է խրոնկ կիրճերով ակոսված լեռների բնական պարսպով:

Արևմուտքում և հյուսիսում Տավրոսի բարձրադիր տարածքներն են՝ նախնիների Քարոտ Կիլիկիան, որն անհարթ և ցրտաշունչ տարածաշրջան է: Հարավում և հարավ-արևելքում «դաշտային» Կիլիկիայի արգավանդ և անտառածածկ հարթավայրային երկրամասն է, տղմաշերտ մի դաշտավայր, որը ռոտզում են հոսող ջրերը, գետակները կամ հանրահայտ անուններ ունեցող այնպիսի գետեր, ինչպիսիք են Պիրամուսը, Սարոսը, Կալիկադոնոսը, որի ջրերում գոհվել է Ֆրիդրիխ Շիկամորոսը, Մինդոսը, որտեղ լողացել է Ալեքսանդր [Մեծը], իսկ Կելուպատրան բարձրացել է ծիրանագույն առագաստներով իր ոսկյա տրիբեման՝ Տարսուն, [Մարկոս] Անտոնիոսին ընդառաջ գնալու համար: Ճարտարապետական բազմազանությունների, լեռների և հովիտների տեղադրության հակադրությունների և ներդաշնակության առումով առավել աչքի ընկնող

\* Հին հռոմեական ռազմաճակատի տեսակ: - Վ. Դ.:

տարածաշրջանները սակավաթիվ են: Այս սքանչելի լեռնագագաթների անհամաչափությունը, դաշտային երկրամասի բնապատկերների հմայքը, բուսականության հարստությունը, պարտեզների և բուսականության միջով մինչ ասի ձգվող քաղաքների և գյուղերի բնական գեղեցկությունը՝ Կիլիկիան դարձնում են շքեղ Փոքր Ասիայի արտոնյալ երկրամաս: Խոնավ, ճահճոտ հողը վնասակար է առողջության համար, սակայն այնքան պարարտ, որ փոքր-ինչ մշակվելուց հետո հրաշալի բերք է տալիս: Ցորենն ու գարին առատ են: Փարթամորեն աճում են որթատունկը, բամբակը, նարնջենին, թթենին: Վերջին տարիներին երկիր են մուտք գործել երկրագործական ժամանակակից մեքենաներ, այդտեղ հիմնվել է արդյունաբերություն, բազմապատկվել են մանուֆակտուրաները, մանածարանները, այրադաշտերը: Ադանա-Տարսոն-Մերսին երթուղին նշանակալի չափով նպաստել է փոխադրումների առաջընթացին: Կոստանդնուպոլիս-Բաղդադ երկաթգիծը շուտով կանցնի Տավրոսով և հատելով Ամանոսը՝ կհասնի Միջագետք: Երկիրն ապագային նայում էր հարաճուն հավատով: Այսօր այդ հարստությունների ահռելի բաժինն ամբողջությամբ ավերված է: Առևտրական գործունեությունը կասեցվել է, ամենուրեք տիրում են թշվառությունն ու սովը:

Կիլիկիայի տեղանքն ու դիրքը նրան մշտապես դարձրել են Արևմտյան Ասիայի կարևորագույն ռազմավարական նշանակություն ունեցող վայրերից մեկը: Նրա դերը նշանակալից է եղել այդ կողմերում տեղի ունեցած մեծ հեղափոխությունների ժամանակ: Պատմության մեջ նշանավորվել են Տավրոսյան լեռնաշղթա ներթափանցող «Կիլիկյան դարպասներ» (ըստ թուրքերի՝ Զյուլեկ Բողազ), իսկ հարավ-արևելքում՝ դեպի Սիրիա և Միջագետք մատչելի ելք ապահովող «Ամանոսյան դռներ» կիրճերը: Այստեղով են առաջ ընթացել նվաճողների բանակները՝ Կիսաքարը, իր եղբայր Արտաքսերքսեսին դեմ հանդիման շարժվող Կյուրոս Կրտսերը, Ալեքսանդր Մեծը, որը Դարեհ [III]-ին հաղթելու համար Իսոս գնալիս կրկին անցել է այս ճանապարհով, Պոմպեոսի հռոմեացիները, թուրքերը, Հայաստանի իշխանները, իսկ XIX դարում՝ Իբրահիմ Եգիպտացին:

Կիլիկիան հաջորդաբար պատկանել է պարսիկներին, Ալեքսանդր [Մեծին], Սելևկյաններին, հռոմեացիներին, դարձել կովախնձոր բյուզանդացիների ու պարսիկների միջև, այն ասպատակել է Մուավիա խալիֆը, ապա հաջորդաբար ռազմակալել են հայերը, թուրք սելջուկները, գրավել են խաչակիրները, ավերել է Լենկ Թեմուրը և վերջապես՝ նվաճել են օսմանցիները: XI դարում Կիլիկիան կրկին վերանվանվել է «Փոքր Հայք», անվանում, որն ուներ դեռևս Մարկոս Անտոնիոսի ժամանակ: Այդ ժամանակաշրջանում թուրքերն ասպատակել են Իրանը և Մեծ Հայքը: Կործանվել է երկրի մայրաքաղաք Անին և նրա հետ մեկտեղ վերացել է ազգային անկախությունը: Խույս տալով ասպատակումից, հայ բնակչությունն արտագաղթել է դեպի Միջերկրականի

ավեր՝ արժանանալով հույների ջերմ ընդունելությանը: Գաղթականների մի ստվար խումբ այդ ժամանակ հաստատվել է Կիլիկիայում, ուր հայ իշխանները հիմնել են Փոքր Հայքի ավատատիրական պետությունը, որը դարձել է բարգավաճող թագավորություն, իսկ ավելի ուշ համագործակցել խաչակիրների հետ՝ վերածվելով նույնիսկ իսլամի բանակների առաջխաղացմանը դիմագրավող՝ ասիական հողի վրա հիմնված վերջին արևմտյան պետության: XIV դարում երկիրն ասպատակել են թուրքմենները, իսկ XV դարի մայրամուտին այն վերջնականապես գրավել է Մուհամեդ Նվաճողի որդին՝ Բայազեդ II-ը:

Կիլիկիայի հայերը, որոնք մահմեդականներից հետո ամենից բազմաքանակն են<sup>33</sup>, խելացի են, աշխատասեր և նախաձեռնող: Կես դարից ի վեր, շնորհիվ Վենետիկի Մխիթարյանների՝ հայ հոգևոր գիտնականների ջանքերի, որոնք այդչափ հզոր զարկ են տվել ազգային գրական և պատմական անցյալի հուշերի վերակենդանացմանը, ազգային մտածողությունը կրկին վերածնվել է, մինչ այդ խորապես ընկճված և ազգի պատմության կատարյալ չիմացության մեջ խարխափող ժողովրդի շրջանում տարածվել է մշակույթը: Նմանապես բարձրացել է հոգևորականության՝ ազգի ավանդույթների պահպանի, բարոյական և մտավոր մակարդակը: Լուսավորչական եկեղեցու կողքին ստեղծվել է ոչ միայն կաթոլիկների համայնք, այլև վերջապես, շնորհիվ ամերիկյան առաքելությունների ջանքերի՝ բողոքականների բավականին բարգավաճ համայնք:

\*\*\*

1895-[18]96 թթ. մեծ կոտորածները խնայել էին այս տարածաշրջանը: Ադանայի արքեպիսկոպոս Նորին սրբազնությունը Մուշեղը Կիլիկիայի գործին նվիրված ուսումնասիրության մեջ<sup>34</sup> հավաստում է, որ այս տարածաշրջանի համար ավելի ուշ պատրաստվել էր կոտորածի մի ծրագիր, որը պետք է իրագործվեր երկու տարբեր փուլերով՝ 1906 և 1907 թթ.: Այդ ժամանակ, Ադանայի կառավարիչ Բահրի փաշան պետք է, որ ձախողված լիներ այդ ծրագիրը: Ըստ թուրքերի՝ քրիստոնյա ենթակաները Բահրիին իրենց կողմն էին գրավել կաշառելու միջոցով: Ամեն դեպքում, այս պաշտոնյան հաճախ է պաշտպանել իր իրավասության

<sup>33</sup> Բուն Կիլիկիան բացի Ադանայի վիլայեթից ընգրկում է նաև հարևան Հալեպի վիլայեթի մի քանի մարզեր: Նախքան կոտորածը, տարածաշրջանի հայ բնակչությունը բաղկացած էր մոտավորապես 120000 մարդուց: Ադանայի վիլայեթում կային շուրջ 100000 հայ: Մահմեդականների՝ թուրքերի, քրդերի, չերքեզների, յուրուկների (քոչվոր բյուրբական ցեղ - Վ. Պ.) թիվը, հասնում է շուրջ 170000-ի: Բացի այդ, կան նաև 50000 հույներ, 90000 անասրիեհներ և ֆելախներ, ասորի-քաղղեացիներ և հրեաներ:

<sup>34</sup> [Mouchegh Mgr, Archevêque d'Adana,] Les vèpres ciliciennes. [Les responsabilités. Faits et documents,] Alexandrie, 1909.

տակ գտնվող հայերին, որոնք այդ վերջին տարիներին դարձել էին մահմեդականների ծածուկ թշնամանքի առարկան: Այդ թշնամանքն առաջին հերթին պայմանավորված էր նահանգներից՝ թշվառության և քրդերի կողոպուտների պատճառով հայ ընտանիքների՝ ժամանակ առ ժամանակ Կիլիկիայի դաշտավայր ներգաղթով, ինչպես նաև այդ նահանգի քրիստոնյա բնակչության բարգավաճ կացությամբ և հարստությամբ: Ի դեմս տեղի ունեցող գաղթի, ի դեպ՝ բավական սահմանափակ, թուրքերը կարծում էին, թե դա արվում էր քաղաքական ետին մտադրությամբ: Ըստ նրանց՝ եթե հայերը գալիս էին հաստատվելու դաշտավայրում, որն արդեն իսկ բավականին խիտ էր բնակեցված համասեռ տարրով, ապա դա կարող էր միայն լավագույնս ապստամբություն կազմակերպելու նպատակ հետապնդել: Ինչ վերաբերում է նրանց նյութական բարօրությանը, տնտեսական վերելքին, ապա թվում է, թե թուրք աղաները դրան նախանձով էին նայում, և ըստ հայերի՝ մտադիր էին կատաղի հայաժանգի միջոցով այն կասեցնել, ինչը մահմեդականներին հնարավորություն կընձեռեր մեկ հարվածով հարստանալ իրենց զոհերի ունեցվածքի հաշվին: Իսկ հնարավոր է, նույնիսկ՝ հավանական: Հայտնի է, որ օսմանյան պատմության ընթացքում ռայայի հաշվին մահմեդականի ապրելը յուրօրինակ կանոն է: Բոլոր ժամանակներում, գլխավորապես նահանգներում, թուրքական մեծ կարողությունները դիզվել են քրիստոնյայի կոպիտ և քողարկված կողոպուտի արդյունքում: Հայկական ցանկացած կոտորած իր հիմքում ունի նմանօրինակ շարժառիթ: Ավելի հաճախ՝ գողությունը նույնիսկ եղել է դրա միակ շարժառիթը: Ադանայի եղելության առիթով ես հետևյալն են կարդում Տարսնի Սուրբ Պետրոսի ուսումնարանի տնօրեն դ[ոկտո]ր Քրիսթիի հաղորդագրությունում.

«Կառավարության պաշտոնյաներից մեկը խոսելով Կիլիկիայում տիրող իրավիճակի մասին, ասում էր. «Սպասում ենք, որ փեթակը լցվի մեղրով և այդժամ այն հավաքելու առիթը կներկայանա»:

Երկրում գրեթե ամենուրեք հայերի ունեցվածքին տիրանալը բաղձալի էր: Նախորդ տարի Քերիմ աղայի ցեղակիցներն անցնելով Նաջարի գյուղով, հայտարարում էին գյուղացիներին. «Ո՛վ գյավուրներ, հիմա դուք ցանում եք, բայց իմացեք, որ Ալլահի օգնությամբ ձեր աշխատանքի պտուղը մենք ենք քաղելու»:

Սահմանադրությունն ամենևին չբարելավեց հայերի կացությունը, որը որոշ առումներով նույնիսկ ավելի բարդացավ: Ադանայում, ինչպես նաև այլ նահանգներում, մահմեդականների շրջանում, ուր անիրազեկությունը զավեշտի աստիճանի էր հասնում, ամրագրված էր այն գաղափարը, ըստ որի՝ սահմանադրությունը ոչ միայն ֆրանկների հետ շփվելու հետևանքով այլասերված, իսլամին դավաճանած, սրբապիղծ երիտթուրքերի, այլև, և հատկապես, հայ հեղափոխականների գործն է, որոնք ձգտում էին ազատության միջոցով իրականացնել իրենց ան-

ջատողական գաղափարները և ստեղծել անկախ պետություն: Մահմեդական Փոքր Ասիան առավել թշնամաբար էր տրամադրված խորհրդարանական վարչակարգի հանդեպ: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի բանագնացները զուր էին ջանում բացատրել, որ ժողովրդական գերիշխանության սկզբունքն ամրագրված է իսլամի օրենքներում, և որ այն նույնիսկ ի սկզբանե եղել է խալիֆաթի հիմքում (երիտթուրքերն ու իսլամական աստվածաբանները փորձում էին համենայն դեպս հենց դա հավաստել): Անատոլիայի բարեպաշտ մահմեդականները ցանկացան ի դեմս գյավուրների հայտնագործած սահմանադրության տեսնել միայն վիրավորանք իրենց կրոնի հանդեպ և անհավատ ազգությունների վրեժխնդրություն: Արդյո՞ք իրենցից չէին պահանջելու քրիստոնյաներին վերաբերվել իբրև եղբայրների, հավասարների: Ինչպես հանդուրժել այդ հավասարությունն առանց շրջանցելու երդմնագանցությունը կամ պղծելու Դուրանը:

Ազդեցիկ բեյերը, հոջաներն ու մոլեռանդ մոլլաները փութաջանորեն հավանություն էին տալիս այդ դժգոհությանը՝ թե՛ ելնելով իրենց համոզմունքներից և թե՛ շահախնդրորեն, քանի որ բոլորի միջև հավասարություն սահմանող օրենքը սպառնում էր բացառել նրանց արտոնյալ դիրքը: Ասում էին, որ այդուհետև չեն կարողանա անպատժելիորեն ընչազուրկ դարձնել, կողոպտել հայերին, որոնք կունենային իրենց պաշտպանող պատգամավորներ, իրենց համար արդարություն ապահովող՝ դատական իշխանության ներկայացուցիչներ, նույնիսկ պաշտոնյաներ բանակում, որոնք կսկսեն ղեկավարել իրենց իսկ՝ հավատացյալներին: Ռայաներն արդյո՞ք արդեն համարձակորեն չէին բարձրացնում գլուխը: Նրանցից ոմանք արդյո՞ք չէին խորհում դատարաններում հին պարտքերի վերամարումը և հափշտակված հողերի վերադարձը պահանջելու մասին:

Այս հանգամանքները կարող էին գուցե և բավարար չլինել պայթյունի հանգեցնելու համար, եթե հայկական կողմից թույլ չտրվեին անզգուշություններ: Ազատության գաղափարով արբեցած՝ կիլիկիահայերը շտապեցին օգտվել այն իրավունքներից, որոնք տեսականորեն նրանց էր շնորհում նոր վարչակարգը. նրանք ինքնամոռացության մեջ կորցրին այն միջավայրի զգացողությունը, որտեղ ապրում էին: Նրանք սկսեցին կազմակերպել իրենց համայնքը, հիմնել ակումբներ, որտեղ անկաշկանդորեն հավաքվում էին, ժողովներ հրավիրել: Այս ամենն ավելի քան օրինական էր: Սակայն մի միջավայրում, ուր մեծ լարվածություն էր տիրում, այսչափ պարզ բաները թուրքերի շրջանում առանձնահատուկ կարևորություն էին ձեռք բերում: Խոսք եղավ նաև խռովահույզ խորհրդանիշների, հեղափոխական թատերական ներկայացումների մասին: Այս մեղադրանքներում չկա և ոչ մի լուրջ կամ

նշգրիտ բան: Ադանայում և Մերսինում բեմադրվեցին հայկական պատմական թատերական ներկայացումներ, սակայն դրանք գրեթե բոլորն արդեն ներկայացվել էին և հրատարակվել կես դար առաջ՝ առանց օսմանյան գրաքննությանը հուզմունք պատճառելու: Ամենակործանարար թատերերգությունը<sup>34</sup> «Սվազի ավերումը Լենկ Թեմուրի կողմից» տարօրինակ խորագիրը կրող ողբերգությունն էր, որտեղ բեմում միմյանց ետևից կարելի էր տեսնել մոնղոլ նվաճողին, Հայաստանի վերջին թագավորին և մի հրեշտակի, որն այս իշխանի համար հրաշալի գուշակություններ էր անում: Շատ վտանգավոր համարվեց նաև «Համետ» ներկայացումը, որը թուրքերն ընդունեցին իբրև հայկական ստեղծագործություն: Թագավորը, որի ուրվականը հայտնվում էր Էլսենոր դղյակի դարավանդում, անկասկած, Հայաստանի թագավորն էր, իսկ ողբերգության արյունալի տեսարանները նենգաբար ակնարկում էին համիդյան կոտորածները: Այլ կերպ էին հիմնավորվում թուրքերի զանգատները՝ խանդավառ խմբերից մեկի գործունեության առնչությամբ, որն Ադանայում հիմնել էր հայրենասիրական ակումբ, ուր տուրք էին տալիս, ըստ էության, անվնաս ազգայնական արտահայտությունների, ի դեմս որոնց, սակայն, օսմանյան կողմը կարող էր տեսնել իսկական սադրանքներ:

Այն, ինչն ավելի գրգռեց թուրքերին՝ նոր վարչակարգի հաստատումից հետո զենքերի հայթայթումն էր մեծ թվով հայերի կողմից: Սահմանադրության հաջորդ օրը սրտերը եղբայրական զգացմունքներով էին տոգորվել, սակայն ատրճանակները վաճառվեցին հազարներով, կայսրության բոլոր նահանգներում մահմեդականներն ու քրիստոնյաները շտապեցին դրանցով զինվել: Ադանայի մահմեդականներն ի դեմս իրենց հայ համաքաղաքացիների նախազգուշական այս միջոցառումների տեսան ավելի քան մութ մեքենայություններ, որոնք վերագրում էին նրանց: Բացի այդ, նրանք չէին կարողանում հանդուրժել, որ մինչ այդ խղճահարություն առաջացնող անհավատները, համարձակվեին բացահայտորեն հրազեն ունենալ: Ի դեպ, նա ով մահմեդական չէ, ըստ իսլամի վարդապետության՝ արժանի չէ զենք կրելու, քանի որ այդ մենաշնորհը վերապահված է միայն հավատացյալների: Այդ վարդապետությունը շարունակում է ամբողջությամբ պահպանվել ասիական ժողովուրդների շրջանում, որոնք կառչած են բոլոր հին ավանդույթներին: Եվս մի նախապաշարում է բանակում քրիստոնյաներին ծառայության ընդունելը, որը ժամանակի ընթացքում ի չիք կդառնա, եթե ենթադրենք, որ օսմանյան խորհրդարանի ընդունած զինվորական ծառայության մասին օրենքը կարողանա հաղթահարել այն մեծ դժվարությունները, որոնց դրա կիրառումը փոքր անց բայս վելու է:

<sup>34</sup> Թուրքական հետաքննություն:

\*\*\*

Սկսած 1908 թ. աշնանից, այն է՝ նոր ժամանակաշրջանի երրորդ կամ չորրորդ ամսից, Կիլիկիայում արդեն նշմարվում էր հակահայկական շարժում, որը ղեկավարում էին հոջաները, երևելիներն ու ցեղապետերը: Բուլանլիկ կազայում Բախչեի մուֆթի Իսմայիլ Հաքին շրջազայելով հայտարարում էր, որ սահմանադրությունը հայերի գործն էր և դրդում էր հավատացյալներին պաշտպանել անարգված շարիաթը: Նրա ընկերը՝ Գյուվելի օղլու Վելին, դիմելով հայերին, զգուշացնում էր շատ չուրախանալ, ավելացնելով, որ նրանց օրերը հաշվված էին: Ոմն Քեոք Ահմեդ Հաճնից շրջակայքի կրոնակիցներին հորդորում էր պատրաստ լինել: Իսլահիեում բարի խոսք տարածողն առաջնորդ Քյուսե աղան էր: Նա դառնորեն զանգատվում էր ստեղծված նոր իրավիճակից, որն, ըստ նրա, շուտով պետք է վերջ դնե իր իշխանությանը, իր ցեղի հեղինակությանը, այն ամենին, ինչն ինքը համարում էր իր ազատության գրավականը: Նա դրանից եզրակացնում էր, որ հարկ է հարձակվել հայերի վրա: Մի ուսյալ աստվածաբան՝ Արաք Մոլլան, շրջագայում էր վիլայեթում՝ քարոզելով սրբազան պատերազմ: Ադանայի շուկայում մուլեռանդները ծաղրում էին հայերին. «Ո՛վ գյավուրներ, շուտով պետք է ձեզ սրախողխող անեն»:

Ջուր էին վերջիններս վտանգի մասին նախազգուշացնում, խնդրում, որ միջոցներ ձեռնարկվեն: Ջուր էին նրանց հոգևոր առաջնորդները՝ Սսի պատրիարք Նորին սրբազնություն Սահակը, Ադանայի արքեպիսկոպոս Նորին սրբազնություն Մուշեղը նախազգուշացնում վիլայեթի գլխավոր կառավարիչ Ջևադ բեյին, ներքին գործերի նախարարին, մեծ վեզիր Քյամիլին և նրան հաջորդած Հիլմի փաշային: Կոստանդնուպոլսում խիստ զբաղված էին, որպեսզի հաշվի առնեին այս նախազգուշացումները: Ինչ վերաբերում է Ջևադ բեյին, ի հակադրություն նրան թիրախ դարձրած այն մեղադրանքի, ըստ որի՝ [Բարձր] Դռնից պարբերաբար թաքցրել էր ճշմարտությունը, հաստատվեց, որ հենց նա ինքն էր մեծ վեզիրության ուշադրությունը հրավիրել իրավիճակի բարդության վրա: Նա, սակայն, ջանում էր դրա պատասխանատվությունը բարդել հայերի վրա: Նա նույնիսկ նրանց առաջնորդին՝ Ադանայի արքեպիսկոպոսին, ներկայացրել էր իբրև հեղափոխական վտանգավոր գործակալի, անկասկած այն պատճառով, որ այս անգուսպ և եռանդուն բարձրաստիճան հոգևորականը քաջաբար և անզգուշորեն պաշտպանում էր իր հոտի իրավունքներն ու շահերը:

Ջևադը թույլ և վախկոտ մարդ էր, իրականում ընդամենը գործիք՝ Ադանայի հարուստների և ազդեցիկ երևելիների խմբակցության ձեռքին, որոնց թվում էր նաև ոմն Բաղդադի Ջադե Աբդուլ Քադերը: Ի դեպ, Ջևադի նախորդ արարքները նրա օգտին չէին վկայում: Լինելով Աբդուլ

Համիդի դրածոն, նա իր ամբողջ գործունեությունը ծավալել էր Ելդրզում և հայտնի է, որ դա նրա առաքինի վարքագծի առհավատյան չէ: Նրա համագործակիցների և ենթակաների անցյալը նույնքան դժգույն էր: Վիլայեթի զինվորական հրամանատար, կարծրացած հետադիմական Ռեմզի փաշան աչքի ընկավ՝ իր վերադասի հովանավորությամբ ղեկավարելով 1895 թ. Մարաշի կոտորածները: Ոստիկանությունը գտնվում էր համիդյան լրտես Ահմեդ բեյի հրամանատարության ներքո: Միսլյան կոչվող հայը՝ իր ազգի դավաճանը և ճանաչված սադրիչ գործակալը, վիլայեթում իրականացնում էր թարգմանչի պարտականությունները: Շրջանների շատ մութասարիֆներ և կայմակամներ, վերջապես՝ ստորադաս գործակալների մեծամասնությունը, համախոհներ էին, քանզի հայտնի է, որ նոր վարչակարգի թույլ կողմերից մեկն իրադրության պահանջներին համապատասխանող անձնակազմի բացակայությունն է (և դա այդպես է գրեթե ամենուրեք):

Եթե Ադանայի նահանգի կառավարությունում երիտթուրքական տարրը ներկայացված չէր, ապա այն միանգամայն անպատեհ ձևով էր ներկայացված այս քաղաքում ստեղծված «Միություն և առաջադիմություն» կոմիտեի բաժանմունքում: Ներկայումս ևս նահանգներում գործող կոմիտեներում, ի հնարավորինս առավել շատ համախոհներ զինվորագրելու ջանքեր գործադրող երիտթուրքերն ամենևին խստաբարո չեն: Ադանայում նրանց կոմիտեն ղեկավարում էին խիստ կասկածելի մարդիկ, որոնք, ինչպես օրինակ՝ ոմն Իհսան Ֆիքրին և նրա ընկեր Իսմայիլ Սեֆան, չարագուշակ ազդեցություն ունեցան հասարակական գիտակցության վրա:

Իշխանությունների թուլության, անփութության և կաշառվածության հետևանքով Ադանայի վիլայեթում կատարյալ անիշխանություն էր տիրում: Չարաշահումներն ու հալածանքները հաճախակի բնույթ էին կրում: Եղան նույնիսկ հայերի սպանությունների առանձին դեպքեր: Սկսած փետրվար ամսից՝ տազնապալի լուրեր էին տարածվում, որոնց արձագանքում էին մինչև անգամ երեխաները: Այսպես, ամերիկյան միսիոներական դպրոցներ հաճախող թուրք աղջիկներն անթաքույց պատմում էին, թե ինչպես էին «տանը լսել, որ պատրաստվում են սպանել բոլոր հայերին»<sup>36</sup>: Մարտ ամսին մահմեդականների թշնամական տրամադրվածությունը դարձավ ծայրահեղ, նրանք խոսում էին սպառնալից ձևով: Հետաքննությունը հետագայում կարող էր հավաստել, որ նրանք համոզված էին, թե հայերը գործողություն էին ծրագրում: Մերսինում Անգլիայի հյուպատոսս պ[արոն] Դաութի-Ուայլին իր զեկուցագրում նշում է.

«Ես այն կարծիքին եմ, որ թուրքերի մեծամասնությունն իսկապես կարծում էր, որ իրենց երկիրը, կյանքն ու կրոնը սպառնալիքի տակ

էին: Նրանք խիստ անիրազեկ էին՝ գիտակցելու համար դրա անհավանականությունը»:

Ամեն դեպքում, կոտորածի գաղափարը շարունակում էր հասունանալ: Պահն առավել քան բարենպաստ էր թվում նման ձեռնարկման համար, քանի որ գարնանը դաշտային աշխատանքները դեպի կիլիկյան դաշտավայր էին հրապարտում 30000-ից 40000 չերքեզների, յուրուկների, քուրդ բանվորների, որոնք արժեքավոր նեցուկ էին այն գործի ի կատար ածման համար, որը պատրաստվում էին հրատապ իրականացնել: Երիտթուրքերը պնդում են, որ կոտորածը կազմակերպված չի եղել, որ այն պատահականության, ճակատագրի, «քաղերի»՝ արդյունք է: Հայերը պնդում են հակառակը, իսկ իրադարձությունների ականատեսներ դարձած բազմաթիվ եվրոպացիներ այն կարծիքին են, որ կոտորածը եղել է դիտավորյալ, կանխամտածված և վաղօրոք ծրագրված: Ընդունենք, որ ծրագիրը կախված էր օդում, բայց մի կայծը բավական եղավ գայրույթի պոռթկում առաջացնելու համար: Ամեն դեպքում, ինչպես նշվում է պ[արոն] Դաութի-Ուայլիի զեկուցագրում, «կոտորածը սկսվեց բավական հեռվում գտնվող վայրերում, մինևույն օրը և գրեթե միևնույն ժամին: Ադանայում իրականացված սադրանքը նման արդյունքի չէր կարող հանգեցնել, և ես հակված եմ կարծելու, որ իշխանությունների մի մասը նախապես տեղյակ էր ծրագրված կոտորածներին»:

<sup>36</sup> Թուրք. – ճակատագիր: – Վ. Պ.:



Ասում են, որ փառիշառը պատրաստվում է պատժել կրոնի բոլոր թշնամիներին և հարգալից վերաբերմունք պարտադրել շարիաթի օրենքի հանդեպ: Երեկոյան Ադանա քաղաքն ասպատակում են թուրք, քուրդ և չերքեզ գյուղացիներն ու բաշիբոզուկները, որոնց բերել էին մոտակայքից և նույնիսկ՝ հեռավոր գյուղերից: Նրանք զինված են ծայրերին մեծ հանգույցներ ունեցող մահակներով, կացիներով, դանակներով, եղաններով: Միայն մի քանիսը հրազեն ունեն, այլք պետք է զինվեին զորանոցում:

Այդուհանդերձ, անձամբ կուսակալ Ջևադ բեյի նախագահությանը գումարվում է մի ժողով: Բարձրաստիճան պաշտոնյաները, մահմեդական հոգևորականներն ու երևելի թուրքերը համամիտ են հաջորդ օրը հայերին «խտորեն պատժելու» հարցում: Միայն հաքեմը՝ դատարանի նախագահն է բողոքում այդ որոշման դեմ<sup>37</sup>, և առաջարկում, որ լուրջ խառնակությունների բռնկման պարագայում՝ ձեռնարկ պատժեն մահմեդական կարգազանցներին, ի խրատ այլոց: Սակայն նախապատվությունը տրվում է հակառակ կարծիքին: Հայերը նույնիսկ վատահեցնում են, որ իբրև ամփոփիչ խոսք՝ մուֆթին պետք է արտասանած լիներ սրբազան բանաձևը.

«Թույլատրվում է սպանել անհավատներին և տիրանալ նրանց ունեցվածքին»:

Այդուհանդերձ, Ջևադը հանգստացնում է այն օտարերկրացիներին և հայերին, որոնք ամբոխի վերաբերմունքից և բաշիբոզուկների հայտնվելուց անհանգստացած՝ տեղեկությունների էին սպասում:

«Երեքշաբթի երեկոյան, ժամը 9-ին, - գրում է ամերիկյան միսիոներության ղեկավարներից պ[արոն] Ուիլյամ Չեմբերսը, որը կոտորածի ընթացքում աչքի ընկավ իր սառնարտությամբ, ջանադրությամբ և հիասքանչ նվիրվածությամբ, - գնացի կառավարչի մոտ. նա ինձ հավաստեց, որ կարգ ու կանոնը և անվտանգությունն ապահովելու համար ձեռնարկված են բոլոր միջոցները»:

Գրեթե բոլորը հավատ էին ընծայում այս հավաստիացումներին: Բացի այդ՝ հաջորդ, չորեքշաբթի օրը, ապրիլի 14-ին, Հարության տոներից երեք օր անց հայկական, ֆրանսիական, ամերիկյան դպրոցները վերաբացեցին իրենց դռներն այդ հաստատություններ հաճախող 4000 աշակերտի առջև: Այգեպաններն ու մշակները գնացին դաշտ, խանութպանները՝ շուկա:

\*\*\*

Առավոտից ջարդարարների նոր խմբերը, որոնք արդեն հմտություն էին ձեռք բերել շրջակայքի ագարակներում սպանություններ կատա-

<sup>37</sup> Հաջորդ օրն առավոտյան, այն պահին, երբ բռնկվում էր հրաձգությունը, Պարսկաստանի հյուպատոսին կատարած այցի ժամանակ, հաքեմն ասել է. «Ի՞նչ կարող էի անել, եթե կուսակալը և ֆերիկը (ռազմական հրամանատարը) ինձ չաջակեցեցին»:

րելով, քաղաք թափանցեցին: Նշենք մի մանրամաս. բոլոր մահմեդականները՝ բարձրաստիճան պաշտոնյաներից մինչև վերջին թափառաշրջիկը, կրում էին սպիտակ փաթեթ: Իսլամական աստվածաբան հայրերի այս գլխազարդն այդ ժամանակ ծառայում էր թե՛ իբրև կրոնական խորհրդանիշ և թե՛ իբրև զատորոշող նշան, որովհետև գործողության թե՛ժ պահին այդ կերպ ավելի լավ կկարողանային հավատացյալներին զանազանել անհավատներից: Մեկ այլ նախագուշություն ձեռնարկեցին տհաճ խառնաշփոթություններից խուսափելու համար. շուկայում մահմեդականներին պատկանող բոլոր կրպակները նշվեցին «իսլամ» բառով, որը դրանք զերծ կպահեր կոդուստից և հրդեհից: Սկսած առավոտյան ժամը 7-ից, գլխավորապես շուկայում, ձևավորվում են ամբոխներ, որոնք տեղում իսկույն, և նույնիսկ մինչև կոտորածի սանձազերծումը, սկսում են հայերի՝ նախ և առաջ ոսկերչական խանութների կողոպուտը: Առաջանում է խուճապ, բազմաթիվ վաճառականներ հապճեպ հանում են իրենց ցուցափեղկերը, փակում կրպակները: Այդուհանդերձ, կուսակալը շարունակում է բարեհամբույր և հայրաբար հուսադրել և կեղծ երաշխիքներ շտայլել, գործելաճ, որի գաղտնիքին Արևելքում տիրապետում են: Նա նույնիսկ հայ հոգևոր առաջնորդներին համոզում է հորդորել ժողովրդին զբաղվել իր գործերով: Երկյուղելու ոչինչ չկա: Այսպիսին է նրա պատասխանը, և նա պնդում է, որ դա այդպես է:

«Ափսոսանքով եմ նշում, - գրում է պ[արոն] Չեմբերսը, - որ ես ևս, հավատ ընծայելով կուսակալի խոսքերին, մեծ թվով վաճառականների դրդեցի վերաբացել իրենց խանութները»:

Ապրիլի 14-ի առավոտյան տեղի ունեցած իրադարձությունների մասին մեզ են հասել բազմաթիվ վկայություններ, որոնցից մի քանիսը շատ մանրամասն են: Մենք կրավարարվենք միայն մի քանի հատվածներ մեջբերելով Մերսինում Անգլիայի հյուպատոս մայոր Դատթի-Ուայլիին՝ Տարսուսի ամերիկյան դպրոցի դասախոս և «Նյու Յորք Հերալդի» թղթակից, արժանապատիվ Հերբերթ Ադամս Գիբոնսի հղած զեկուցագրից: Պ[արոն] Գիբոնսը, ինչպես նաև պ[արոն] Չեմբերսը, հաջորդ սարսափելի օրերին աչքի է ընկել իր անվեհերությամբ և նվիրվածությամբ. սկսած առավոտյան ժամը 7-ից Ադանայի շուկայի փողոցներում նա կատարում էր «տեսչական շրջապատույտ»:

«... Փակ շուկայում, - գրում է նա, - ես նկատում էի, որ հայերի խանութները բաց չէին, իսկ դրանց մոտակայքում գտնվողները շտապ փակվում էին: Ես կանգնեցի երկու թուրքի զինագործական կրպակների առջև, որտեղ մահմեդական հոջաները գնումներ էին կատարում: Այնուհետև գնացի հայկական թաղամաս...

... Պ[արոն] Չեմբերսը և ես դեռևս չէինք հեռացել թաղամասից,

երբ հանդիպեցինք արյունաներկ մի երիտասարդի: Նրան ծեծել էին թուրքերը, որոնց հանդիպեցինք փոքր-ինչ հեռվում՝ փողոցներից մեկի ոլորանում: Բոլոր փողոցները լի էին ծայրերին մեծ հանգույցներ ունեցող մահակներ կրող թուրքերով: Այդ մահակները հապճեպ, այդ իսկ պահին չէին հավաքել, ակնհայտ էր, որ դրանք ձեռք էին բերվել նախօրոք: Փողոցները թուրքերի տնօրինության տակ էին արդեն իսկ նախքան խառնակությունների բռնկումը: Ես հավաստում եմ մասնավորապես այս հանգամանքը: Սարսափահար հայերն ընկրկել էին իրենց թաղամասերը, բացառությամբ ատրճանակներով զինված մի խումբ երիտասարդների, որոնք կենտրոնացել էին շուկայի կենտրոնում՝ իրենց խանութները պաշտպանելու համար<sup>38</sup>...

Մենք ճամփա ընկանք դեպի սերայ<sup>39</sup>, ձեզ մի ճեպագիր ուղարկելու և կուսակալին նախազգուշացումներ անելու մտադրությամբ, երբ դեմ առ դեմ դուրս եկանք Ֆերիկին<sup>40</sup>, ում ուղեկցում էր հայ եպիսկոպոսի *locum tenens*-ը՝ նրան հետևում էր զինվորների պահակախումբը: Մենք միացանք նրանց: Քանի որ մենք անցնում էինք զուգահեռ փողոցներից մեկով, որը տանում էր դեպի բացօթյա շուկա, տեսանք կողոպտիչների, որոնք զավթել էին մի խանութ և գլխովին տարված էին աշխատանքով: Ֆերիկը բավարարվեց կողոպտիչներից մեկի ձեռքից նրա մահակը վերցնելով և մի շարժում անելով՝ կարծեք ցանկանում էր նրա գլխին խփել: Այնուհետև հասանք բացօթյա շուկայի մուտքին: Մեր առջև՝ շուրջ 150 յարդ հեռավորության վրա, հավաքվել էր սովոր և մոլեգնած մի ամբոխ: Մենք պնդեցինք, որ առաջնորդելով իր զինվորներին՝ Ֆերիկը մաքրի շուկան»:

Այդ ժամանակ Ռեմզի փաշան առաջարկեց իրեն ուղեկցող հայ հոգևորական, եպիսկոպոսի փոխանորդ Արսենին իրենից առաջ անցնել մեկ տասնյակ մետր՝ խոստանալով, որ այդ դեպքում կհետևի նրան: Եպիսկոպոսի փոխանորդը նրան քաղաքավարի պատասխանեց. «Ձեզնից հետո, իմ գեներալ»:

«Մինչդեռ նրանք այս հարցի շուրջ վիճաբանում էին, լավեցին կրկնվող կրակոցներ: Դրանք հայ երիտասարդներն էին, որոնք խմբված շուկայի կենտրոնում՝ օդ էին կրակում: Մենք կարողանում էինք հստակորեն հետևել նրանց հրաձգությանը, տեսնել նրանց պարզված ձեռքերը և դեպի օդ ուղղված ատրճանակները: Ֆերիկին ավելին պետք չէր հապճեպ հեռանալու համար: Նա շրջվեց և թաքնվեց կոնակում, որտեղից օրեր շարունակ դուրս չեկավ»:

Փոքր-ինչ հեռվում պ[արոն] Գիբոնսը և պ[արոն] Չեմբերսը հանդիպել

են մի երիտասարդ թուրք սպայի, որն իր հրամանատարության տակ ուներ շուրջ հիսուն զինվոր և «անթաքույց վազում էր» դեպի հրաձգության վայրը, որովհետև համանման պարագաներում՝ օտարերկրացիների ներկայությամբ, միշտ մեծ ջանադրություն էր ցուցաբերվում:

«Զինվորների ետևում մահակները, սրերը, կացինները, եղանները թափահարող թուրքերի մի հրոսակախումբ կար: Նրանց առաջնորդում էր կանաչ փաթեթով մի ձեռուհի, որն անեծքներ էր տեղում գլավորների հասցեին: Մենք կանգնեցրինք սպային՝ հարցնելու, թե արդո՞ք նա մտադիր էր իրեն ուղեկցող անձանց միջոցով վերահաստատել կարգը: Նա պատասխանեց, որ նրանցից չի պահանջել հետևել իրեն: Նրա հետ զրույցի ընթացքում մենք նկատեցինք, որ գերադասելի կլիներ ցրել այդ հրոսակախումբը, քան այն իր հովանու տակ վերցնել և այդ կերպ նրան թույլ տալ միանալու այլ խռովարարներին: Մինչ մենք բանակցում էինք, բարյացակամ անցորդները մեզ մոտեցան և հորդորեցին հեռանալ ու չմիջամտել այն ամենին, ինչը մեզ չի վերաբերվում: Ճիշտ այդ պահին մեզ աղմուկի ձայներ հասան. դա շուկայի այդ վայրում գտնվող կրպակների՝ սկիզբ առնող կողոպուտն էր»:

\*\*\*

Առավոտյան ժամը 9-ից 10-ի միջև շուկայում, Տոսպոմախեսի և Շաբանիեի հայկական թաղամասերում տեղի ունեցան սպանությունների առանձին դեպքեր: Մի քանի վիրավորներ վազում են դեպի եպիսկոպոսություն: Կազմվում է պատվիրակություն՝ կառավարչի մոտ գնալու և վերջին քայլը ձեռնարկելու համար. երկու երևելի հայեր՝ Դավիթ Ուրֆալյանը և Արթին Շադրիկյանը, մեկը՝ քաղաքային ինքնակառավարության խորհրդական, իսկ մյուսը՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամ, գնում են Ջևադ բեյի մոտ: Վերջինս վերահաստատում է իր խոստումները: Նա հանձնարարում է Ուրֆալյանին և կոտորածի գլխավոր կարգադրիչներից մեկին՝ Աբդուլ Քադերին, գնալ և հանգրստացնել բնակչությանը: Նրանք դեռ չէին հասցրել կոնակից հեռանալ, երբ ըստ Աբդուլ Քադերի ազդանշանի՝ մի ոստիկան հրացանի հարվածով սպանում է Ուրֆալյանին: Ինչ վերաբերում է Շադրիկյանին, ապա նա սպանվում է քաղաքային ինքնակառավարության խորհրդի նիստերի դահլիճում:

Վերադառնալով պ[արոն] Գիբոնսի զեկուցագրին, որը պ[արոն] Չեմբերսի, կուսակալի, պաշտոնյաների և քաղաքի վարչության ներկայացուցիչների հետ մեկտեղ դարձել էր այս տեսարանի ականատեսը. նրանք բոլորը գտնվում էին հարևանությամբ գտնվող սենյակում և կարող էին փոքրիկ օդանցքից տեսնել, թե ինչ էր տեղի ունենում այն սենյակում, որտեղ իրականացվում էր ոճիրը:

<sup>38</sup> «Կողոպտիչներին հեռացնելու հույսով»,- գրում է պ[արոն] Գիբոնսը մեկ այլ զեկուցագրում:  
<sup>39</sup> Սերայ կամ կոնակ՝ կառավարության պալատ: Մինևոյն բակում են գտնվում Բելեդին՝ քաղաքային ինքնակառավարության շենքը, զորանոցները և հեռագրային գրասենյակը:  
<sup>40</sup> Զինվորական հրամանատար Ռեմզի փաշային:  
 \* Լատ. - փոխանորդ: - Վ. Պ.:

«Երկար սրով զինված մի հսկա<sup>41</sup> հարձակվեց նրա վրա... Նա բարձրացնում էր իր սուրը և իջեցնում... Մենք լսում էինք հոգևարք ապրողի ճիչերը... Միևնույն սենյակում՝ սեղանի ետևում, մեկ այլ խումբ սպանում էր մեկ այլ հայի: Ծենքի աստիճանների վրա դաշունահարում էին երեք այլ հայերի: Կուսակալը բացարձակապես ոչինչ չարեց այդ կոտորածը դադարեցնելու համար...»

Երբ մենք իջանք՝ անցանք սարսափելիության աստիճանի այլանդակված երեք դիակի մոտով: Նրանցից մեկի վրայից նույնիսկ արդեն հանել էին հագուստները...»:

Մեկ այլ զեկուցագրում պ[արոն] Գիբոնսը գրում է.

«Գյուղերից կուտակվում էին անհամար մահմեդականներ, իսկ կուսակալը, չնայած մեր եռանդագին բողոքներին, ավազակների այդ խառնամբոխին բաժանել տվեց զենք ու զինամթերք՝ մեզ ասելով, որ նրանք պահեստային զինվորներ են»:

Առաջին անկարգությունների մասին Բարձր Դռանը տեղեկացնելու համար Ջևադ բեյը հեռագրում է. «Ջինված հայերը հարձակվել են և կոտորում են թուրքերին: Կոնակը պաշարված է»:

Ավելի ճշգրիտ վարկած ներկայացնելու համար՝ հայկական եպիսկոպոսությունը փորձում է Կոստանդնուպոլսի պատրիարքությանը հեռագիր ուղարկել, որը հեռագրային գրասենյակը հրաժարվում է փոխանցել:

Ինքնին հասկանալի է, որ հայերը ոչ մեկի վրա չեն հարձակվել: Նրանք միայն պատրաստվում են ինքնապաշտպանության: Նրանց եղբայրներին, որոնք անցյալում՝ 1894, 1895 և 1896 թթ. ջարդերի ժամանակ թույլ են տվել, որ իրենց ոչխարների նման խողխողեն, շատ են հանդիմանել: Խնդիրն այն է, որ նրանք ամբողջությամբ անզեն էին: Այս անգամ նրանցից շատերը որսորդական հրացաններ և ատրճանակներ ունեն: Ուստի նրանք ուժգնորեն կռիմադրեն:

\*\*\*

Ժամը 11-ի շրջանում, քաղաքի բազմաթիվ վայրերում կրակոցներ են հնչում, նախ ընդմիջվող, այնուհետև դրանք կրկնապատկվում են, բազմապատկվում ինչպես կարկուտը: Ամեն տեղից լսելի են՝ «կոտորեք, կոտորեք գլավորներին» ճիչերը, որոնք այնքան ուժգին են, որ երբեմն գերազանցում են հրազենային ճայթյուններին: Ամբողջ քաղաքում տեղի է ունենում մարդորս՝ լայնածավալ հարձակում սարսափից խելակորույս ժողովրդի վրա: Բոլոր կողմերից՝ առանց որոշակի ուղղության, փախչում են տղամարդիկ, կանայք, երեխաները, որոնք բախվելու են պատերին, ընկնելու ինչպես շանթահար եղածներ: Նրանց սպանում են հրացանի, դանակի հարվածներով, մահակներով, կացիներով և քարերով: Կարելի է տեսնել, թե ինչպես են երեսուն կամ քառասուն

<sup>41</sup> Ըստ այլ զեկուցագրերի՝ այս մարդուն հետևում էր բազմամարդ մի հրոսակախումբ:

հոգուց բաղկացած հրոսակախմբերը հարձակվում միևնույն զոհի վրա. մի երեխայի վրա կան սրի ու յաթաղանի 51 հարվածի հետքեր: Այլ ավազակներ հսկում են փողոցների ծայրամասերը՝ անսպասելիորեն նետվում խուճապահար անցնող հայի վրա: Չորքը գործում է խաժամուժի հետ համաձայնեցված: Կան իրենց մարդկանց զսպել ջանացող պաշտոնյաներ, սակայն միջամտող հոջաները տատանվողներին արագ տանում են իրենց ետևից:

Այդուհանդերձ, Անգլիայի հյուպատոսը գրում է.

«Հոջաները երկփեղկված էին: Հանդիպեցի նրանցից ոմանց, որոնք ջանում էին զսպել ամբոխին: Մյուսները հրացանները ձեռքն առած՝ իրենք ևս կրակում էին»:

Կոտորում են իշխանությունների աչքի առջև, ոստիկանների աջակցությամբ, որոնք որսահավածի դեր են ստանձնել և ջարդարարների ուշադրությունը հրավիրում են այն զոհի վրա, որը կարող է նրանցից խույս տալ: Սպանությունից հետո ամենուրեք վրա է հասնում կողոպուտը, որին հաջորդում է հրդեհը:

«Մենք լսում ենք,– գրում է կաթոլիկ միսիոներուհի քույր Մարի-Մոֆին,– ջարդվող դռների և դրամարկղների ու փողոց նետվող կահույքի դղրոյունը...»:

Երեկոյան կողմ միաժամանակ բռնկվում են շատ հրդեհներ: Տների վրա նավթ են շաղ տալիս և հրկիզում: Ամբողջ ընտանիքներ դրանցում շնչահեղձ են լինում և ածխանում: Խարույկից փախչել փորձող դժբախտներին փողոցներում սպանում են նրանց հալածող և հետասպնող անհամար մարդասպանները:

Այդուհանդերձ, իրենց թաղամասերից երեքում հայերը համառորեն դիմադրում են: Տարբեր վայրերում նրանք կռիմադրեն 24 կամ 48 ժամ շարունակ՝ բազմաթիվ անգամներ ետ մղելով հարձակվողներին, նույնիսկ նրանց մեծ կորուստներ պատճառելով: Թերս-Գափոում նրանք կգրավեն մի սզկիթ և փախուստի կմատնեն թուրքական հորդաներին: Մեկ այլ վայրում՝ հինգ հոգով պարտության են մատնում մի ուժեղ հրոսակախմբի: Մի քանիսը նույնիսկ համարձակորեն հարձակումներ են գործում՝ մեկուսացված հայ ընտանիքներին օգնության հասնելու համար: Տեղ-տեղ իրենք իսկ՝ գրոհին մասնակցող զորքերը, ստիպված են նահանջել, քանի որ պաշարողները, թեպետ ավելի բազմամարդ էին և ավելի լավ զինված՝ հարձակվում են բացեփակ, այնինչ որոշ փողոցներում հայերը պատասպարված են ամուր մարտապատնեշներով և կոկում են, ի դեպ, հուսակտուր քաջությամբ: Մահմեդականները՝ «դժգոհ, գերզայրացած,– գրում է հյուպատոսներից մեկն անձնական նամակում,– տեսնելով, թե ինչպես են հայերը պաշտպանվում», դրանից ավելի են կատաղում:

Առաջին օրվա հետմիջօրեին Մերսինում Անգլիայի փոխիուպատոս\* մայր Դաութի-Ուայլին կնոջ ուղեկցությամբ գալիս է Ադանա: Թե մեկը և թե մյուսը հետագա սարսափելի օրերին քաջության և անձնվիրության հրաշքներ կգործեն: Եթե մայր Դաութի-Ուայլին, չնայած եռանդուն ջանքերին, որոնցով նա հանդես եկավ իշխանությունների առջև, չհաջողվեց անմիջապես դադարեցնել կոտորածը, համենայն դեպս մահից փրկեց անհամար հայերի: Եթե նրա գործընկերները հետևեին նրան, ապա կուսակալի մոտ նրա ձեռնարկած քայլերը, ինչպես նաև անդադար վերջինիս ուղղվող նրա հայտարարություններն ու սպառնալիքները, շատ հավանական է, որ անհապաղ վճռորոշ արդյունքի հանգեցնեին: Մակայն նա գործում է մեկուսի: Նրա գերմանացի գործընկերը բացակայում է: Ինչ վերաբերում է Մերսինում Ֆրանսիայի հյուպատոսին, թեպետ նա բազմաթիվ համերկրացիների և ֆրանսիական բազում հաստատություններ պաշտպանելու հարկն ուներ, գեթ մեկ անգամ չհայտնվեց աղետի վայրերում:

Հազիվ ժամանած՝ պ[արոն] Դաութի-Ուայլին շտապում է կուսակալի մոտ, որն անկարգությունները կասեցնելու հարցում հավաստում է իր անզորությունը: Տեսնելով, որ զուր ժամանակ է վատնում, հյուպատոսը կազմակերպում է իրեն ուղեկցող զորախումբ, շրջում փողոցներում՝ փորձելով ավազակներին հարգալից վերաբերմունք ներշնչել: Առաքելությունների հաստատությունների առջև, ուր շտապում էր խելահեղ մի բազմություն, նա պահակախմբեր է կանգնեցնում: Մակայն այդ զինվորները յուրովի են ըմբռնում իրենց պարտականությունը: Նրանք կրակում են այնպես, ինչպես բաշիբոզուկները, ապա՝ անհետանում: Տյուպատոսը վերադառնում է, թողնում մեկ այլ պահակախումբ, որն անհետանում է իր հերթին: Առաքելությունների պաշտպանությունն ստանձնում են մի բուռ հայեր:

«Առաջին ամբողջ գիշերվա ընթացքում, - գրում է միսիոներուհի օրիորդ Է. Վերը, - մեր փրկության համար պարտական ենք մի քանի հայ երիտասարդների<sup>42</sup>: Նրանց կողմից դա իսկական քաջարի արարք էր, քանզի բնակչությունն ու զինվորներն անդադար շրջում էին մեր հաստատության շուրջը»:

Չորեքշաբթի երեկոյան կոտորածը փոքր-ինչ մեղմացել էր, սակայն կողոպտիչներն ու կրակը մոլեգնում էին մինչև առավոտ:

«Ավերելու այս մոլուցքը, - նշում է պ[արոն] Ու. Չեմբերսը, - գերազանցում է այն ամենն, ինչը կարող է հասու լինել երևակայությանը»:

\* Հեղինակն այստեղ սխալմամբ Անգլիայի հյուպատոս Դաութի-Ուայլին ներկայացրել է իբրև փոխիուպատոսի, թեև շարադրանքում պարբերաբար փաստում է հյուպատոսի՝ նրա կարգավիճակը: - Վ. Պ.:

<sup>42</sup> Ամերիկյան դպրոցում:

\*\*\*

Հաջորդ՝ հինգշաբթի օրը, ապրիլի 15-ին, իրադարձությունները կազմակերպվում և իրականացվում են ավելի կանոնավոր ձևով:

«Վաղ առավոտյան, - գրում է ամերիկացի միսիոներ Սթեֆեն Թրուբրիջը, - զորքերը գրավեցին մզկիթները. միմարեթների բարձունքից նրանք անընդմեջ կրակ տեղացին հայկական թաղամասերի վրա»:

Բաշիբոզուկները շարունակում են համախմբվել: Պ[արոն] Գիբոնսը, որը վերադարձել էր կոնակ, պ[արոն] Դաութի-Ուայլին հղած զեկու - ցագրում նշում է.

«Հազիվ էիք մեկնել, երբ այս հորդաներին զենքեր բաժանեցին: Այս գյուղացիներից ոչ մեկը համազգեստ չուներ, բայց բոլորը գոչուններով զենք էին պահանջում: Ես բողոքեցի կուսակալին զենքեր բաշխելու առիթով: Նա պատասխանեց, որ դրանք պահեստային զինվորներն էին, ըստ նրա խոսքերի՝ օսմանյան բանակի ծաղիկն ու փառքը, և ինքն անձամբ էր նրանց կանչել խառնակություններն ավելի արագ կասեցնելու համար: Ես կրկնեցի բողոքս, կուսակալի ուշադրությունը հրավիրելով այն բանի վրա, որ ինքն անձամբ չէր կարող վստահ լինել, որ այդ մարդիկ ընգրկված են պահեստայինների կազմում, որովհետև զենքերն ամբոխի էին բաժանվում առանց զանազանության: Կուսակալին լուսամուտի մոտ տանելով՝ նրան ցույց տվի, որ պաշտոնյաներն իրենց ձեռքին ոչ մի ցանկ չունեին, մարդիկ համախմբված չէին ջոկերում և չունեին հրամանատարներ: Բացի այդ, նրա ուշադրությունը հրավիրեցի նրանց՝ հրացանը բռնելու ձևի վրա, ինչից ակնհայտ էր, որ այսպես կոչված պահեստային զինվորները երբեք չեն բռնել... Նրանցից մեկը չիմանալով նույնիսկ ինչպես վարվել իրեն տրված փամփշտակալի հետ՝ փորձում էր այն խցկել իր գրպանը: Այս անձանց շարք կանգնելու և զորաշարժի անհաջող փորձ կատարելու հուսակտուր ջանքերը տեսնելուց հետո՝ հնարավոր էր այդ հիման վրա ծիծաղից թուլանալ, եթե հանգամանքներն այդքան ողբերգական չլինեին»:

Այս անգամ զորքի մասնակցությունը կոտորածին, կողոպուտին և հրդեհին վճռորոշ եղավ:

«Ես կրկին գնացի կոնակ, - գրում է անգլիացի հյուպատոսը, - ճանապարհին տեսա, թե ինչպես են զինվորները կոտորում»:

Ահա նմանօրինակ բազմաթիվ միջադեպերից մեկը, որի մասին պատմում է տ[իկի]ն Դաութի-Ուայլին.

«Մեզ մոտ գտնվող մի տուն<sup>43</sup>, որտեղ հավաքված էին հարյուր հիսուն հայեր՝ ծերունիներ, կանայք, երեխաներ, մատնվեց հրդեհի: Չինվորներն այն հրկիզեցին և քանի որ լուսամուտներն այրվում էին՝ ոչ մեկը չկարողացավ փախչել: Այդ բոլոր դժբախտները ողջակիզվեցին...»:

<sup>43</sup> Նշված տունը գտնվում էր Յենի-Մահալե թաղամասում:

Կանոնավոր գորքերը ճշգրտորեն գրոհում են հայկական թաղամասերը: Արդյունքում՝ Տոսպոմախլեսի և Շաբանիե թաղամասերն ամբողջությամբ ավերվում են:

Տ[իկի]ն Դաութի-Ուայլին շարունակում է.

«Հարևան թաղամասը հարձակման ենթարկվեց և ոչնչացվեց զինվորների կողմից...»:

Սա կործանարար մոլեռանդության այնպիսի պոթելույն էր, որ երկյուղում էին նույնիսկ եվրոպացիների կոտորածից: Բողոքական դպրոցում հրդեհը մարել ջանացող երկու ամերիկացի միսիոներների՝ Ռոժերին ու Մորերին, անմիջապես սպանեցին «հինգ թուրք,– իր զեկուցագրում նշում է բրիտանացի հյուպատոսը,– որոնք նախօրոք խոստացել էին չվնասել նրանց: Մինչ մենք տեղափոխում էինք այս երկուսի մարմինները, հարևան մզկիթից կրակ տեղացին»: Մեկ այլ մզկիթի բարձունքից կրակ է տեղում ճիզվիտ հայր Մաբատիեի վրա, որը կանգնած է ֆրանսիական դայրոցի տանիքին: Հետմիջօրեին անձամբ Անգլիայի հյուպատոսին թևից ծանր վիրավորում է<sup>44</sup> մի հայ, որը սակայն, «հավանաբար, իմ զինվորական համազգեստից սխալ եզրակացության էր հանգել,– գրում է մայր Դաութի-Ուայլին,– և ինձ թուրք սպայի հետ շփոթել կամ թերևս սարսափից ու հուսահատությունից ինքն իրեն կորցրած՝ այլևս չգիտեր, թե ինչ էր անում»:

«... Այս պաշտոնյաներից<sup>45</sup> շատերը,– նշում է պ[արոն] Գիբոնսը,– այնպիսի կարծիք հայտեցին, որ այն ինչ եղել էր՝ տեղին էր, որովհետև հյուպատոսը միջամտել էր իրեն չվերաբերվող գործերի»:

Առհասարակ երիտթուրք պաշտոնյաների մոտ նկատվում է ընդգրծված թշնամանք բրիտոնյաների հանդեպ: Այդուհանդերձ, բացառությամբ վերը նշված երկու ամերիկացու սպանության, օտարերկրացիների վրա հարձակվելուց ձեռնպահ են մնում: Ի դեպ, հրահանգը հստակ է. ներքին գործերի նախարարությունում պետական փոխքարտուղար Ադիլ բեյը՝ պատասխանելով կուսակալի ճեպագրին, հենց նոր հեռագրել է Կոստանդնուպոլիսից. «Ձեռք մի տվեք եվրոպացիներին», ինչը ենթադրել է տալիս, որ փոխարենը կարելի է շարունակել հայերի ոչնչացումը:

Կոտորածն, այսպիսով, շարունակվում է ամսի 15-ին՝ ամբողջ օրվա ընթացքում, զիշերը և մինչև հաջորդ ուրբաթ օրը՝ ամսի 16-ը: Դրանք ջարդի, սարսափի և տոփանքի տեսարաններ են, որոնք երևակայությունն ի գորտ չէ պատկերացնել: Քաղաքը մարդկային կերպարանքից այլևս զուրկ արարածների տիրապետության տակ է: Նրանք

<sup>44</sup> Գ[արոն] Դաութի-Ուայլիի վերը, որը ծանր է, նրան գամում է անկողնին: Նրան հյուրընկալում է երևելի մի հույն՝ պ[արոն] Տրիպանին, որի տունը վերածվել էր հիվանդանոցի: Տասն օր անց, երբ բռնկվում է Ադանայի երկրորդ կոտորածը, պ[արոն] Դաութի-Ուայլին կրկին հայտնվում է այդ վայրերում:

<sup>45</sup> Խոսքը երիտթուրք պաշտոնյաների մասին է:

վազում են, սպանում, խողխողում, սրատում և շնչասպառ վերսկսում՝ արյան ու քրտինքի մեջ թաթախված, ոռնալով ինչպես գիշատիչներ: Նրանք հարձակվում են գաղթականներով լի տների, եկեղեցիների, դպրոցների վրա: Հարյուրավոր զոհեր՝ մի էլք որոնելով, նետվում են դեպի փոքր և ծուռուծուռ փողոցները և հանկարծ կանգ առնում հրդեհի, մարդկային մարմիններից բաղկացած իսկական մարտապատնեշների վերածված դիերի և վիրավորների կույտերի<sup>46</sup> կամ մարդասպանների հրոսակախմբերի առջև: Որոշ վայրերում, կարճատև ժամկետում, հայերին սպանում են հարյուրից կամ երկու հարյուրից բաղկացած խմբերով: Սպանություններին միշտ հաջորդում է ավարատությունը: Փոխադրում են շարժական գույքը, որը բեռնում են սայլակների վրա և դրանցով տանում: Կարելի է նույնիսկ տեսնել ավարով բեռնված վազող թուրք կանանց և մինչև անգամ երեխաների, որոնք քայլում են հանգուցյալներին պատկանող իրերի ծանրության տակ կքված: Այնուհետև նավթով ողողում են տները և դրանք մեկ առ մեկ հրկիզում: Դրանք մեծ մասամբ փայտից են և այրվում են հարդի նման, բռնկվում՝ չզանազանվելով հրավառությունից: Սակայն հայերի մի քանի խմբեր որոշ փողոցներում դեռևս դիմադրում են, թեև ամեն կողմից շրջապատված են զինվորներով, խաժամուժով, բոցերով:

\*\*\*

Ադանայում, ինչպես նահանգի այլ վայրերում, ըստ հրահանգի՝ հարվածելու էին միայն հայերին: Բազմաթիվ դեպքերում այս հրահանգի կիրառումը հանգեցրել է ծայրահեղությունների և վերջնական արդյունքում եղել են մի քանի հարյուր հույն և ասորի զոհեր, որոնք սակայն կարող էին սպանված լինել թյուրիմացաբար կամ արհամարհական վերաբերմունքի հիման վրա: Շարժումն ուղղված է ատելի ազգության՝ հայերի դեմ, իսկ նրանց թվում կատաղաբար հարձակվում են հատկապես տղամարդկանց վրա: Ինչպես նախնադարյան ցեղերի և վայրենիների մոտ, իսլամի պատերազմների, նաև կատարյալ խաղաղության պայմաններում կազմակերպվող այս հավաքական կոտորածների ժամանակ արական սեռի ներկայացուցիչների ոչնչացումը յուրօրինակ

<sup>46</sup> «Հազարավոր դժբախտների հետապնդում էին հրացանի, կացնի, գավազանի հարվածներով, այնպես, որ որոշ փողոցներում կային իրար վրա կիտած մարմիններից բաղկացած պատնեշներ և արյան գետեր»,- նոյեմբերի 8-ի թվակիր՝ Ադանայից ուղարկված նամակում գրում է ժնկցի մայրդասեր պ[արոն] Լևոպոլ Ֆավրը, որն այցելել է աղևտի թատերաբեմ, այնտեղ հետաքննություն իրականացնելու և շվեյցարական հայասիրական կոմիտեի օգնությունները վերապրածներին բաժանելու համար» (Le Journal de Genève, 20 décembre 1909):

Մի ճիզվիտ, որը խառնակության ժամանակ քաջություն էր ունեցել դուրս գալու, ինձ ցույց տվեց մի ամպակ, որով բառիս բուն իմաստով արյուն էր հոսում, ինչպես ջուրը հորը անձրևից հետո»: Au pays des massacres, par Jean d'Annezay, Bloud & C<sup>ie</sup>, éditeurs, Paris [1910, p. 23].

ավանդույթ է: Ինչ վերաբերում է կանանց և երեխաներին, նրանց ստրկացնում են և դավանափոխ անում Մուսուլմանների հավատին: Խնայում են հատկապես երիտասարդ աղջիկներին, որոնց օգտագործում են հարեմները համարելու համար: Ադանայի կոտորածների պարագայում՝ այս հարցում ևս սովորույթը խախտվեց, և անհամար մարդկային էակներ՝ կանայք, կույսեր, մանկահասակ երեխաներ, չտեսնված դաժանությամբ սպանվեցին, բավական հաճախ՝ վերջին անարգանքներին ենթարկվելուց հետո:

Ընդհանուր առմամբ, այն, ինչն ապշեցնում է Կիլիկիայի իրադարձությունների պարագայում՝ դաժանությունն է, անհավատալի լկտիությունը, որոնց դիմեցին մի ամբողջ ժողովրդի ոչնչացման ընթացքում:

Թուրքական հետաքննական հանձնաժողովի զեկուցագրում կարդում ենք.

«Վատողի հոտից արբած՝ մահմեդականները վայրագություններ գործեցին, որոնք նույնիսկ մեզ՝ այլ զինվորականներին, ստիպեցին արտասվել»:

S[իկի]ն Դաութի-Ուայլին գրում է.

«Թուրքերը տղամարդկանց կիսասպան են անում, և մինչ դժբախտները լողում են արյան մեջ՝ նրանց կանանց բռնաբարում են նրանց աչքի առջև...»:

Կոտորելով չեն բավարարվում՝ խեղում են, տանջահար անում:

«Մենք լսում ենք, - գրում է քույր Մարի-Սոֆին, - սրտամաշիկ ճիչեր, դժբախտների աղաղակներ, որոնց որովայնը պատռում են և խոշտանգում»:

Շատ վկաներ պատմում են, որ հայերին գլխիվայր՝ սրունքներից միմյանց են կապել, և ինչպես սպանդանոցի անասունների, սպանել կացնի հարվածով: Մյուսներին պատկած վիճակում պարանով կապել են փայտե մահճակալին, որն այրել են, այլք կենդանի գամվել են հատակներին, դռներին, սեղաններին:

Տեղի են ունեցել մաս սահմնկեցուցիչ խաղեր, ահավոր կատակներ: Հայերին բռնում են, կապկպում և նրանց անշարժ ծնկների վրա մասնատում կամ սողոցում են նրանց երեխաներին: Ֆրանսիական առաքելության ներկայացուցիչ հայր Բենուան հաղորդում է մեկ այլ առանձնահատկություն.

«Դահիճները ձեռնածություն էին անում հենց նոր կտրված գլուխներով և նույնիսկ ծնողների աչքի առջև օդ էին նետում նրանց մանկահասակ երեխաներին, որոնց բռնում էին իրենց մեծ և սրածայր դանակներով»:

Խոշտանգումները հաջորդաբար դառնում են ավելի դաժան կամ կատարյալ: Որոշ զոհեր ենթարկվում են անբասիր վարպետությամբ կիրառվող մի շարք խոշտանգումների, այն հաշվարկով, որ նահատակի մարմնում կյանքը չմարի և տոնը երկարաձգվի: Նրանց դանդաղորեն

խեղանդամ են անում՝ հետևողականորեն քաշելով նրանց եղունգները, ջարդելով մատները, շիկացած երկաթներով դաջելով մարմինները, այնուհետև մորթազերծում են գանգը, հետո տորոքում և որպես կեր նետում շների առջև: Մյուսների պարագայում՝ աստիճանաբար փշուր են ոսկորները, նրանց խաչում են կամ այրում ինչպես ջահեր: Չոհերի շուրջը հավաքվում են խմբեր, որոնք զվարճանում են այդ տեսարաններով և ծափահարում խոշտանգիչների յուրաքանչյուր արարքին:

Երբեմն դրանք վերածվում են դժոխային խորշանքների, սաղիստական խրախճանքների: Կտրում են հայերից մեկի մարմնի վերջույթները, այնուհետև նրան ստիպում ծամել սեփական մարմնի կտորները: Խեղդում են մայրերին՝ հարազատ երեխաների միսը նրանց բերանը խցկելով: Այլ կանանց պարագայում՝ կտրում են որովայնը և լայնորեն բացված վերքի մեջ խցկում քառատված երեխային, որին քիչ առաջ նրանք տանում էին իրենց ձեռքին<sup>47</sup>:

<sup>47</sup> 1895 թ. հայերը դատապարտվեցին նմանօրինակ տանջանքների: Այս կերպ Մալաթիայում և այլուր՝ հանրային հրապարակում մասնատեցին հայի մարմինը՝ անդամահատելով դեռևս կենդանի մահապարտին: Սակայն Ադանայի խոշտանգիչները գերազանցեցին նախորդ կոտորածների խոշտանգիչներին: Ադանայում «Մատենի» հատուկ թղթակից պ[արոն] Անտոնիո Սկարֆոզիլոն այդ թեթոմ (1909 թ. հունիսի 5-ի և 7-ի համարներում) հրատարակել է այդտեղ տեղի ունեցած սարսափների մասին երկու մանրամասն վկայություններ: Ահա մի հատված խնդրո առարկա վկայությունից:

«Տղամարդկանցից, ամուսիններից հետո անցնում էին կանանց: Նրանց մերկացնում էին, կտրում կրծքերի ծայրերը, երեխաներին ստիպում դրանք ծամել: Երբեմն խոստանում էին խնայել նրանց կյանքը, միայն թե համբուրեին հրացանի փողը, բայց այդ ժամանակ նրանք զենքը լիցքաթափում էին նրանց բերանում: Այլ դեպքերում կանանց միայն բռնաբարում էին, այնուհետև գավազանի հարվածներով՝ մերկ քում փողոցներով:

Ազարակներից մեկում նրանք ամակնկալի էին բերել Բուրդոկյանների ամբողջ ընտանիքին՝ ամուսնուն, կնոջը, երկու տղա երեխաներին և վեցամյա աղջնակին: Քսանուք տարեկան կինը նետվել էր նրանց ոտքերը՝ աղբսելով գթություն: Նրանք ժպտացել էին և պատասխանել. «Մենք գթասիրտ կլինենք, մենք գթասիրտ կլինենք, դու կտեսնես»:

Այնուհետև ամուսնուն կապելով մահակալի ոտքից, բռնել էին կնոջը, ամբողջությամբ մերկացրել և երեք հաստ գամով գամել պատին՝ մեկական գամ յուրաքանչյուր ձեռքին, մեկը՝ ոտքերին: Յաթադանի ծայրով նրա որովայնին դաջել էին քրիստոնեության խորհրդանիշներից մեկը, հետո, մինչ արասիկից խեղճկորոյս՝ նա լռում էր և լայն բացված աչքերով նայում, նրա առջև՝ սենյակի կենտրոն են բերել ամուսնուն, մերկացրել, վրան նավթ լցրել ու այրել, ինչպես ջահ: Մարմինը ճարճալույսով արագ այրվում էր, մազերը բոցավառվում էին. մարմինն այրվեց ու մասնատվեց՝ մինչ նա մահացավ: Մարդկային խարոյկի շուրջը նրանք պարում էին, քրիստոնեական շարականներ երգում: Երեխաները մի անկյունում լալիս էին, կինը՝ ձեռքերը տարածած, ամբողջ երիտասարդ մարմինն ի ցույց դրած, արյունոտ որովայնով, նայում էր տապալանակի վերածված պատի բարձունքից: Այնուհետև կտրեցին նրա կրծքերը և երեխաներին ստիպեցին ծծել այդ արյունոտ միսը: Քաշեցին նրա եղունգները, կտրեցին մատները, քիթը, այրեցին մազերը: Վերջապես, նրա հոգևորը ապրող աչքերի առջև սողոցեցին արու գավակների գլուխները, բռնաբարեցին աղջնակին, հետո հանեցին նրանց լյարդն ու սիրտը, որոնք դրեցին մոր բերանը՝ ճպով:

«Մուրք կույս Մարիամ, փրկիր նրանց: Եկ, իջիր: Չես տեսնում, որ նրանք մահանում են: Գիտես՝ սա քո որդիների սիրտն է, որ դու ուտում ես, քո քանկազին որդիների, որոնց դու այդքան սիրում էիր, այդքան գեղեցիկ ու խարտյաշ քո որդիների...»:

Նրան սպանեցին կացնի հարվածով:

Թուրքը մեծ որակներ ունի: Նա քաջարի է, հավատարիմ, մարդկային, մեղմ, բացառությամբ (դա ասվել է հարյուր անգամ) գլխատելու պարագայի: Խիստ պատրաստակամ ենթարկվելու մոլեռանդությանը՝ նա ընդարմացած վիճակից իսկույն արթնանում է, հենց որ ընկնում է հանցագործ գրգիռների ազդեցության տակ, որոնք նրան սովորաբար վերևից են տրվում և այդ ժամանակ ի հայտ են գալիս նրա ասիական էության բոլոր բնազդները: Այս էջերում նշված բոլոր դաժանությունները միայն թուրքերի արածները չէին, այլ նաև չերքեզների ու քրդերի. վերջիններս իրենց էությամբ դաժան ցեղեր են: Հավելենք, որ գտնվեցին օսմանցիներ, որոնք մարդասիրություն ցուցաբերեցին՝ մահից փրկելով հայերին: Ադանայում ոմն Օսման էֆենդի նրանց առջև լայնորեն բացեց իր տան դուռը: Մեկ ուրիշը՝ Հալիլ էֆենդին, իր որդիների օգնությամբ հյուրընկալեց այդ դժբախտներից հիսունին, որոնց ապաստանեց բազում օրեր: Այնպիսի պաշտոնյաներ, ինչպիսիք են Հուսեյն Դայիմ բեյն ու Ալի Ռահմի էֆենդին նմանապես կատարեցին իրենց պարտականությունը: Դժբախտաբար կարող ենք նշել նմանօրինակ ասկավաթիվ դեպքեր:

\*\*\*

Ապրիլի 16-ին՝ ուրբաթ օրը, [ախրոն] Դաութի-Ուայլին մի հաղորդագիր է ուղարկում Ջևադ բեյին՝ նրանից պահանջելով դադարեցնել կոտորածը: Նա ավելացնում է, որ կուսակալն ու զինվորական հրամանատար Ռեմզի փաշան դրա համար կարող են իրենց գլխով վճարել: Արդյոք այս սպառնալիքի, հոգնածության թե հազեցվածության հետևանքով է կեսօրից հետո կոտորածը դադարեցվում: Այդ ընթացքում Ջևադն իր մոտ հրավիրեց ուլեմաներին՝ և եպիսկոպոսներին, թուրք և հայ երևելիների: Ջինվորների ուղեկցությամբ նրանք հավաքվեցին կոնակում: Ադանայի դաշտավայր կատարած շրջագայությունից այդ պահին վերադարձած ֆրանսիացի ինժեներ Մ. Գ. -ն ներկա է եղել այդ հավաքին, որին մասնակցել են նաև այլ եվրոպացիներ, մասնավորապես երկու

Եվ այսպես շարունակ: Մեկ այլ ազարակում անակնկալի բերին մի հոլի կնոջ և նրա ամուսնու: Բացեցին դժբախտի որովայնը, հանեցին սաղմը և պորտալարի մի ծայրը կապելով նահատակի աջ ձեռքին՝ ստիպեցին փողոցներով քարշ տալ փոքրիկ դին... Մի կին մորթագերծ էր արվել ողջ ողջ, իսկ այդ գործողությունից առաջ կտրել էին ճակատի մաշկը և այն իջեցրել աչքերի վրա...

Թաքստոցից դուրս էին գալիս երկշտ մարդիկ, որոնք կարծում էին, թե կարող էին փախչել դաշտի միջով: Թուրքերը նրանց թողնում էին հանգիստ մոտենալ, նույնիսկ քաջալերում գթասիրտ խոսքերով, իսկ երբ տարածված ձեռքերով և ժպտացող շուրթերով, գրկեթ վստահ, որ իրենց կյանքը փրկված է, նրանք շատ էին մոտենում՝ նրանց սպանում էին դիմահար կրակով:

Այսպես, մի կին միանգամայն վստահ եկել հասել էր նրանց, նրան բռնել էին, գավազանի հարվածով կոտրել նրա աջակողմյան կողերը, այնուհետև երեսուն կամ քառասուն անգամ տիրապետելուց հետո՝ մինչև գլուխն ընկղմել ցեխի մեջ: Նա հառաչանքներով այդտեղ էր մնացել իր ջարդված աչ կողով: Ցեխի մեջ ընկղմված, ժամանակ առ ժամանակ, նրա տանջահար գլուխը հոգնածությամբ բարձրանում էր, զեթ մեկ պահ մնում գոյացած սև ալիքի վրա, նայում՝ փչելով արյուն և ջուր, այնուհետև ուժասպառ ընկնում»:

Մահմեդական աստվածաբաններ: - Վ. Գ.:

կողմի միջև միջնորդի դեր ստանձնած միսիոներներ, որոնք հաշտություն են քարոզել:

Մ. Գ. -ն նշում է իր նոթատետրում.

«Ահա հայ լուսավորչական եպիսկոպոսի փոխանորդը և մեկ այլ հայ քահանա: Թե՛ մեկը և թե՛ մյուսը մեղմ, շատ մեղմ և հնազանդ տեսք ունեն, հաջորդը՝ հայ կաթոլիկ եպիսկոպոս Ն[որին սրբազնություն]ն Թերզյանն է, որին զսպելու համար գործադրվեցին բոլոր հնարավոր ջանքերը և խանգարեցին թուրք փաշաների և պաշտոնյաների դեմքին աղաղակել նրանց գործած զազրելի հանցագործությունների մասին... Սկսվում է քննարկումը: Ցանկացած պահի հրացանազարկեր են լսվում: Բոլորը ցանկանում են դրանք կասեցնել, սակայն համաձայնության չեն հանգում: Թուրքական իշխանությունները պահանջում են, որ հայերը վերադարձնեն զենքերը: Ն[որին սրբազնություն]ն Թերզյանը համաձայնվում է, բայց այն պայմանով, որ զինաթափեն նաև մահմեդականներին: Այդ պահանջն ուլեմաներին աննախադեպ է թվում...»:

Մյուս կողմից, կուսակալը հայկական համայնքի առաջնորդներից պահանջում է ստորագրել մի փաստաթուղթ, որով նրանք տեղի ունեցող իրադարձությունների հեղինակներ են համարում իրենց: Դա, բնականաբար, համիդյան գործելամիջոց է: Վրդովված հայերը մերժում են այդ առաջարկը: Վերջապես, բաժանվում են՝ խոստանալով, որ յուրաքանչյուրը կգործի իր հնարավորությունների սահմանում:

Մ. Գ. -ն կրկին նշում է.

«Կրակոցները դառնում են ասկավաթիվ: Այդուհանդերձ, երեկոյան, հեռավոր գյուղերից գալիս են ուշացած կողոպտիչները և պահանջում ավարի իրենց բաժինը»:

Տեղի են ունենում սպանությունների ևս մի քանի առանձին դեպքեր, հրկիզվում են ևս մի քանի տներ և տիրում է անդորր: Բայց քաղաքը վերածվել է դիերի հսկայական կույտի: Իշխանությունները հավաքել են տալիս մահացածներին: Նրանց նետում են Մարոսը կամ այրում առեղի կույտերով: Բայց դրանք բազմաթիվ են: Հնարավոր չէ բոլորի հետքը վերացնել: Եվս երեք կամ չորս օր շատ դիեր սփռված կմնան փողոցներում, որտեղ կղառնան շների ավար:

Շաբաթ օրը՝ ամսի 17-ին, Մ. Գ. -ն գրում է.

«Մենք պահակախմբի հսկողությամբ անցանք քաղաքով: Շուկան ամբողջությամբ թալանված և ավերված է: Մնացել են միայն աղյուսե պատերը... Ի մեծ զարմանս՝ մի կրպակ դեռևս անվթար է. այն պատկանում է մահմեդականներից մեկին... Ինքնավստահությամբ համակված՝ նախորդ օրվա մարդասպանները զբոսնում են փողոցներում, հավաքվում սրճարաններում: Այնպես է թվում, թե իբրև լավ թուրքեր՝

նրանք համակվել են իրենց բնորոշ անտարբերությամբ... Վերադառնալով կոնակ մենք հանդիպեցինք դիերով լի երկանիվ սայլակների, որոնց՝ գործն ավելի արագ ավարտին հասցնելու համար, պատրաստվում են նետել գետը... Այստեղ, անտեղ՝ ճանճերի ու շների ավարը դարձած այլ դիեր կան: Առվակները լի են արյունով...»:

Հատված հայր Բենուայի նամակից, որը ևս վտանգելով իր կյանքն անցել է քաղաքով.


«Գնալով մի դրոշի ետևից՝ ես մուտք գործեցի գլխավոր թաղամասեր: Ինչպիսի մեռյալ լռություն է տիրում: Խանութները սարսափելիորեն թալանված են, տներն առանց դռների են: Հրդեհները շարունակվում են փողոցներում, կիսով չափ քայքայված դիերը՝ շարքերով հանգչում են արյան ջրափոսերում, որոնք երբեմն այնքան շատ են, որ առանց դրանք տրորելու անցնելն իսկ դժվար է: Քսան բուպե ես քայլում էի մարդկային արյան միջով»:

Պ[արոն] Չեմբերսը տեղեկացնում է.

«Ես չգիտեմ, թե ինչ է կատարվում գյուղում, բայց այն, ինչ տեղի ունեցավ քաղաքում՝ ավելի սարսափելի էր և ավելի դժոխային, քան 1895 թ. Էրզրումի կոտորածը»:

Ինչպես կտեսնենք հետագայում, գյուղում, որտեղ մարդասպանության այս մոլուցքն արագորեն տարածվեց, առաջին իսկ օրվանից հայ բնակչությունը սրի քաշվեց, բազմաթիվ գյուղեր միաժամանակ հրկիզվեցին: Ժամ առ ժամ լրաբերներն Ադանա են գալիս՝ զինվորական իշխանություններին հայտնելով գյուղերի ավերման մասին. «Օսմանիեն կործանված է, Համիդիեն ոչնչացված»<sup>48</sup> և այսպես շարունակ:

Միջուկային զենքի փորձարկումներ, Երբեք, հուլիսի 1945



ԱՂԱՆԱՅԻ  
ԵՐԿՐՈՐԳ ԿՈՏՈՐԱԾԸ

<sup>48</sup> Պ[արոն] Սթեփեն Թրոուրթիջի զեկուցագիրը:

Սահանգի գլխավոր քաղաքն այդուհանդերձ, թվում է, թե այսուհետ պաշտպանված է մահմեդականների վայրագ վերահարձակումից: Երեք օր ու գիշեր տևած կոտորածից հետո կարելի է կարծել, որ հանցագործությունից հազեցած և ավարով բավարարված թուրքերը կխնայեին կոտորված և ջախջախված, թշվառությունից ու սովից ուժասպառ բնակչությանը: Հայկական քաղաքի երկու երրորդը հիմնովին ավերվել է, շուկայի ամենամեծ մասը՝ թալանվել: Այսպիսով, այլևս շատ բան չի մնում այրելու կամ գողանալու համար: Վերապրածներն, ի դեպ, իշխանությունների հովանու տակ են, երաշխավորվում է նրանց լիակատար անվտանգությունը: Մինչ սպասում էին սահմանադրական զորքերի ժամանանը, որոնց Մահմուդ Շեքեթ փաշան առանձնացրել էր դեպի Կոստանդնուպոլիս շարժվող իր բանակից և կարգ ու կանոնը վերահաստատելու համար ուղարկել Ադանա, Դամասկոսից և Բեյրութից նոր զորքեր են բերվում: Վերջապես, ապրիլի 21-ին եվրոպական ռազմականավերը խարխիս են ձգում Մերսինի նավահանգստում: Այդ նավերի ներկայությունը մոլեռանդներին խորհրդածելու տեղիք կտա, այնպես չէ: Այս անգամ Եվրոպան ձեռքերը ծալած չի նայի, թե ինչպես են կոտորում մի ժողովրդի...

Այդուհանդերձ, թուրքերը գոհ չեն: Նրանք մերթ ժաղրում են կարգուկանոնի պահպանման նպատակ հետապնդող միջազգային այս գործողությունը, մերթ դրանից գրգռվում: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամ Իսհան Ֆիքրիի խմբագրությամբ Ադանայում լույս տեսնող «Իթիդալ» երիտթուրքական լրագիրը մեղադրում է հայերին՝ ներքին բնույթի հարցում օտարերկրացիների միջամտությունը հրահրելու համար... Լուրեր են տարածվում, որ աղետի չափերի մասին պատկերացում կազմելու համար Մերսինից անձամբ եվրոպացի պաշտոնյաներ են գալու: Թուրքական մի պատվիրակություն գնում է բրիտանական հյուպատոսի մոտ. նրան խնդրում են ձախողել այդ այցելությունը, քանի որ այն անմիջապես «խիստ տհաճ տպավորություն» կբողներ: Այնուամենայնիվ, եկան անգլիացի պաշտոնյաները, այնուհետև ֆրանսիացիները, և այս անգամ անձամբ Ֆրանսիայի հյու-

պատոսն իրեն անհանգստություն պատճառեց՝ ուղեկցելով նրանց: Ապրիլի 24-ին՝ շաբաթ օրը, հետաքննության ավարտից հետո նրանք վերադառնում են նավ:

Ուշադրություն դարձնենք այս ամսաթվին՝ շաբաթ օր, ամսի 24-ը. սա երիտթուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավման օրն է: Դա նաև այն օրն է, երբ ռումելիական բանակի սահմանադրական գումարտակները եկան Ադանա, իսկ դրա հաջորդ՝ կիրակի օրը, ամսի 25-ին, բռնկվեց երկրորդ կոտորածը, որը շատ ավելի սարսափազդու էր, քան առաջինը:

Հինգշաբթի օրվանից՝ ամսի 22-ից, հայերը նախագուշացված էին: Այդ օրն «Իթիդալը» թունոտ մի հոդվածում, որտեղ երիտթուրք Իսմայիլ Սեֆան ներկայացնում էր թուրքական կարծիքը, գրում էր.

«Կատարված գործը դեռևս բավարար չէ: Մենք միայն կարճատև դադարի ենք դիմել: Բայց մենք լավ կտեսնենք, թե այս ամենի վերջն ինչ է լինելու...»:

Ամեն ինչ պարզ էր և հստակ:

Ի դեպ, իշխանությունները բանտեր են նետում բազմաթիվ մարտունակ՝ անտարակույս հայ, տղամարդկանց: Նրանք մանրակրկիտ խուզարկում են կանգուն մնացած տները և բռնագրավում բոլոր զենքերը: Հրամանը կտրուկ է՝ բոլոր հայերը պետք է հանձնեն ատրճանակները: Այսպիսին է անդորրի պահպանման պայմանը՝ ինչպես այդ մասին հայտարարում են քաղաքացիական և զինվորական պաշտոնյաները: Աղետից կատարելապես հուսալքված, ընկճված հայերը ենթարկվում են, դիմադրության ցանկացած թույլ փորձն իսկ, ի դեպ, զուր կլիներ:

Ինքնին հասկանալի է, որ մահմեդականներին զինաթափելու մտադրություն չեն ունեցել: Ճիշտ հակառակը, նախապատրաստել են հրացաններ, մահակներ, զինամթերք և մինչև իսկ պոմպեր ու նավթ, որոնք կնպաստեին հրդեհների տարածմանը: Դիմեցին նաև ջարդարարների նոր օգնական ուժերի, հավաքագրեցին հրշեջների, կարճ ասած՝ ամեն ինչ նախատեսեցին և նախապատրաստեցին, որպեսզի այս անգամ գործողությանը ձեռնամուխ լինեին արագ, արմատական և անվրեպ:

Քաղաքի՝ իրենց օջախներից զրկված, հայ բնակչության հոժմեծամասնությունը հավաքվում է եկեղեցիներում, դպրոցներում և առաքելություններում: Ամսի 17-ից հետո այդտեղ ապաստանեցին նաև շրջակայքի գյուղերից՝ հրոսակախմբերի վայրագություններից մազապուրծ եղած մարդիկ, որոնք գրեթե բոլորը կանայք և երեխաներ են, քանի որ տղամարդիկ ոչնչացվել էին: Ոչ մի հայ չի կարող լքել քաղաքը: Այսպիսով, այս բազմությունը, կենտրոնանալով մի քանի վայրերում, դյուրին կերպով կշրջափակվի և կայրվի, ինչպես խառնամարդիս:

\*\*\*

Կիրակի օրը՝ ամսի 25-ին, տեղ են հասնում երիտթուրքական զորքերը: Առավոտյան և կեսօրին եկեղեցիներում ժամերգություններ են մատուցվում: Վերստին հուսադրվում են, բայց հազիվ էին սահմանադրական գումարտակները տեղավորվել իրենց՝ քաղաքի դարպասների մոտ գտնվող Քիշլա-Մեյդանիի զորանոցներում, երբ ճամբարի շուրջ կրակոցներ են հնչում: Դրանք զինվորների և Ջևադի մարդկանց հրացանազարկերն են, սակայն ռումելիացիներին, որոնք արդեն իսկ դժգոհ էին, որ պետք է քրիստոնյաներին պաշտպանեին իրենց իսկ հավատակիցներից, անմիջապես համոզում են, որ հայերը եկել են իրենց վրա հարձակվելու, որ այդ գյավուրներն ապստամբել են ու կոտորել մահմեդականներին և նախապատրաստվում են նոր հարձակման: Այս մեղադրանքներն ապշեցուցիչ արդյունք են ունենում, և երբ փոքր-ինչ ավելի ուշ՝ կեսօրից հետո, ժամը հինգի սահմանում, չարանենգ հրոսակախմբերը հարձակման են նետվում փախստականներին ապաստան հատկացրած շինությունների վրա, կարելի էր տեսնել, թե ինչպես են ազատարար բանակի զինվորները քայլում մարդասպանների և հրձիգների առջևից: Ահա Արգարյան հայկական մեծ հաստատությունը, որը բոլեջ և գիշերօթիկ ուսումնական դպրոց է, որտեղ իրար գլխի են հավաքվել շուրջ 2000 մարդկային էակներ, որոնցից շատերը վերջին շաբաթվա կոտորածից վերապրած հիվանդները և վիրավորներն են: Ջորքերը շրջապատում են հաստատությունը, հրշեջներն այն ողողում են նավթով, և թե առաջինները և թե երկրորդներն այն հրկիզում են այրվող մեծ ջահերի կամ բոցավառվող բամբակե տրցակների միջոցով: Շուտով դպրոցը վերածվում է հսկայական խարույկի, որտեղից զոհերի սարսափելի աղաղակների հետ բարձրանում է այրվող մարմինների կծու, հեղձուցիչ հոտը:

Ականատեսներից մեկն ինձ ասում էր. «Մի լայն բացվածքի միջով՝ արդեն ածխացած դիերի կույտի մեջ, ես տեսա էակների, որոնք ռոնալով սողում էին, թփրտում, գալարվում՝ ինչպես անիծյալներ: Այնուհետև ես այլևս ոչինչ չտեսա: Սարսափելի տեսիլքն անհետացավ ծխի, բոցերի և կրակների հորձանուտում: Գտնվելով այս խարույկի շուրջը, սահմանադրական զինվորները մի մեծ շրջան կազմելով՝ գնդակահարում էին բոլոր նրանց, ովքեր փորձում էին փախչել»:

Այս վերջին մանրամասնը հաստատում են բոլոր վկայությունները: Արգարյան դպրոցից հետո վրա է հասնում այլ դպրոցների, եկեղեցիների, հայկական եպիսկոպոսության, հունական եկեղեցու, Սուրբ-Ժոզեֆի քույրերի կողմից պահպանվող գիշերօթիկ ուսումնական դպրոցի, Սուրբ-Պողոս ֆրանսիական քոլեջի հերթը: Բոլոր այս շինությունները, որոնք նմանապես ապաստանում են հայերին, անընդհատ լցվում են հրոսակախմբերի կողմից փողոցների երկայնքով հալածվող այլ փախստականներով:

«Այս անգամ, - գրում է քույր Մարի-Սոֆին, - նրանք չեն գոհանում դռներից մեզ մոտ ներս մտնելով. նրանք բարձրանում են հարթ տանիքների վրա, մազլցում սյուներով մինչև պատշգամբները: Խոսքը վերաբերում է կախված մարդկանց խմբերին: Մեր աչքերի առջև գնդակները խոցում էին այս խեղճ մարդկանց: Սարսափն ավելի մեծ էր, քան առաջին անգամ»:

Հապճեպ շրջանցենք այս իրադարձությունները, որոնց ընթացքում վերսկսվում են արդեն հիշատակված միևնույն ոճիրները, միևնույն դաժանությունները: Բոլոր այս շինությունները մեկը մյուսի ետևից հրկիզվում և ավերվում են: Վերջապես, ինչպես չոր փայտի անտառ՝ այրվում է հայկական քաղաքի վերջին մնացորդը, մի մեծ թաղամաս: Ամսի 25-ի գիշերը և հաջորդ օրը՝ ամսի 26-ին, Ադանայի վրայով մի իսկական կրակե փոթորիկ անցավ: 24 ժամ շարունակ ավարառուներն անդադար մոլեգնում էին: Սահմանադրական զինվորները դրան ակտիվ մասնակցություն են ունեցել, իսկ մի քանի օր անց տեսել են, թե ինչպես են նրանք իրենց սպաների հրամանատարությամբ՝ ավարով բեռնված Մերսինի փողոցներով անցնում և կրկին նավ բարձրանում:

\*\*\*

Երկուշաբթի առավոտյան մայրը Դաութի-Ուայլին, թեև դեռևս տանջվում էր վերքից (նրա ձեռքը կտրված էր), գնում է կուսակալի մոտ, խոսում խրոխտ ձայնով և հաստատակամորեն: Քիչ անց՝ կեսօրին մոտ, շեփորներն ազդարարում են կոտորածի ավարտը: Բայց մի քանի վայրերում զինվորներն ու բաշիբոզուկներն այդչափ գեղեցիկ ճանապարհի կեսին կանգ չեն առնում: Ֆրանսիական Սուրբ-Պողոս քոլեջը, որտեղ կան ավելի քան 6000 փախստական, պարուրվում է բոցերով:

«Մենք բարձրանում ենք հարթ տանիքների վրա, - գրում է հայր Բենուան, - որպեսզի կրակի վրա ջուր լցնենք, բայց մինարեթների բարձունքից թուրքերը գնդակոծում են փրկարարներին»:

Եղբայրները սարսափում են, զլուխները կորցնում, չգիտեն, թե ինչպես փրկեն իրենց հովանավորյալներին: Բայց ահա մի քանի զինվորների հետ հայտնվում է անգլիացի հյուպատոսը: Նա հասնում է այն բանին, որ բոլոր այս դժբախտներին ուղեկցեն կոնակ, քանզի կուսակալը երաշխավորել է նրանցից յուրաքանչյուրի կյանքի անվտանգությունը: Չնայած հրդեհն օղակել է քոլեջը, հայերն այնքան են ահաբեկված, որ համաձայնվում են այնտեղից դուրս գալ միայն այն պայմանով, որ հյուպատոսն իրենց վերցնի իր հովանու տակ, իսկ հոգևոր եղբայրներն ու քույրերն ուղեկցեն իրենց: Ահա և վիրավորներով, դիերով ու փլատակներով լի փողոցներով անցնում է կարեկցանքի արժանի անձայրածիր մի թա -

փոր: Քիչ անց կրակը հասնում է եղբայրների տանը, մատուռին, գրադարանին. ամեն ինչ ոչնչացվում է: Մինչ ավերումը՝ գրադարանը թալանվել էր, բոլոր գրքերը կտոր-կտոր էին արվել: Կոնակում բռնությանը խուզարկում են հայերին, հատկապես կանանց՝ «գեներեր առգրավելու պատրվակով»,- գրում է անգլիացի միսիոներուհի օրիորդ Ուալիսը,- սակայն իրականում՝ գրկելու համար նրանց նվազագույն իսկ գումարից, որը նրանք կարող էին ունենալ»: Այնուհետև նրանց հավաքում են սահմանադրության ընդունման ժամանակ կառուցված հաղթականարի նման ինչ-որ մի բանի շուրջ և ստիպում երկարատև ծախահարություններով ողջունել «շատ սիրված փառիշահ» Աբդուլ Համիդին: Դրանից հետո նրանց ուղարկում էին գիշերելու բաց երկնքի տակ:

«Ուշաթափ, սովյալ, սարսափից խելակորույս մարդկանց այս թափորի առաջ շարժմանը,- գրում է օրիորդ Ուալիսը,- հաճախ խոչընդոտում էին հրդեհները կամ դիերի կույտերը: Ուղղության ընդոստ փոփոխությունների հետևանքով շատերը վայր էին ընկնում, իսկ ետևից եկողները նրանց ոտնահարում էին, տրորում»:

Վերջապես թշվառների այս հոտը ներխուժեց պ[արոն] Տրիպանիի հունական մեծ գործարան, որտեղ նրանց թիվը հասնում էր շուրջ 14000-ի: Այլք՝ մոտ 5000 հոգի, ապաստանել են գերմանական մի ֆաբրիկայում:

«Նրանք այնտեղ այնպես էին միմյանց սեղմված,- գրում է արդեն հղված ժնկի մարդասեր պ[արոն] Լեոպոլդ Ֆավրը,- որ հնարավոր չէր նրանց հաց բաժանելու համար այնտեղ թափանցել: Քսանչորս ժամ անց վարակն այնպիսի չափերի հասավ, որ թուրք զինվորները հրաժարվում էին նրանց մոտենալ: Քանի որ չգիտեին, թե ինչպես է կարելի դրդել այդ սովար զանգվածին տեղից շարժել, անգլիական ծովային մի սպա միտք հղացավ, որ հարկ է հայտարարել, թե այնտեղ, որտեղ ցանկանում էին ճամբար հիմնել՝ հաց են բաժանելու և միայն դրանից հետո այդ դժբախտներն այնտեղ գնացին»:

Ամսի 26-ին, կեսօրից հետո, գբաղվեցին մահացածներին հավաքելով: Նրանց բեռնում էին սայլակները, որոնք պետք է բեռնաթափվեին Սարոսում: Այդ քարավաններն ուղեկցող թուրք լակոտները զվարճանում էին՝ ծակծկելով դիերը, փորելով դրանց աչքերը, սրածայր ցուպիկներով ծակելով այտերը: Երեքշաբթի օրը, ամսի 27-ին, ծայրահեղությունները մեղմանում են: Ուշ երեկոյան, ինչ-որ երկարատև մի հրաձգություն վերջին տագնապի առիթ դարձավ: Բայց դա ընդամենը համազարկ էր ի պատիվ նոր սուլթան Մեհմեդի V-ի: Երեկոյան Մերսինի առջև խարխիս ձգած ռազմանավերը շքեղորեն լուսավորվել էին այդ փառապանծ գահակալությունը տոնելու համար: Ջրի մակերեսին դանդաղորեն սահում էին հոսանքով բերված ուռած և այլանդակված դիեր, գլուխներ, մարմիններ, մարդկային տձև բեկորներ, որոնց գետը քշում էր մինչև ծով: Երբեք Ալեքսանդրեոսի

ծոցի ջրերում շնածկների այսպիսի կուտակում չէր նկատվել: Բազում օրեր պաշտոնյաները դարձան այդ տեսարանի ականատեսը, որին առնչվող փաստագրական լուսանկարներ հավաքեցին<sup>49</sup>:

Երեքշաբթի՝ ամսի 27-ին, ծայրահեղությունները մեղմացան, սակայն ամենևին չդադարեցին: Այդ օրը հրկիզվեց բողոքական մեծ եկեղեցին: Սպանությունների առանձին դեպքերը և հատկապես հրդեհները շարունակվեցին մի ամբողջ շաբաթ: Մինչև մայիսի առաջին օրերը կրակը և կողոպուտը դեռևս շարունակվում էին: Մայիսի 4-ին զինվորները կողոպտեցին գերմանական մի մեծ գործարան:

Այս կերպ, Ադանայի հայկական բոլոր թաղամասերը, որոնք ներկայացնում էին մի ամբողջ քաղաք, հիմնովին ավերվեցին: Աղետից որոշ ժամանակ անց այդ ընդարձակ, մոխրածածկ տարածքով անցած մի ճանապարհորդ գրել է.

«Անգլիացի մի ինժեներ ավերակների մակերեսը սահմանում է երեք ու կես կիլոմետրի շրջանակում: Անձամբ ես կարողացա այնտեղ թափառել չորս ժամ՝ առանց կրկին միևնույն վայրերով անցնելու: Ավերածությունը կատարյալ է: Անվնաս է միայն մահմեդականների՝ ողորմելի և ոջլոտ, անկենդան քաղաքը, որն իր չարությամբ և ատելությամբ շրջապատում էր իր իսկ ավերած թաղամասերը»<sup>50</sup>:


Իսկ նոյեմբեր ամսին Ադանա այցելած պ[արոն] Լեոպոլդ Ֆավրն իր հերթին նշում է.

«Պ[արոն] Չեմբերսի հետ ես բարձրացա նրա տան հարթ տանիքը, և այնտեղից նա ինձ ներկայացրեց քաղաքի տեղագրությունը, հարձակումների ընթացքը, հրդեհների ծավալման ուղղությունները: Քիչ հեռվում մեր առջև տարածվում է մի ամբողջ քաղաք՝ սևացած պատերի արտաքին կողմերով, իսկ մյուս մասի վրա գերիշխում են եկեղեցիների մեծ ավերակները: Սա ավերակների քառս է...»:

<sup>49</sup> Stéu մասնավորապես 1909 թ. մայիսի 12-ի «Իլյուստրասիոնը»:

<sup>50</sup> Les Vêpres ciliciennes, dans « La Revue », 1<sup>er</sup> novembre 1909, par M[onsieur] G. Vayssié.

Կ Ի Լ Կ Ի Ա ցեղատաճություն. վկայություններ, նրբեր, հուշագրություն



IV ԿՈՏՈՐԱԾՆ  
ԱՊՐԱՆԱՅԻ ԿԻԼԱՅԵԹՈՒՄ

Նահանգում կոտորածը պակաս դաժան չէր, քան գլխավոր քաղաքների, ավանների, գյուղերի ավերման մասին վկայում են ավերակները, որոնք ըստ պ[արոն] Ուիլյամ Չեմբերսի արտահայտության՝ «կարծես մխրճվել են մեծ վառարանի մեջ, այրվել յոթ անգամ»:

Սկսած ապրիլի 14-ից, հրահանգը տրվում էր Ադանայից: Առկա է այդ օրով թվագրված մի տխրահոշակ ճեպագիր շրջաբերական, որով կուսակալը դիմել է իր ենթակայության ներքո գտնվող իշխանություններին. «Տայերը հարձակվել են մեր վրա, ուղարկեք պահեստայիններին և միջոցներ ձեռնարկեք ձեր շրջանի մահմեդականներին պաշտպանելու համար»: Բազմաթիվ բնակավայրերում թուրքերն արդեն իսկ լրիվ պատրաստ էին: Ջերել-Բերեբեթի սանջակում, որը տուժել է առավելագույնս, անձամբ կառավարիչ Ասաֆ բեյի ջանքերով նրանք հավաքագրվեցին, զինվեցին և ըստ այդ պաշտոնյայի առաջին իսկ հրահանգի՝ հարձակվեցին քրիստոնյաների վրա: Այնտեղ, ինչպես ամենուր, նրանք գործել են ըստ միևնույն կանոնների՝ սպանել, կողոպտել ունեցվածքը, բերքը, անասունները, ավերել տները, «բեռնակիր անասունների և հոտերի հետ մեկտեղ, զանգվածաբար, ում ինչպես պատահի՝ առևանգել են երիտասարդ աղջիկներին և տարել դեպի հեռուները՝ որոնումներից ազատագրելու նպատակով»<sup>51</sup>, կանանց, երեխաներին և նույնիսկ տղամարդկանց կրոնափոխ արել, որոնց խնայում էին միայն իրենց հավատքից հրաժարվելու դեպքում: Շատ անգամ, չնայած ամբողջությամբ պահպանվում էին բոլոր ձևականությունները և կատարվում բոլոր ծեսերը, ներառյալ թյապառումը, վերջին պահին մտափոխվում էին և այդ ակամա նորադարձներին պարզապես ոչնչացնում՝ խոշտանգելով նրանց այնպես, ինչպես մահմեդականների հավատքի դեմ ըմբոստացածներին:

Ինչպես Ադանայում, նահանգի այլ վայրերում ևս կոտորածը հա-

<sup>51</sup> Գերմանական առաքելության գեկուցագիրը:

ճախ ուղեկցվել է խոշտանգումներով և զազրելի արարքներով: Կանանց ևս միշտ չէ հաջողվել խուսափել դրանցից:

«Տասնչորս տարի առաջ անհամեմատ սակավաթիվ կանայք և երեխաներ են սպանվել: Այս անգամ դիտավորյալ ոչնչացրին մեծ թվով կանանց»<sup>52</sup>:

Կարմեխոնների առաքելության վանահայր՝ հայր Ժոզեֆն իր հերթին գրում է.

«Կանայք, երեխաները, աղջիկներն անարգվեցին, պատվազրկվեցին, կախվեցին ծառերից և ոչնչացվեցին ապառաժների վրա... Երբ կանանց մանյակները չէին կարողանում հեշտությամբ պոկել՝ դանակով կտրում էին նրանց գլուխը: Աղջիկների ականջօղերին և ապարանջաններին տիրանալու համար պոկում էին ականջները, կտրում ձեռքը և նրանց կյանքին վերջ տալիս մայրերի բազուկների մեջ»:

Պ[արոն] Լոուսոն Չենբերսի վկայությունից.

«Ձեռքերը կապած՝ հայերին գցում էին գետը և զվարճանում՝ ամեն անգամ կրակելով դժբախտների գլուխների, ինչպես թիրախի վրա, երբ դրանք հայտնվում էին ջրի երեսին...»:

Կաթոլիկ առաքելության հայր Ռիզալի վկայությունից.

«Հավատքն ուրանալ պարտադրելու համար՝ մի տերտերի աչքերը փորեցին չերքեզական երկաայր դանակով, որը պտտեցնում էին արյունաներկ ականապիճում՝ կարծես պտտտակով մի փայտի կտոր էին փորում: Միևնույն դանակով կտրեցին նրա լեզուն և կտրեցին ատամները»:

Ամերիկյան մի զեկուցագրից.

«Մի մարդու բերանը վառող լցրին և լուցկով վառեցին»:

Որոշ մանրամասներ իսկ կարող են օգնել պատկերացում կազմելու այս անասնաբարոների վայրագության մասին: Այսպիսի եկեղեցում պատսպարվում էին որոշ թվով հայեր. թուրքերն այդտեղ են ներխուժում, բռնում նրանց և մեկ առ մեկ դուրս բերում ու հանգիստ սրախողխող անում բակի սալահատակների վրա: Այդ ժամանակ մարդասպանների միջից գանգատվելով առաջանում է կույր, տարեց մի ծերունի, ասելով, որ կմեռնի՝ եթե Ալլահի առջև խղճի պարտքը, այն է՝ քրիստոնյա մի շուն զոհաբերելու աստվածահաճո գործը չկատարի: Դա անելը դյուրին է: Նրա համար բերում են լավ կապկալված մի հայի, պատկեցնում գետնին և մինչ չորս տղամարդ պահում են նրան, կույրը ձեռքով, որով հագիվ է բռնում դանակը, ջանում է այն մխրճել զոհի պարանոցի մեջ:

«Հաճախ ասում են, - նկատում է պ[արոն] Լեոպոլդ Ֆավրը, - որ թուրքերը ո՛չ մոլեռանդ են և ո՛չ դաժան, որ նրանք սպանում են թալանելու նպատակով կամ ըստ հրամանի: Ինչպես բացատրել մի հարուստ թուրք սեփականատիրոջ պարագան, որն անձամբ սպանել է իր մոտ

աշխատող վեց խեղճ հայ սպասավորների: Նման դեպքեր բազմիցս են արձանագրվել, բայց որպես փոխհատուցում՝ տեղի են ունեցել նաև այլաբնույթ իրադարձություններ»:

Շիրավի, եվրոպացիների և հայերի նամակներում հիշատակվում է մահմեդականների, թուրք առաջնորդների, երևելիների կամ գյուղացիների և նույնիսկ քրդերի կամ չերքեզների մարդկային և մեծահոգի վարքագծի մասին: Համիդիեում ոմն Ջաքարիա բեյ փրկել է հայերի, Օսմանիեում ոմն Սաբրի էֆենդի երեք օր պաշտպանել է 18 այլ հայերի, բայց վրա հասած խառնամբոխը պահանջել է նրանց. փորել են նրանց աչքերն ու մասնատել: Այլ վայրերում ևս, ինչպես Քեսաբում, որտեղ թուրքերը կովում էին արաբների հետ, որպեսզի նրանցից խլեին Ապիկ - յանի կնոջը, որին պատրաստվում էին կտոր-կտոր անել, քաջարի մարդիկ պաշտպանել են կամ ազատագրել զոհերին: Քաղաքացիական և ռազմական որոշ պաշտոնյաներ աչքի են ընկել իրենց հաստատակամությամբ և կորոպով: Մերսինի մութասարիֆ Էսադ բեյին դժվարությամբ է հաջողվել կանխել կոտորածն այդ քաղաքում: Նրա պաշտոնակիցը Կեսարիայում՝ Ջեմալ բեյը, կարգ ու կանոնը պահպանելու համար վտանգել է իր կյանքը և խառնակությունների ամենաթեժ պահին շարունակել այցելել ու սփոփել եկեղեցիներում և դպրոցներում ժողովված հայերին: Լաթաքիայի պրեֆեկտը փրկել է քաղաքը կոտորածից: Խարբերդի գլխավոր կառավարիչը կարողացել է հետաձգել բոլոր հայերին կոտորելու ծրագրի իրականացումը մինչ այն պահը, երբ արդեն շատ ուշ էր այն իրականացնելու համար: Փոխարենը, իշխանության բազմաթիվ ներկայացուցիչներ թեև անձամբ չեն առաջնորդել անհամար մարդասպանների, այդուհանդերձ համաձայնության են հանգել նրանց հետ, որոնք արյուն են հեղել ոչ միայն մոլեռանդության պոռթկման պահին, այլ կանխամտածված և սառնասիրտ դաժանությամբ:

Այս ամենով հանդերձ, գյուղերում տեղի ունեցած կոտորածից առավել ազդեցիկը՝ սանձարձակ մարդոքսն է, որը մահմեդականներն իրականացրել են լեռներում, որտեղ հետապնդում էին փախչողներին մինչև քարանձավներն ու քարայրները, դաշտավայրում, որտեղ նրանց հետապնդում էին ճանապարհների երկայնքով, դաշտերի միջով, երբեմն նրանց ետևից բաց թողնելով մեծ շների: Բազմաթիվ շարաթներ անց ճանապարհորդները կարող էին փողոցի և արահետների եզրերին նկատել ձերմակած ոսկորներ: Անհամար զոհերի համար գերեզմանատեղի են դարձել լոկ փողոցների փոշին և խորխորատների ժայռաքարերը: Այլոց հոշոտել են շնագայլերն ու գիշատիչ թռչունները, իսկ մի հայուհի՝ հրապարակման համար չնախատեսված իր անձնական նամակում, գրել է այսպիսի սարսափելի բառեր.

<sup>52</sup> Գերմանական առաքելության զեկուցագիրը:

«Մի ճանապարհորդ, որը հենց նոր էր անցել Կիլիկյան դարպասներով, պատմում է, որ լեռներում հնարավոր չէ այլևս տեսնել և ոչ մի անգործ Կենդանիների լեշերն այնտեղ փթում են անվնաս վիճակում: Գիշատիչ թռչունները նախընտրում են իրենց սնունդը փնտրել դաշտավայրում, որտեղ խրախճանքներ են անում մարդու մտով»:

\*\*\*

Այստեղ անհնար է ներկայացնել այն տեսարանների ամբողջական պատկերը կամ մանրամասն պատմությունը, որոնց թատերաբեմն է դարձել յուրաքանչյուր բաղաբ և գյուղ: Այդ մտային հանրագումարն ավելի քան տաղտկալի կլիներ: Ամենուրեք միօրինակությամբ կրկնվում են գրեթե անփոփոխ միջոցներով իրականացված նմանօրինակ հանցագործություններն ու սարսափները: Սահմանափակվենք թերթելով միայն մի թղթապանակ, որտեղ հիշատակվում են տարբեր սկզբնաղբյուրներից քաղված՝ ամենայն ճշգրտությամբ և դաժանորեն միմյանց ստույգությունը հավաստող վկայություններ:

Մի քանի հատվածներ մեզ թույլ կտան այս իրադարձությունների շուրջ ստանալ ամբողջական պատկերացում:

Ահա, նախ արդեն հղված Մ. Գ...-ի նոթատետրը: Ամսի 15-ի առավոտյան այս ճանապարհորդը Մսիսի ճանապարհին գտնվող իջևանատներից մեկում էր՝ Ադանայից 30 կիլ[ոմետր] հեռավորության վրա:

«Արևածագին մենք արթնացանք կրակոցներից: Եկան չերթեզները: Այսօր Մսիսի հերթն է: Տիրում է համընդհանուր տագնապ: Լսվում են սրտաճմնիկ ճիչեր: Կանայք և երեխաները փախչում են: Բիմբաշին<sup>53</sup> իր տրամադրության տակ միայն 20 զինվոր ունի, որոնք անվարան կրակում են քրիստոնյայի վրա՝ եթե ղեկավարը կարգադրում է, բայց փորձում են շրջանցել հրամանը՝ եթե խոսքը վերաբերում է մահմեդական եղբորը: Պաշտոնյան փորձում է բանակցել իրեն մեծ հարգանքով վերաբերվող չերթեզների հետ: Նրանք համբուրում են նրա ձեռքերը, իրենց համարում նրա զավակները, հավաստում, որ չեն ցանկանում վնաս պատճառել եվրոպացիներին, բայց խնդրում են իրենց թույլ տալ սպանել հաղորդի: Հրամանատարը ցանկանում է նրանց տարհանոգել: Նրանք չեն հասկանում այս գլավուր շներին պաշտպանելու նրա համառության իմաստը: Վերջապես նրանք գործի են անցնում, որին միանում են թուրքերը: Ջինված հայերը, քանի ղեռ կարող են, փակված իրենց տներում, պաշտպանվում են, բայց նրանք սակավաթիվ են...»:

Մենք գիտենք այլ վկաներից, որ այս առաջին կոտորածը կանխարգելվել է արագ: Սակայն հենց որ Մսիսի ոստիկանության հրամանատար սպան զնացել է օգնության հասնելու Հաճնին, թուրքերն ու չերթեզները վերսկսել են ընդհատված գործը: Մսիսում կոտորածից

փրկվել են միայն իգական սեռի 80 և արական սեռի վեց ներկայացուցիչներ, ներառյալ ծծկեր երեխաները: Այս ավանում, ուր միայն երկու հայ էին զբաղվում դարբնությամբ, թուրքերը, չցանկանալով հետագայում ձեռնունայն մնալ, զգուշություն են ցուցաբերել և ապահովել նրանց անվտանգությունը՝ պարտադրելով սակայն ընդունել խլամը:

Մսիսում ողջ-ողջ այրվել են մեծ թվով երիտասարդ աղջիկներ: Քանի որ այն տունը, որտեղ նրանք ապաստանել էին՝ հրկիզվում էր, նրանցից շատերն իրենց մազերով կապկպվել են միմյանց՝ պարտավորվելով, այսպիսով, մեկը մյուսից չբաժանվել և ավելի շուտ մեռնել, քան թուրքերի ձեռքն ընկնել: Նրանցից մեկին, որը փորձում էր փախչել, քանզի ինչ-որ մեկը խոստացել էր փրկել նրա կյանքը, վերստին բոցերի մեջ է նետել նրա հարագատ մայրը: Այլ կանայք, որոնց հետապնդում էին փողոցներում, խուսափեցին պատվազրկությունից՝ նետվելով գետը: Այս վերջին մանրամասները հաղորդել են տարբեր միսիոներներ՝ վեց փաստաթղթում:

Վերադառնանք ֆրանսիացի ինժեներ Մ. Գ...-ին, որը կառքով և պահակախմբի հսկողությամբ ամբողջ արագությամբ վերադարձել է Ադանա՝ իր հետ տանելով մի քանի հայերի, որոնց նրան հաջողվել էր փրկել:

«Մենք սկսում ենք նկատել ծխի քուլաներ: Հրկիզվում են հայկական հարուստ ազարակները: Թուրքերին պատկանողներն անվնաս են: Ճանապարհից 500 մետր հեռավորության վրա տեսնում ենք Ինջիրլիկ գյուղի հայկական թաղամասը, որը բոցավառվում է: Ավելի հեռվում դիրքավորված են թուրք հրոսակախմբերը, որպեսզի սպանեն փախչող հայերին: Ես հիշում եմ մի ձիավորի, որը սլանում էր գլխապտույտ արագությամբ՝ իր կյանքը փրկելու համար: Մենք անընդհատ հայտնաբերում ենք հայ գյուղացիների դիեր»:

Ինջիրլիկում 145 հայկական տներ կային, որոնք բոլորն ավերվել են: 700 հոգուց բաղկացած բնակչությունից փրկվել են 60-ը, որոնցից 28-ը արական սեռի ներկայացուցիչներ են:

Ինջիրլիկից հետո հերթը հասել է Քրիսթիանոյ փոքրիկ գյուղին (որտեղ 45 տնից մոռացության են մատնվել միայն երեքը), Աբդ օղլուին (500 մահացած) և շրջակայքի ազարակներին:

Հատված Աբդ օղլուի դեպքերին վերաբերող մի նամակից, որի հեղինակը հայ է.

«Աբդ օղլուի կոտորածների հրահրիչներ Կիբարեն օղլու Մեհմեդը և նրա եղբայր Իսմայիլը 400 թուրքական] ո[սկի] կորզեցին տեղի մեծահարուստ Հակոբից՝ երաշխավորելով նրա, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների կատարյալ անվտանգությունը: Նրանք նրանց ողնկցեցին Մսիս, որտեղ ստիպեցին ուրանալ իրենց հավատքը...»

<sup>53</sup> Մատթ: Այս պաշտոնյան ավելի ուշ օգնության կհասնի Հաճնին

Հակոբի դուստր Լուսաբերին՝ Բաղդադյանի կնոջը և նրա տագրեկին Սառա Բաղդադյանին տարան տղամարդկանց հետ... Մեհմեդը Սառային առաջարկեց ամուսնանալ իր հետ և պահանջեց Լուսաբերի ձեռքն իր եղբոր համար: Բայց քանի որ Սառան մերժեց Մեհմեդի առաջարկը, վերջինս գրգռված նրան գետին տապալեց: Այդուհանդերձ, երեխան, որին նա պահում էր իր բազուկների մեջ, մնաց ողջ առողջ: Դա տեսնելով՝ թուրք կանանցից մեկը վերցնելով մի քար, դրանով սպանեց փոքրիկին: Ինչ վերաբերում է Իսմայիլին, նա Լուսաբերին հայտնեց, որ նրա ծնողները մահացած են, և եթե նա ցանկանար դառնալ իր կինը՝ ամբողջ գյուղը կպատկաներ միայն իրենց: Քանի որ Լուսաբերը, ինչպես և իր տագրեկինը, մերժեց՝ Իսմայիլը նրանից խլեց երեխային, որին տանում էր և նրան ջախջախեց՝ խփելով պատին: Լուսաբերը համառորեն մերժեց, ուստի նա բռնեց նրա երկրորդ որդուն՝ Հովհաննեսին և մոր աչքի առջև սպանեց: Ի վերջո, մարդասպանի հարվածներից մահացավ նաև մայրը»:

\*\*\*

Տարսունում խառնակությունները տեղ են ուրբաթ օրվանից՝ ապրիլի 16-ից մինչև շաբաթ օրը՝ ամսի 17-ը: Ըստ Անգլիայի հյուպատոսի գեկուցագրի՝ դրանք բռնկվել են երբ քաղաքի խառնամբոխին միացել են 400 պահեստային զինվորները, որոնք հատուկ գնացքով եկել էին Ադանայից՝ այդ քաղաքում կոտորածի ավարտից հետո: Նրանք նախ սպանել են կայարանի երկու հայ ծառայողներին, այնուհետև միանալով քաղաքի թուրքերին՝ գործի են անցել:

«Այստեղ շուկներ էին տարածվել, - գրում է դ[ոկտոր] Քրիսթին, - ըստ որոնց հեղափոխական Գյուեգդերեյանը՝ առաջնորդելով 15000 հայ հեծյալների, շարժվում է դեպի քաղաք: Այս կեղծ լուրը պետք է բորբոքեր մահմեդական հորդանների ոգևորությունը... Խառնամբոխին շեփոթի հնչյուններով կոչեցին գնալ կառավարչի նստավայր, որտեղ կառավարության պաշտոնյաները նրանց հարյուրավոր զենքեր բաժանեցին՝ զինամթերքի հետ մեկտեղ»:

Մեկ այլ նամակ Տարսունից, որի հեղինակն այդ քաղաքի ամերիկյան քոլեջի դասախոս Մ. Ջ.-ն է:

«Քրիստոնյաներն առանց որևէ դիմադրության փախուստի դիմեցին: 400-ը պատասպարվեցին Մինդուսի ճահիճներում, 3000-ը մտան մեր բակ: Ոչինչ չփրկվեց, նույնիսկ մի ծածկոց... Հարևան փողոցներից հրաձգության ձայներ, կողոպտիչների ոռնոցներ, կանանց և երեխաների ճիչեր էին լսում...»

Կողոպուտն ու հրդեհը շարունակվեցին ամբողջ ուրբաթ օրվա ընթացքում: Գիշերը հրացույթը դեռևս այնքան ուժգին էր, որ մենք կարող էինք կարդալ և գրել: Առավոտյան ավելի քան 800 տնից միայն փլատակների կույտ էր մնացել: Ամբողջ գիշեր մենք սովյալ երեխաների

լացուկոծին խառնված տնքոցներ և ողբեր էին լսում»:

Հրդեհը շարունակվել է մինչև առավոտ՝ այրելով նախապես կողոպտված 797 տուն: Քանի որ երեք տուն դեռևս կանգուն էին մնացել, բաշխորդուկները եկան դրանք այրելու կիրակի օրը՝ ամսի 18-ին:

Այստեղ, ինչպես այլուր, գորքը մասնակցել է գործին:

«Ջինվորները, - գրում է դ[ոկտոր] Քրիսթին, - հետագայում մեզ հայտնեցին, որ ստացել էին հայերին կոտորելու հրաման: Ի դեպ, մենք տեսանք, թե ինչպես են նրանք կրակում մինարեթների բարձունքից»:

Ինչ վերաբերում է զոհերին, ապա բուն Տարսունում դրանց թիվը եղել է սահմանափակ. բուն քաղաքում այն հասել է 73-ի, այլ 242 հայեր կոտորվել են արվարձանում, իսկ 138-ը՝ Տարսունի մոտ գտնվող՝ ամբողջությամբ հրկիզված Կոզոլուկ գյուղում:

Ադանայի դաշտավայրում կային հայերին պատկանող մեծաթիվ ազարակներ, որոնք բոլորը թալանվել են: Ապրիլի 22-ին տ[իկի]ն Դաութի-Ուայլին գրել է.

«Յուրաքանչյուր ազարակում շուրջ 100-ից 200 հոգի կնքեցին իրենց մահկանացուն: Թուրքական ազարակները չհրկիզվեցին, բայց այնտեղ աշխատող բոլոր քրիստոնյա մշակները սպանվեցին»:

Հայր Ռիզալը նշում է.

«Հայ կաթոլիկական եպիսկոպոսությանը պատկանող ազարակում կոտորվեց 160 մարդ, իսկ նրանց դիերը նետվեցին ջրհորները»:  
Բնաջնջումից երկու ամիս անց այս շրջան այցելած անգլիացի պ[արոն] Ժ.-Լ. Բութի վկայությունը.

«Հունական մի ազարակ ամբողջությամբ հրկիզվեց և բոլոր 400 մշակները կոտորվեցին: Իմ ճանապարհին վարսակ հավաքելով էին զբաղված այլ մշակներ, որոնք հունձքի մեջ անընդհատ գտնում էին այնտեղ ապաստանած իրենց ընկերների դիերը: Թուրքերը երեք օր շարունակ խուզարկում էին 500 ակր տարածք ունեցող այս ազարակը, և ոչ մի քրիստոնյա չկարողացավ նրանցից փախչել: Իմ այցելության ընթացքում մենք գտանք վեց դի»:

Համիդիայի շուկայում գտնվող իրենց կրպակներում ապրիլի 15-ին, սպանվեցին ավելի քան 600 մարդ, հրկիզվեցին 400 տուն, չորս դպրոց, երկու եկեղեցի:

«Կոտորածը, - տեղեկացնում է հայր Ռիզալը, - այնքան անսպասելի և արագ եղավ, որ հանկարծակիի եկած մեծամասնությանը հարվածեցին հենց տեղնուտեղը: Ինչ վերաբերում է ազարակների մշակներին, ապա նրանց հետապնդեցին և սպանեցին՝ ինչպես վայրի գա՝ զանների: Հինգ հարյուր քայքայվող դիեր վարակում են դաշտը»:

Իրենց առաջադրանքն ավարտին հասցնելուց հետո ավազակներ

որը հանգուցյալներին կողոպտելու համար բարեխղճորեն զննում էին դիերի կույտը: Համիդիեի ամբողջ բնակչությունից վերապրել են 373-ը, որոնցից երեքը՝ տղամարդիկ են:

Քանի որ ապրիլի 15-ին Օսմանիեում խառնամբոխին զենք էին բաժանում նույնիսկ կառավարության շենքում՝ անհանգստացած հայերը հարցրին կառավարությանը, թե դա ինչ է նշանակում: Նրանց պատասխանեցին, որ գյուղացիները պատրաստվում էին հետապնդել Պալասի ամբողջ փախած բանտարկյալներին<sup>54</sup>: Դրանից անմիջապես հետո սկսվեց բազում ժամեր տևած գործը, որն ավարտվեց հրկիզմամբ: 180 մարդ՝ ծերունիներ, կանայք և երեխաներ ծվարել էին քաղաքի փոքր եկեղեցում: Մի քանի թուրքեր ջարդեցին եկեղեցու հարթ տանիքը և ներս նետեցին այրվող նավթամաններ, այլք՝ հրացաններով զինված, հսկում էին դուռը:

Հինգ շաբաթ անց հայր Ռիգայն այսպես է նկարագրում այս տեսարանը.

«Ներսում, մանրահատակի վերևում, մասամբ փլատակներով ծածկըված սպիտակ պատի վրա դեռևս տեսանելի են սև սովերների ուրվանկարերը, որոնք ներկայացնում են ցավից կծկված մարդկային կերպարանքներ: Դրանք այն գոհերն են, որոնց այրված՝ պատին գամված մարմինները, կրի մեջ դրոշմել են այդ զարհուրելի ուրվանկարները»:

Ապրիլի 15-ին Խառնիում Էքիզ օղլու հարուստ ընտանիքի արական սեռի բոլոր ներկայացուցիչներին սպանելուց հետո առևանգել են կանանց և երեխաներին, այնուհետև հարձակվել հայկական թաղամասի վրա՝ տուն առ տուն: Գյուղի դարպասների մոտ նստած ալեհեր մի ծերունի դողացող ձեռքերով ցուցումներ էր տալիս և ուղղորդում կոտորածը: Տներին մեկում պատասպարված շուրջ հարյուր մարդ պաշարողներին քաջարի դիմադրություն էին ցույց տալիս: Չկարողանալով նրանց ոչնչացնել՝ թուրքերը դադարեցրին հրաձգությունը և հաշտության առաջարկ արին: Իրենց թշնամիներին վստահաբար ընդառուց գնացած հայերն անմիջապես շրջափակվել են, զինաթափվել ու քարշ տրվել մի ձոր, որտեղ մինչև վերջինը դաշունահարվել են:

Ահա որոշ հատվածներ Խառնիի՝ սպանված հայ քահանայի կնոջ նամակից: Այս կինը, որն ապարդյուն է փնտրել իր ամուսնու աճյունը, ի վերջո, այլ կանանց հետ թաքնվել է այտոռում:

«Թուրքերը գտնելով մեր թաքստոցը՝ մեզնից դրամ պահանջեցին: Նրանք մեզնից պահանջեցին ուրանալ մեր կրոնը՝ մեզ մահմեդական դարձնելու համար...

... Թողջյանը և նրա որդի Սամվելն իբրև փրկագին՝ մի աղայի 80 թ[ուրքական] ո[սկի] առաջարկեցին: Նա վերցրեց դրամը և երկու օր նրանց ապաստան հատկացրեց, այնուհետև փորձեց կրոնափոխել:

<sup>54</sup> Բանտի դռները բացել էին, որպեսզի նրանց բաց թողնեին՝ Անտիոքի մոտ գտնվող գյուղի վրա հարձակվելու համար: Անտիոքի կոտորածների մասին տես ստորև:

Նրանք մերժեցին և նա նրանց սպանեց: Նույն շաբաթիցով Հակոբյանն ու նրա որդի Ավետիսն արժանացան միևնույն ճակատագրին... Երկու շաբաթ շարունակ մենք ստիպված եղանք թափառել լեռներում՝ սնվելով միայն խոտերով և արմատներով: Ի վերջո, դ[ոկտո]ր Հ. Շեփարդը և գերմանացիները եկան մեզ որոնելու և ուղեկցեցին Մարաշ: Ճամփորդության ընթացքում մեր քարավանը յուրաքանչյուր պահի պետք է շրջանցեր դիերով խճողված ճանապարհը: Դրանք այն բազում հարյուրավոր գյուղացիների դիերն էին, որոնք հեռուներից դաշտավայր էին եկել աշխատելու... Նույնիսկ Խառնիի փողոցներում կային դիակույտեր, որոնց կողոպտիչները թալանել էին և թողել լրիվ մերկ: Վրա հասած այլ թուրքերը հայիոյելով ոտքով հարվածում էին նրանց. «Այ անամոթ գյավուրներ, ինչպես եք դուք համարձակվում այս տեսքով երևալ»:

Խառնիում 190 մարտունակ հայ տղամարդկանցից վերապրեցին ինը: Կոտորածից վեց օր անց սարից աներկյուղ իջած յոթ երիտասարդի անմիջապես բռնեցին և գլխատեցին կոճղի վրա:

Որոշ վկայություններում տեղ են գտել համառոտ ապշեցուցիչ դրվագներ: Մի երիտասարդ աղջիկ, իր բարեկամուհիներից մեկին նկարագրելով այդ նույն Խառնի գյուղի ավերումը, նշում է.

«Ես ի գուր փնտրեցի իմ եղբոր՝ Մանուկի մարմինը: Ես գտա միայն նրա գլուխը... Ամբողջ ընտանիքս կործանվեց, մեր ամբողջ ունեցվածքը թուրքերի ձեռքում է...

Մենք շտապում էինք երևելի թուրքերի տները, բայց նրանց կանայք դուռն անգթորեն փակում էին մեր առջև»:

Միսիոները, որը փոխանցում է այս նամակը, դրան հավելում է հետևյալ գրառումը.

«Այն ինչ կատարվել է Խառնիում, կրկնվել է բոլոր հարևան գյուղերում: Հարավ-արևելքում գտնվում էր ընդամենը 27 շնչից բաղկացած փոքրիկ հայկական մի ավան: Մի բարի թուրք տղամարդ, որի նմանները շատ կան, նրանց ապաստանեց մեկ օր: Սակայն ամբողջ գնաց և պահանջեց, որ նրանց իրեն հանձնեն: Այն նրանց մեկ առ մեկ դուրս բերեց և սպանեց տան առջև՝ լայն սալաքարի վրա»:

Որոշ գյուղերում, ինչպես Քյունեսլերում, ոչ մեկը չկարողացավ փրկվել: Հիսար գաղթած Քյունեսլերի բնակիչները հանձնվել էին առաջնորդ Ջուջի բեյի ողորմածությանը, որը նրանց ողջ և առողջ Հիսար ուղեկցել խոստանալուց հետո՝ բոլորին սպանել և կողոպտել տվեց: Կանանց և երեխաներին խնայեցին: Սակայն երբ ավելի ուշ նրանց տարան իրենց գյուղ, նրանք արժանացան շրջակայքի մահմեդականների անպարկեշտ վերաբերմունքին և Այնթաբից չորս հայկական ընտանիքների՝ իրենց տղամարդկանց հետ, հարկադրաբար բերեցին Քյունեսլեր՝ այս-

տեղ բնակեցնելու համար, որպեսզի այդ փոքրաթիվ բնակչությունը բոլորովին անպաշտպան չմնար:

Անդրադառնալով Հասան-Բեյլիին:

Հասան-Բեյլին սարավանդի հովտում տարածված գեղեցիկ և բարգավաճ գյուղ էր: Հայերի թիվն այնտեղ 2000-ի էր հասնում. դա խելացի, ձեռներեց բնակչություն էր, որը զբաղվում էր, հիմնականում, շերամապահությամբ: Ապրիլի 16-ին հարևան գյուղերում տեղի ունեցած իրադարձություններից տագնապահար՝ Հասան-Բեյլիի բնակիչները մի պատվիրակության հանձնարարեցին գնալ և թուրք աղաների հետ բանակցել: Վերջիններս նրանց բոլոր առումներով հանգստացրին: Այդուհանդերձ, նրանք հանցակցում էին չարագործների հանցախմբերին, որոնք հաջորդ օրը գնացին պաշարելու գյուղը և, ի դեպ, այնտեղ թափանցեցին միայն երկնային կամքով:

Ամերիկյան առաքելության զեկուցագրում կարդում ենք.

«Նրանք ազդանշանի էին սպասում երկնքից: Եթե քամին ծուխը քշեր իրենց կողմը, դա կնշանակեր, որ Ալլահը դեմ է իրենց ձեռնարկմանը, եթե ընդհակառակը՝ ծուխը քշվեր դեպի գյուղը, ապա կարող էին անվարան դրան հետևել: Իրականացավ երկընտրանքային երկրորդ տարբերակը, և նրանք դրանից շատ ուրախացան... Հրդեհին ի տես՝ բնակչությունը փախավ դեպի հյուսիս-արևելքում գտնվող բլուրները, լքելով տներն ու ամբողջ ունեցվածքը: Կանայք շտապում էին ցնցոտիներ հագնել, որպեսզի առաջ չբերեին թուրքերի ցանկասիրությունը»:

Մի քանի տղամարդ կազմակերպում են պաշտպանություն. որսորդական հրացաններով զինված՝ նրանք երկու օր հանպատրաստից կառուցված մարտապատնեշներով պաշտպանված կռվում և եռանդագին ետ են մղում բոլոր գրոհները: Բայց երրորդ օրը գալիս են հարյուրավոր մահմեդականներ: Արաբ դ'Էքբեզի վանահայր հայր Լաբարդենը Հասան-Բեյլիի պաշարման մասին գրում է.

«... Երբ Բախչեի մոֆթին նրանց համար Օսմանիեի զենքի խանութներից զենք ու զինամթերք բերեց, դիմադրությունը դարձավ անհնարին»:

Հայերը որոշեցին նահանջել: Արդեն հղված ամերիկյան զեկուցագրի հեղինակը շարունակում է.

«... Բլուրների վրայի տեսարաններն ահասարսուռ էին: Ամուսինները չէին կարողանում բաժանվել իրենց կանանցից... Սակայն դեռևս հնարավոր էր, որ կանանց և երեխաներին խնայեին, մինչդեռ տղամարդկանց միակ հույսը փախուստն էր: Նրանք խմբերով գնացին լեռները՝ դեպի Մարաշ և Իսլահիե: Կանայք, իրենց հերթին, փորձում էին որքան հնարավոր է հեռանալ իրենց գյուղից: Այս դժբախտների մեծ մասն իր հետ ուներ աղմկող երեխաներ: Կանայք և երեխաները երկու օր ու գիշեր թափառեցին բլուրների վրա՝ վախենալով հատկապես

երիտասարդ աղջիկների համար: Վերջիններս իրենց երեսներին ցեխ էին քսում, որպեսզի վանող տեսք ունենային: Վերջապես, պաշտպանված լինելու խոստումով՝ նրանք իրենց զավակների հետ հասան Բախչե: Այնտեղ նրանց փակեցին եկեղեցում, որտեղ նրանք այնպես էին սեղմված մեկը մյուսին, որ բազում օրեր շարունակ ստիպված էին կանգնած մնալ: Նրանք սովահար էին լինում: Ժամանակ առ ժամանակ նրանց մի կտոր հաց էին տալիս: Երեք անգամ փորձեցին հրկիզել այն եկեղեցին, որտեղ նրանք հանգրվանել էին: Իսկ գիշերը զինվորները թափառում էին շրջակայքում՝ ջանալով առևանգել երիտասարդ աղջիկներին»:

Ինչ վերաբերում է տղամարդկանց, ապա ավելի քան 300-ը սպանվեցին բլուրների վրա, անտառներում, քարանձավներում, որտեղ քրդերը նրանց հետապնդում էին տասնհինգ օր շարունակ: Հասան-Բեյլիում այլևս մարտունակ տղամարդ չի մնում:

«Հայ բողոքական քահանայի կինը կորցրեց իր ամուսնուն, երկու որդիներին, չորս եղբայրներին և բազմաթիվ այլ ազգականների... Երեկ՝ հունիսի 13-ին, այրիներն ու որբերը բարձրացան լեռները՝ իրենց հանգուցյալներին հուղարկավորելու համար: Դրանք անկարագրելի հուսակառուր տեսարաններ էին: Մի կին այնտեղ էր իր չորս այրիացած հարսների և թոռների հետ, որոնք բոլորը որբացել էին, քանի որ նրա չորս որդիները սպանվել էին: Մեկ այլ կին տեղ էր փնտրում իր հոր, ամուսնու, երեք եղբայրների, տեղբերի և եղբորորդու աճյունները թաղելու համար... Կասկածից վեր է, որ մահմեդականները ցանկացել են կոտորել հայ բնակչությանը՝ նրա կալվածքներում հաստատվելու համար»:

Քանի որ Հասան-Բեյլիի տները տարածված էին այգիներում, ստիպված եղան դրանք առանձին-առանձին կողոպտելուց հետո մեկ առ մեկ հրկիզել: Այս գործն ավարտին հասցնելու համար պահանջվեց 12 օր: Այսպես՝ հրկիզվեցին 416 տուն, 56 կրպակ, երեք դպրոց, երկու եկեղեցի:

Բախչեում գործեցին նմանօրինակ ձևով. 113 սպանված, 127-ից՝ շուրջ 115 հրկիզված տներ: Բարձրաստիճան թուրք հոգևորական, Հակ Բաբայի որդի Օքեշը, միայն ինքը կացնի հարվածով սպանեց 45 հայի, որոնց նրա մոտ էին բերում կապկալված վիճակում:

Շրջանի աղետյալները կենտրոնացել էին այս գյուղում: Պաշտոնյաներն ու աղաներն ստանձնել էին նրանց հովանավորությունը. նրանք հիմնականում զբաղվում էին նրանց կրոնափոխելով և, ի դեպ, թողնում, որ նրանք մեռնեն սովից ու ծարավից<sup>55</sup>:

«Բոլոր ջրհորները, բացի մեկից, որը գտնվում էր թուրքական թաղամասում, աղտոտվել էին: Երեք ջրհոր լի էին դիերով: Առաջին օրե-

<sup>55</sup> Գերմանական տեղեկություն Ֆրանկֆուրտի «Դոյչեր հյուլսբունդ ին Օրիենթին»:

րի ընթացքում արդեսյալներն արյունախառը ջուր էին խմում մի փոքրիկ առվակից, մինչ մի բարի թուրք կարողացավ հասնել այն բանին, որ նրանց հնարավորություն ընձեռվի ջուր վերցնել չվարակված ջրհորներից»:

Բախչեի մոտ գտնվող մեկ այլ գյուղում՝ Լափաջլում, 120 տուն հրկիզվեց, 146 մարդ սպանվեց: Ջերե-Բերեքերի շրջանի և սահմանամերձ կազանների քսան այլ գյուղաքաղաքներ և գյուղեր՝ Իսլահիեն, Խասասա Յարփուզը, Գյոքչայիքը, Օզերլին (որտեղ 200 հայ քաջաբար պաշտպանվեցին), ավելի հեռվում գտնվող Կարաթաշը, Այասը և այլք հրի ու սրի մատնվեցին:

Այասում, որն ափամերձ ավան է, գործի անցան ապրիլի 15-ից՝ ըստ նախապես կազմված ցուցակի, ոչ մի չափահաս հայ չմոռացվեց: Այստեղ կոտորածը հատկապես արագ իրականացվեց: Այն տևեց չորս ժամ, որին ուղեկցեցին և հետևեցին զոհությունը, բռնություններն ու հրդեհները: Սպանվեցին 77 քրիստոնյա, որոնցից 71-ը՝ հայեր էին, իսկ վեցը՝ հույներ:

Հատված ամերիկյան առաքելության փաստաթղթերից.

«... Երիտասարդ և նոր ամուսնացած մի կին, որին հենց նոր առևանգել էր մի թուրք, իր հույն ամուսնուն աղաչում էր սպանել իրեն ատրճանակի կրակոցով, որպեսզի խուսափեր մահից վատթար պատվազրկումից: Նա նրան, իհարկե, սպանեց և իր հերթին սպանվեց այն մարդու կողմից, որը փորձում էր առևանգել նրա կնոջը:

... Հայագահ Արթինին՝ որպես մահացածի, թողել էին մի քանի դիերի մեջ, անկյուններից մեկում: Երբ որոշ ժամանակ անց այդտեղով անցնող մարդասպաններն Արթինի կողքին արտասվող մի կնոջ տեսան, նրանք մոտեցան և սկսեցին քարկծել տղամարդուն: Այնուհետև հեռացան և վերադարձան պարաններով: Այդժամ նրանք արյունաշաղախ Արթինին քարշ տվին մինչև ափ: Նա գոռում էր. «Ես մեռած չեմ, Աստծո սիրուն, սպանեք ինձ»: Նա երկար տանջվեց: Վերջապես նա անշնչացավ և նրան նետեցին ծովը»:

\*\*\*

Բարձրանանք Կիլիկիայի հյուսիս՝ դեպի Սսի և Հաճնի կողմերը: Նախ նշենք Սայ-Գեչիդի գործի մասին: Ապրիլի 16-ին 14 ճանապարհորդ՝ 13 հայ և մի հույն, որոնցից յոթը բողոքական եկեղեցու քահանաներ էին, Ադանա գնալիս՝ գտնվելով Սսից Հաճն տանող ճանապարհին՝ տեղեկացան, թե ինչ էր կատարվում դաշտավայրում:

«Նրանք անմիջապես գնացին պաշտպանություն խնդրելու Սայ-Գեչիդի մոտիք Հաջի բեյից, որը նրանց ընդունեց բարյացակամորեն՝ վատահեցնելով, որ ստանձնում է նրանց կյանքի պատասխանատվությունը: Հաջորդ օրն իսկ եկան բազմաթիվ հրոսակախմբեր, որոնց անձամբ Հաջի բեյն էր բերել: Նրանք բռնեցին 14 ճանապարհորդի և

Սայ-Գեչիդի՝ թվով 78 հայ բնակիչների, կողոպտեցին և բոլորին սպանեցին: Անարգանքների ենթարկված կանանց, ինչպես նաև երեխաներին չխնայեցին: Մուղիր Հաջի բեյի կինը՝ ուրախ և ժպտաղետ, իր պատշգամբից հետևում էր այդ տեսարանին: Հաջորդ օրը դիերը հավաքեցին և մի խորը ձոր նետեցին»:

Սկսած ապրիլի 17-ից՝ Սսի և Հաճնի միջև ընկած ամբողջ տարածքում բազմաթիվ ոճիրներ իրականացվեցին, գյուղերը ողողվեցին արյամբ, մի քանիսը՝ Ռումլուն, Կարսը, Կարաքոյը, Շարը և այլք միայն թալանվեցին և ավերվեցին: Հաճնի շրջակայքում՝ խաղողի այգիներում և ցորենի դաշտերում, հայերին հետապնդում էին երկու շաբաթ շարունակ: Հարյուրների է հասնում մարդորսի զոհը դարձած Հաճնի բնակիչների թիվը:

Բազմաքանակ հայ բնակչություն և անհամեմատ սակավաթիվ թուրքեր ունեցող բուն Հաճն քաղաքը չտուժեց: Այստեղ հայերն են թուրքերից վրեժխնդիր եղել. նրանք տանջելուց հետո սպանել են արվարձանում կոտորած կազմակերպելու մեջ կասկածվող մի թուրք պաշտոնյայի, ինչպես նաև երկու այլ մահմեդականների: Այդուհանդերձ, հայ հոգևորականների և երևելիների միջնորդությամբ թուրքերի կյանքի պաշտպանությունը դրվել է քրիստոնյաների վրա: Վերջիններս՝ բավականին լավ զինված, վճռել են դիմակայել ցանկացած հարձակման: Ամսի 21-ին կողոպտիչների փաղանգները կենտրոնանում էին քաղաքի շուրջը: Միայն Ֆեքեից եկել էին ավելի քան 300 այդպիսիք, որոնք բոլորը զինված էին ատրճանակներով: Սկսվեց քաղաքի պաշարումը, բայց հայերին հաջողվեց նրանց տարածության վրա պահել: Չնայած Ադանայի կենտրոնական իշխանություններից՝ զենքերը հանձնելուն առնչվող՝ ապրիլի 23-ի հեռագրային հրահանգներին, նրանք հաջողությամբ դիմադրեցին մինչև ապրիլի 25-ին Մսիսի բիմբաշիի գալուստը, որը ցրեց պաշարողներին և հայերի օգնությամբ վերականգնեց կարգուկանոնը, որոնց վարքագիծը հավանության արժանացրեց, նույնիսկ նրանց կոչ անելով պահել զենքերը՝ կրկնման դեպքում ցանկացած հնարավոր հարձակում ետ մղելու պատրաստ լինելու համար:

Մեկ այլ՝ Դյորթ Յոլի շրջանում, Իսսի դաշտավայրում, քրիստոնյաները տասն օր՝ 16-ից 26-ը, ստիպված եղան դիմակայել իսկական մի պաշարման: Այս փոքրիկ քաղաքում պաշարվածների թիվը հասնում էր 13000-ի, քանի որ քրդերի կողմից ավերված շրջակայքի՝ Օջաքլիի, Ղազիի, Չայլույի և այլ գյուղերի գյուղացիները միացել էին Դյորթ Յոլի բնակիչներին: Ըստ Ալեքսանդրետում Անգլիայի փոխհյուպատոսի զեկուցագրի՝ պաշարողներից շատերը զինված էին «մարտիկի» տեսակի հրացաններով: Ամերիկացի միսիոներ պ[արոն] Քենեդին, որն այս խնդրում հայերի և թուրքերի միջև բանակցողի դեր է կատարել, ավելաց-



Հիմա անդրադառնանք Հայեայի վիլայեթին, որը թեև Ադանայի վիլայեթից նվազ է տուժել, այդուհանդերձ, այդտեղ ևս որոշ վայրեր վերածվել են համանման ոճիրների թատերաբեմի:

Սկսած ապրիլի առաջին իսկ օրերից Անտիոքում բացահայտորեն խոսում էին «Մահմեդական լիզայի» անդամների մշակած և իշխանությունների հետ համաձայնեցված՝ կոտորածների ծրագրի մասին: Ամսի 16-ին, 17-ին և 18-ին հավաքագրեցին մարդասպաններին, նախապատրաստեցին սպանության գործիքները: Տագնապահար հայերն այլևս չէին համարձակվում դուրս գալ իրենց տներից, փակ էին պահում իրենց խանութները: Բողոքական առաքելության տնօրեն դ[ոկտոր] Ջեյմս Մարթինը գրում է.

«Երկուշաբթի<sup>56</sup>՝ կեսօրից հետո, քաղաքի իշխանությունները, ինչպես նաև մահմեդական ղեկավարները, հայերին քաջալերող երաշխիքներ տվին՝ ասելով. «Ինչո՞ւ չեք բացում ձեր խանութները, դուք վախենալու ոչինչ չունեք»: Նրանք նրանց հայկական եկեղեցում «բարեկամական խորհրդակցության» հրավիրեցին: Հայերն այդտեղ գնացին Անտիոքի իրենց Եպիսկոպոսի և այլ հոգևորականների ուղեկցությամբ: Մինչ նրանց մահմեդական այցելուները բարեկամական հավաստիքներ էին շոայլում և խոսում միայն խաղաղության մասին՝ նրանք նրանց օշարակ և սուրճ մատուցեցին... Ազատություն և եղբայրություն ազդարարելու համար կազմակերպված այս հավաքը դեռևս չէր ավարտվել, երբ կոտորածն արդեն սկսվեց... Վստահելով թուրքերի խոստումներին՝ հայերը մոռացության մատնեցին պաշտպանության միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը և հանկարծակիի եկան»:

Տարբեր վկաներ հաղորդում են, որ նրանք հարձակման են ենթարկվել զորքերի<sup>57</sup>, վարձու մարդասպանների և Պայասի ամրոցի 400 (ըստ Ալեքսանդրեանում Անգլիայի փոխհյուպատոսի զեկուցագրի՝ 460) հանցագործի կողմից միաժամանակ. վերջիններս շուտափույթ ազատ էին

<sup>56</sup> Ապրիլի 19-ին:

<sup>57</sup> Հենց երիտթուրքական «Թանին» պաշտոնաթերթի խոստովանությամբ՝ 1909 թ. մայիսի 31-ին (հունիսի 13-ին):

արձակվել և Անտիոք հասել հարևանությամբ գտնվող Քրրրկիսան գյուղը ոչնչացնելուց հետո:

Կրկին անդրադառնանք դ[ոկտոր] Մարթինի պատմությանը.

«Ջենքերն ու զինամթերքը կառավարության պահեստից անընդմեջ մատակարարվում էին պահեստայիններին՝ իբրև կոտորածների իրականացմանը մասնակցելու համար զինվորագրված կամավորների: Նրանք, ում զինապաշարներն սպառվում էին՝ այնտեղ էին գալիս վերստին զենք ստանալու համար»:

Գերմանական առաքելության զեկուցագիրը.

«Մահմեդականները, որոնց գլխներին սպիտակ փաթեթ էր կապված՝ վազում էին գորանոց, որպեսզի իրենց զենքեր տային: Ես նրանցից մեկին հարցրի, թե ի՞նչ է կատարվում: Նա ասաց. «Ոչինչ, այրվում է հայկական թաղամասը»:

Մի հատված երկխոսությունից.

«Նրանցից քանիսին ես սպանել, - հարցնում է թուրքերից մեկը մյուսին:

Պատասխանը չլսեցի, բայց այն ուղեկցվում էր արտահայտիչ շարժումով: Անձը, որին ուղղված էր հարցը, ձեռքին մի մեծ դանակ ուներ, որն ինքնագոհ տարավ դեպի շուրթերն ու ճակատը»:

Կոտորում են երկու օր ու երկու գիշեր շարունակ: Ինչպես Ադանայում և ամենուր, անողոք էին տղամարդկանց նկատմամբ:

Դ[ոկտոր] Մարթինը գրում է.

«Եպիսկոպոսը, նրա գործընկերը և մի քահանա 14 այլ հայերի հետ սպանվեցին եկեղեցու գետնահարկում: Հոգևորականները զազրելի վերաբերմունքի և խոշտանգումների ենթարկվեցին: Եպիսկոպոսի կրծքավանդակին դրված Աստվածաշունչն այրվեց նրա մորուքի հետ մեկտեղ...

... Հաջորդ օրն առավոտյան, մահմեդական ղեկավարները բռնությամբ տիրացան կանանց... Այդ ամենավերջին տականքները երիտասարդ աղջիկներին տարան լեռները... Կողոպտեցին բոլոր տները՝ չթողնելով գեթ մեկ քորոց»:

Հոկտեմբերին Անտիոք այցելած պ[արոն] Լեոպոլդ Ֆավրը գրում է.

«Քաղաքի ծայրամասերից մեկում գտնվող հայկական թաղամասը կենտրոնից մեկուսացված է թուրք մարդասպանների թաղամասով: Այն բաղկացած է պատերի միջև սեղմված նեղ, ոլորապատույտ նրբանցքներից: Այդ պատերի մեջ փոքր դռներ կան, որոնք յուրաքանչյուրին հնարավորություն են ընձեռում մուտք գործել բակ, որտեղ կառուցված է տունը: Կոտորածի ժամանակ ջարդված այդ դռները՝ դրանից հետո վերանորոգվել և անթափանց փակվել են: Մենք բացել տվինք դրանցից մի քանիսը: Ամեն ինչ կողոպտված էր, տներն ամ -

բողջությամբ դատարկ են, փեղկերն արմատախիլ արված և կախված են: Այստեղ, այնտեղ, հատակների վրա ավազով ծածկված՝ շագանակագույն մեծ բծեր կան: Պատերից մեկի վրա՝ ճեղքի մոտ, արյունոտ ձեռքի հետք կա: Տներից մեկում արյունը հոսել է վերևի հարկի հատակներից: Հինգ տղամարդու սրախողխող են արել առաջին հարկում, իսկ մեկին՝ ձեղնահարկում: Նրանց կանայք և երեխաները ներկա էին եղել կոտորածին: Մեզ ուղեկցող կինը մի քանի բուպետում կորցրել էր հորը, մորը, երեք եղբորը և յոթ զարմիկին:

Մենք հասնում ենք թաղամասի ծայրամասում գտնվող հայկական եկեղեցուն: Բակը լի է կոտրատված կահույքի մնացորդներով, ներքնակներով, ցնցոտիներով, տարատեսակ իրերով: Սա այն է, ինչը թուրքերը վերադարձրել են կողոպտված իրերից՝ միայն այն, ինչն արժեք չունի. ներքնակներ, որոնց բուրդը նրանք պահել են իրենց համար: Գրեթե ոչ մի պիտանի իր չի վերադարձվել: Բակի անկյուններից մեկում երևում է հայ քահանայի տունը: Նրա մորուքը թաթախել էին նավթի մեջ, այնուհետև այրել և նրան ցած նետել առաջին հարկից: Այգում և եկեղեցում եղել են բազմաթիվ փախստականներ: Ներսից պատերը ծակծկվել են հրազենի կրակոցներից, կամարի և տանիքի միջև թաքնված տղամարդկանց դուրս են բերել և սրախողխող արել: Այգու վերին հատվածը պարսպապատ է, որից այն կողմ գյուղն է, ժայռաբլուրները շատ մոտ են: Չափահաս հայերին հաջողվել է մագլցել այդ պատնիսի վեր և դուրս ցատկել: Նրանց հետապնդել են լեռներում՝ մինչև այն պահը, երբ սպանվել է վերջին տղամարդը»:

Դիերը նետել են Օրոնա, այլոց թաղել մի փոսում՝ աղբի և ինչ-որ բեկորների տակ: Ըստ դ[ոկտո]ր Մարթինի՝ այնտեղ կարող էին թաղված լինել նաև կենդանի մարդիկ:

Անտիոքում գոհերի թիվը հասնում է 141-ի, որոնցից վեցը՝ երիտասարդ աղջիկներ են: Վերապրած տղամարդիկ 22-ն են: Բնակչության մյուս մասը՝ «685 կանայք և երեխաներ, - նշում է պ[արոն] Սթեփեն Թրոուքրիջը, - այսօր կատարելապես ընչազուրկ է»: Բացի այդ, քանի որ հայկական թաղամասը քաղաքի հետ կապվում էր միայն թուրքական թաղամասով, այս կանանց համար այժմ անհնար է վերադառնալ իրենց տները:

«Նրանք, - գրում է պ[արոն] Լեոպոլդ Ֆավրը, - ամեն օր կարող էին ենթարկված լինել դժնի կամ նույնիսկ ամենանողկալի վերաբերմունքի: Նրանք չէին կարող աղբյուրից ջուր բերել: Ի՞նչ անեին նրանք, ովքեր ոչ մի ազգական չունեին որևէ գյուղում կամ հարևան քաղաքում: Հարցը գրեթե անլուծելի է թվում: Մի քանիսն արդեն հունական թաղամասի իրենց ծանոթների մոտ են, բայց դա չի կարող երկար տևել: Նրանցից դեռևս հարյուրը կառավարության վարձած տներից մեկում են, ևս քառասունը՝ ներառյալ երեխաները, միսիոներ Մարթինի մոտ են և ոչ մի լուծում նշմարելի չէ:

Այսօր՝ կեսօրից հետո, մենք այս դժբախտներին դրան բաժանեցինք. հարկ է, որ այժմվանից իսկ նրանք կարողանան իրենց համար ձմեռվա պաշարներ գնել: Ինչպիսի ցավալի շարասյուն...

... Ընտանիքներից մեկում կան չորս այրի կանայք: Մայրը կորցրել է ամուսնուն, որը սպանվել է Ադանայում, որդին սպանվել է այստեղ՝ թողնելով մեկ այրու և երկու երեխայի, և այդ կինն ունի նաև՝ իրենց ամուսիններին կորցրած երկու դուստր: Մեկ այլ կին ողորմություն մուրալով հեկեկում է. հայրը մահացել է և այդ կինն ունի երեք անչափահաս երեխաներ: Եվս մի ծեր կին՝ ամբողջությամբ կքված, իր հոգածության տակ երկու այրիացած դուստրեր ունի: Մեկ այլ ծեր կնոջ չորս որդիներն սպանվել են, մեկ ուրիշը կորցրել է հորը, երեք եղբայրներին և տեգրին: Անհնար է ասել, թե այս շարասյունը որքան սարսափելի է եղել անցյալում և ինչպիսի հուսալքություն է նրան սպասում ապագայում»:

Անտիոքից հետո հերթը հասավ Քեսաբին և շրջակայքին: Քեսաբն ավան է Կասիոս լեռան վրա, տեղադրված լեռնաշղթայի ամենաբարձր գագաթին, որն Անտիոքի դաշտավայրը բաժանում է Ալեքսանդրետի դաշտավայրից: Այս ավանը և շրջակայքի ինը գյուղը բնակեցված են 8000 մարդուց բաղկացած եռանդուն, դիմադրող և գործունյա հայ բնակչությամբ:

Անտիոքի կոտորածի ավարտից անմիջապես հետո հրոսակախմբերը՝ համալրելով իրենց շարքերը բազմաթիվ այլ գյուղացիներով, հարձակվել են Քեսաբի վրա: Օրոնտի հովտի ամբողջ բնակչությունը հավաքագրվել է այս հարձակման համար, որին, ըստ թուրքական հանձնաժողովի պաշտոնական զեկուցագրի՝ մասնակցել է 30000 մահմեդական: Նրանցից շատերը զենք ու զինամթերք են ստացել Օրդու փոքր քաղաքում, չնայած որ կառավարիչ Հասան Հուսեյնը՝ Քեսաբի հայ պատգամավորներից բաղկացած պատվիրակությանը խոստացել էր պաշտպանել իր ենթակայության ներքո գտնվող քրիստոնյաներին: Այս պաշտոնյան նույնիսկ Օրդուում է պահել այն ոստիկաններին, որոնց Հալեպի կուսակալն ուղարկել էր պաշտպանելու Քեսաբում գտնվող ամերիկահ-պատակներին և իտալահպատակներին, ոստիկաններ, որոնք իրենց հրամանատար Սելիան աղայի ղեկավարությամբ առիթն օգտագործել են Կալադուրան գյուղը կողոպտելու համար:

Դեպի Քեսաբ թուրքերի շարժվելու լուրն ստանալուն նեթ՝ վատորակ հրացաններով զինված 140 հայ դիրքավորվել են քաղաքի առջև, որպեսզի բնակչության մյուս մասին ժամանակ տան լեռներ հասնելու: Ավելի քան կես օր նրանք կարողացել են պաշարողներին անհաջողության մատնել, սակայն, ի վերջո, տեսնելով, որ իրենց դիրքերն արդեն շրջանցվել են բոլոր կողմերից՝ կարգ ու կանոնով ընկրկել են և այդ-ժամ գյուղն ամբողջությամբ ասպատակվել է:

«Գյուղ թափանցած թուրքերն ու արաբները, — պատմում է պ[արոն] Թրոուբրիջը, — կողոպտելու այնպիսի ծարավ ունեին, որ մոռացան անգամ հետապնդել քրիստոնյաների վերջապահներին... Կողոպտիչները վերջում նույնիսկ սկսեցին կռվել միմյանց հետ: Մետաքսի խանութներում արձանագրվեցին առանձնահատուկ վայրագ տեսարաններ: Տենդագին արագությանը նրանք տարան նաև անասուններին, ջորիներին, տնային սպասքը, հագուստեղենը, կտորեղենը, այնուհետև հրկիզեցին գյուղը... Նրանք այնքան էին կլանված կողոպուտով, որ առաջին օրվա ընթացքում սպանեցին միայն 153 հայի, որոնց մեծ մասը ծերեր ու հաշմանդամներ էին»:

Այդ ընթացքում, 5000 մարդ լքելով գյուղերը՝ բարձունքները ելան և այնտեղից՝ կիրճերի միջով կրկին իջան ծովափին գտնվող Կալադուրան:

«Այդ փախուստի մանրամասները սարսափելի են, — գրում է պ[արոն] Լեոպոլդ Ֆավրը: — Փոքր-ինչ մեկուսի գտնվող տներից մեկում թուրքերը շրջապատել են բնակիչներին: Մի երիտասարդ կին ասում է իր ամուսնուն. «Սպանիր ինձ, որպեսզի նրանց ձեռքը չընկնես»: Կիսով չափ ցնորված դժբախտը նրան սպանում է: Այդ տեսարանին ականատես նրա երիտասարդ քույրը՝ մինչև վերջերս գրեթե խելակորույս էր: Մեկ այլ տան՝ իր հիվանդ աղջկա կողքին մնացած հայրն այրվեց նրա հետ... Ամբողջ օրը թափառող մի խումբ կանայք երեկոյան մի թուրք ծերունու հանդիպեցին և ձնկներն ընկան՝ ճչալով. «Մեզ մի սպանեք»: Նա նրանց հանգստացրեց և մատնացույց արեց մի քարայր, որտեղ նրանք կարողացան թաքնվել: Սակայն, այդտեղով անցնող թուրքերի հրոսակախումբը կանգ առավ դրան շատ մոտ. նրանք սկսեցին վիճաբանել ավարի համար: Այդ պահին հայ կանանցից մեկի տասն օրական երեխան սկսեց ճչալ: Մյուս կանայք սարսափահար նրան ասում էին. «Ձայնը կտրիր, այլապես կորած ենք»: Մեկ րոպե անց մանկիկը լռեց: Հաջորդ առավոտյան, երբ թուրքերը հեռացան, կանայք մորը հարցրին. «Ինչպե՞ս նրան լռեցրիր»: Մայրը նրանց պատասխանեց. «Նայե՛ք, նրան»: Երեխան մահացել էր մոր ձնկներին. նա նրան խեղդել էր»:

Հավաքվելով Բագիթի ծոցում՝ Քեսաբի փախստականները ֆրանսիական «Ժյուլ Ֆերի»՝ զրահակիր նավով տեղափոխվեցին Լաթաքիա, որտեղ մահմեդական բնակչությունն արդեն կացիներ էր պատրաստում համընդհանուր կոտորածի համար: Մութասարիֆը մեծ ճիգերով կարողացավ խափանել այդ ծրագիրը: Մի քանի օր անց այդ կացիները չնչին գնով վաճառվում էին Լաթաքիայի շուկայում:

Ութն օր այս քաղաքում ճամբարելուց հետո՝ 5000 փախստականից բաղկացած այս խմբին պահակազորի ուղեկցությամբ տարան իրենց նախկին բնակավայրերը:

Նոյեմբերի 20-ին պ[արոն] Լ. Ֆավրը գրում էր.

«Ընչազրկությունը կատարյալ էր, պահպանվել էր տների միայն մի

մասը, իսկ մյուսներում այլևս չկային ո՛չ խոհանոցային սպասք, ո՛չ գեթ մեկ ներքնակ, ո՛չ սավանի կտոր, ոչինչ չկար: Այդ պահին բոլորը հավասար էին: Մարդիկ, որոնք, ինչպես դ[ոկտոր] Ապիկյանը կամ այլ երևելիներ, սեփական աշխատանքով կարողություն էին կուտակել, ունեցել էին լավ կահավորված գեղեցիկ տներ, փոքր կապիտալ էին ներդրել մետաքսի արտադրությունում՝ նույնքան ընչազուրկ էին, որքան ամենավերջին թշվառները, և նրանք այդպիսի վիճակում են առ այսօր: Նրանց վիճակն այնպիսին է, որ կառավարությունից օրական երեք սու են ստանում և հույսը դնում դրսից ուղարկվող օգնությունների վրա: Օ[րիոր]դ Չեմբերսը հրաշքներ էր գործում հագուստներ, ծածկոցներ և խոհանոցային սպասք ձեռք բերելու համար: Սակայն, այս պահին դեռևս հինգ-վեց հոգուն մեկական տանելի ներքնակից և վերմակից ավելին բաժին չի հասնում»:

Քեսաբում հրկիզվեց 530 տուն, Էփզոլուքում 60-ից՝ 40-ը, Դուզադաշում՝ 30-ը: Նույնչափ վնասվել են Բեյլանի և Ալեքսանդրետի արվարձանները՝ Արջայը, Նարզիզլիքը, Սուրբ Օլուքը, Քուլգելին: Քանլըդարիում հրի են մատնվել 33-ից 24 տուն, Աթիքում՝ 60-ից 58-ը, Կարականում՝ 66-ը և գրեթե նույնքան կրպակներ: Այս վերջին գյուղում կոտորել են առանձնահատուկ նողկալի եղանակներով: Հավատ ընծալելով մահմեդական շեյխ Օմար աղայի գրավոր խոստումին՝ հայերը հրաժարվել են ցանկացած դիմադրությունից և թույլ տվել, որ իրենց զինաթափեն, որից հետո նրանց հայտնել են, որ ազատ կարձակվեն միայն նրանք, ովքեր կընդունեն իսլամը: Մեծամասնությունը՝ հրաժարվելով կրոնափոխությունից, անգթորեն սրախողխող է արվել: Այլք, որոնք բացահայտորեն հայտարարել են մահմեդականությունն ընդունելու մասին, փոքր անց արժանացել են միևնույն ճակատագրին:

Ահա բողոքական առաքելության գեկուցագրերից ճշգրտորեն վերաշարադրվող հակիրճ հատվածներ.

«Նրանց ուղեկցեցին շեյխ Օմար աղայի «թեքքե»՝ Ծերունին նրանց նկատելով բացականչեց. «Այդ անհավատներին այստեղ մի բերեք»: Այս խոսքերը վերածվեցին հավաքական սպանության ազդանշանի, որն իսկույն ի կատար ածվեց... Կարախանից 99 տղամարդու կրկնակի սրախողխող արին...

Այնուհետև քրդերն առևանգեցին ամենաերիտասարդ կանանց: Կանանց և երեխաների մյուս մասը մնաց ծեր շեյխի մոտ, որը նրանց ավելի ուշ ետ ուղարկեց Բեյլան...

Մի քանի թուրքեր փորձեցին տիրանալ Էփլի Հովսեփ անունով նոր ամուսնացած մի երիտասարդ կնոջ, որին նրանք հենց նոր էին այրիացրել: Նրան մի քանի անգամ կապեցին ձիու թամբին, սակայն ամ-

\* Թուրք. — դերվիշի մենաստան: — Վ. Պ.:

բողջ ուժերով պաշտպանվելով՝ նա կարողացավ ազատվել կապանքներից: Ջայրացած թուրքերը նրան մերկացրին և այս կերպ ի ցույց դնելով բազմաթիվ ներկաների հայացքներին՝ լուտանքների ներքո սպանեցին ամենաբարբարոսական ձևով»:

Հալեայի նահանգի այլ վայրերում ևս մահմեդականները դիմեցին նմանօրինակ վայրագությունների: Ապրիլի 16-ին, բուն Մարաշում անակնկալի բերված քառասուն հայի փողոցներում բռնեցին, խոշտանգեցին և սպանեցին, սակայն կառավարիչը ժամանակին կանխեց սկսվող կոտորածը: Փոխարենը՝ Մարաշի շրջանում, մասնավորապես Քիչիֆիլիում, Օրշան օլյոտում և տասնվեց այլ գյուղերում, ազարակներում ու դաշտերում սպանեցին, կողոպտեցին և հրկիզեցին վայրագաբար:

Անդերինի կազայում ավերվեցին բազմաթիվ գյուղեր: Խնայվեցին միայն այն գյուղերը, որոնց բնակչությունն ընդունեց իսլամը...

Գյոքսունի դաշտավայրի հյուսիսային մասում կողոպտվեց հինգ գյուղ: Բնակիչները փախուստի դիմեցին՝ ապաստանելով մասամբ՝ Գյոքսունում, մասամբ՝ Ջեթունում: Գյոքսունը փրկվեց շնորհիվ կայմակամի դիրքորոշման և չերքեզների միջամտության, որոնք մի շաբաթ շարունակ՝ ամսի 17-ից 24-ը, գերազանց «մարտինի» տեսակի հրացաններով զինված՝ անհաջողության մատնեցին հազարավոր թուրքերի, քրդերի և այլ չերքեզների:

Բայց այստեղ դադարեցնենք սարսափների այս պատմությունը: Նշենք միայն, որ այս իրադարձությունները լայն արձագանք են գտել ամբողջ Փոքր Ասիայում: Դեռևս մայիս ամսին արյունալի խառնակությունների սպառնալիք կար Կարսում, Մալաթիայում, Դիարբեքիրում, Մուշում, Էրզրումում: Առանց համիդյան հետադիմական հեղաշրջման նկատմամբ երիտթուրքերի տարած հաղթանակի՝ կասկած իսկ չի կարող լինել, որ կոտորածը կտարածվեր ամբողջ Անատոլիայում:



Հալեպում Ֆրանսիայի հյուպատոս պ[արոն] Ռոբեֆերին, որը եղել է 1895 թ. Էրզրումի կոտորածների ակնամատեններից, խոսելով կիլիկյան իրադարձությունների մասին՝ ասել է. «Ես կարծում էի, որ տեսել եմ այն բոլոր սարսափները, ինչը մարդկային էակը կարող է տեսնել: Այն, ինչ տեսա այս անգամ՝ զերազանցեց դրանց»<sup>58</sup>: Տարբեր այլ վկաններ միևնույն կարծիքին են: Հայերի՝ Ելզըզից հրահանգված նախորդ կոտորածներն իրականացվել են ըստ ազդանշանի և ամենուր դադարել սահմանված օրը՝ հարմար պահին, երբ արյունահեղությունը համարվել է բավարար: Այս կոտորածներն ամենևին ժողովրդական շարժման վկայություններ չէին և դրանց վրա բացահայտորեն իրենց դրոշմը թողած հակաքրիստոնեական դրսևորումները միանգամայն արհեստածին էին, պայմանավորված գործողության անհրաժեշտությամբ: Ադանայում նկատելի է եղել միևնույն կանխամտածվածությունը. այստեղ ևս գործը նախապատրաստվել և իրականացվել է ըստ հրահանգի: Բայց այս անգամ թուրքերին իրոք բնորոշ էր հայատյացության պողոթյունը և նկատելի էր մահմեդական մոլեռանդության ճգնաժամը, որոնք պայմանավորված էին վերը շարադրված բազմաթիվ պատճառներով և հատկապես այն գաղափարով, որ սահմանադրական վարչակարգի օրոք իսլամը կարող էր կախման մեջ լինել քրիստոնեությունից: Սրանով են բացատրվում Կիլիկիայի կոտորածի առանձնահատուկ սաստկությունը և համեմատաբար սահմանափակ տարածքում այդչափ մեծ թվով զոհերի առկայությունը:

Այս հանցափորձի հաջորդ օրը [Բարձր] Դուռը գործակալությունների միջոցով արևմտյան մասնուլին փոխանցեց հետևյալ ճեպագիրը<sup>59</sup>.

«Ըստ Ադանայի կառավարչի հեռագրի՝ այս ամբողջ նահանգում կարող էին լինել 1455 սպանված և 382 վիրավոր հայեր, այն դեպքում, երբ մահմեդականները կարող էին ավելի տուժած լինել և ունենալ 1924 սպանված ու 533 վիրավոր»:

<sup>58</sup> Կաթոլիկ միսիոներների զեկուցագրեր:9  
<sup>59</sup> «Le Temps», 12 mai 1909. Թերթերի մեծ մասը տպեց այս ճեպագիրը՝ «ոչ պաշտոնական սկզբնաղբյուրից» նշումով:

Ավելի ուշ երիտթուրքական կառավարությունն ընդունեց, որ այդտեղ սխալ է թույլ տրվել և ուղղում կատարեց՝ խոստովանելով, որ սպանվել է 5249 հայ: Սակայն այս թիվը դեռևս մեծապես զիջում է իսկությանը:

Մի կողմ թողնենք միսիոներների զեկուցագրերը, որոնք սովորաբար նշում են 25000-ից 30000 սպանվածի մասին: Ահա նախ արտաքին գործերի նախարար պ[արոն] Պիշոնի՝ 1909 թ. մայիսի 17-ի հայտարարությունը ֆրանսիական խորհրդարանում.

«Դժվար կլինի ճշգրտել զոհերի թիվը: Ըստ արտաքին գործերի բաժնից ստացված հաղորդագրությունների՝ դրանք գերազանցում են բազում հազարները, հավանաբար՝ քսան հազարը»:

Հայացք նետենք առաջին զեկուցագրի վրա, որն ապրիլի 22-ին Անգլիայի հյուպատոս մայոր Դաուրի-Ուայլին հղել է իր ղեկավարին՝ Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի դեսպանին: Ահա վերջին պարբերությունը.

«... Թվում է, թե Ադանա քաղաքում կարող էին հուղարկավորված լինել մոտավորապես 2000 մահացածներ: Բացի այդ, մեծ թվով դիեր նետվել են գետը: Այս 2000-ի ահռելի մասը փողոցներում սպանված մահմեդականներն էին, որոնք կրակում էին հայկական թաղամասում»<sup>60</sup>:

Գյուղերի կրած հսկայական կորուստների առնչությամբ ոչ ոք դեռևս չի կարողանա ճշգրիտ թիվ սահմանել: Ես կարծում եմ, որ դրանց թիվը կարող էր հասնել 15000-ից 25000-ի: Վերջիններիս թվում կան շատ քիչ մահմեդականներ, եթե դրանց թվում այդպիսիք կարող էին լինել: (Of these very few if any can be Moslems)»<sup>61</sup>.

Ադանայի կոտորածներից անմիջապես հետո գրված այս զեկուցագիրը վերաբերում է միայն խառնակությունների առաջին փուլին: Ապրիլի 22-ի՝ 25000-ի հասնող թիվը չափազանցված է: Բայց 15000 թիվն, անկասկած, մոտ էր իսկությանը<sup>61</sup>:

Ահա Կոստանդնուպոլսի հայկական լուսավորչական պատրիարքության՝ 1909 թ. սեպտեմբերին հրապարակած վիճակագրությունը, նրա պատվիրակների՝ տեղում կատարված հետաքննությունից հետո.

<sup>60</sup> Շիշում ենք, որ Ադանայի առաջին կոտորածների ընթացքում հայերի ինքնապաշտպանության արդյունքում կորուստներ պատճառվեցին մահմեդականներին:  
<sup>61</sup> Անգլ. – եթե այս փոքրաթիվ անձանց թվում ոմանք կարող էին մահմեդական լինել: – Վ. Պ.:  
<sup>61</sup> Մենք չկարողացանք տեղեկանալ այն զեկուցագրին, որտեղ պ[արոն] Դաուրի-Ուայլին ներկայացրել է վերջնական վիճակագրությունը:

Լուսավորչական հայեր.....	} 18839
կաթոլիկ » .....	
բողոքական » .....	
հույներ.....	1250
ասորիներ.....	850
քաղղեացիներ.....	422
<b>Ընդհանուր թիվը`</b> .....	<b>21361</b>

Հունիս ամսին երկու պատգամավորի՝ հայազգի Պապիկյանին և թուրք Յուսուֆ Քեմալին, օսմանյան խորհրդարանը հանձնարարել է իրադարձությունների թատերաբեմում հետաքննություն իրականացնել: Ահա նրանց ամփոփագրերը, ըստ այն կարգի՝ ինչպես դրանք գրի են առնրված նրանց համապատասխան զեկուցագրերում.

<b>Պապիկյանի թվերը</b>		<b>Յուսուֆ Քեմալի թվերը</b>	
Լուսավորչական հայեր } 17975		(Աղանայի վիլայեթ)	
բողոքական » } 655		մահմեդականներ.....	1186
կաթոլիկ » } 210		լուսավորչական հայեր } 4597	
հույներ, ասորիներ, քաղղեացիներ.....	745	բողոքական » } 4597	
մահմեդականներ.....	620	կաթոլիկ » } 4597	
		ասորիներ.....	418
		կաթոլիկ ».....	62
		քաղղեացիներ.....	133
		հույներ.....	33
		(Հալեպի վիլայեթ)	
		մահմեդականներ.....	11
		կասկածելիներ (*).....	75
		հայեր.....	566

Արդյունքում.		<b>Յուսուֆ Քեմալի</b>	
<b>Պապիկյանի տվյալները</b>		<b>տվյալները</b>	
մահմեդականներ.....	620	մահմեդականներ.....	1197
տարբեր քրիստոնյաներ.....	745	տարբեր քրիստոնյաներ...	646
հայեր.....	18660	հայեր.....	5153

Սպանված հայերին վերաբերող այս երկու տվյալի միջև տարբերությունն ահռելի է: Պապիկյանի տվյալները գրեթե մոտենում են պ[արոն] Պիշոնի ներկայացրած մոտավոր թվին (նույնիսկ դրանից նվազ են), հայկական պատրիարքության վիճակագրությանը, թե՛ անգլիացի հյուպատոսի սեղմ և թե՛ միսիոներների հաշվարկներին: Յուսուֆ Քեմալը

երկու վիլայեթում նշել է 5153 հայի մասին: Մինչդեռ միայն Աղանա քաղաքում առաջին և երկրորդ կոտորածների միջև եղել են ավելի քան 5000 սպանված և հրկիզված հայեր: Դժբախտաբար հարկ է ընդունել, որ մահացածների թիվը հասնում է նվազագույնը 20000-ի:

\*\*\*

Մոտավոր հանրագումարը սահմանելու համար հարկ չկա սահմանափակվել միայն կենտրոններում, քաղաքներում կամ գյուղերում կոտորածի մասին կազմված ամփոփագրերով: Աղանայի վիլայեթի մերձակայքում կամ նույնիսկ դրանից հեռու շատ բնակավայրեր կան, որոնք երբեք չեն վնասվել, բայց մեծ զրկանքներ են կրել: Գարնանն Անատոլիայի բոլոր ծայրերից հազարավոր հայ մշակներ էին գալիս Կիլիկիայի դաշտավայր՝ հրապուրված դաշտային աշխատանքներով: Վերջին սպրիլ ամսին այդտեղ նրանցից ավելի քան 15000-ը կար, որոնք զբաղված էին հիմնականում բամբակի քաղհանով: Նրանք այդտեղ էին եկել նույնիսկ Սվազից, Բայբուրթից և Էրզրումից: Նրանցից շատերը, հանկարծակիի գալով ազարակներում, դաշտերում, պանդոկներում, մեծ ճանապարհների վրա արժանացան տեղի բնակչության ճակատագրին: Խարբերդի շրջանում, որտեղ կուսակալի ձեռնարկած միջոցների շնորհիվ կարգուկանոնը չէր խախտվել՝ բացակայում են 1000 մարդ: Մարաշի շրջանում, որտեղ հարաբերական առումով քիչ են սպանել, 700-ը՝ մեծամասնությունը, սրախողխող է արվել հարթավայրում: Միևնույն վիճակում է Հաճնի տարածաշրջանը, որտեղ արձանագրել են ավելի քան 1500 մահացածի: Փոքր գյուղերում, որտեղ ոչ մի համազարկ չի արձակվել, չի մնացել գեթ մեկ մարտունակ տղամարդ: Այս կերպ՝ Կեսարիայի և Սվազի միջև, ողբերգության թատերաբեմից բազում կիլոմետրեր հեռու, Գեմերեքը կորցրել է 250 մարդու, Շեֆրինը՝ 100-ի, Բուրհանը՝ 50-ի: Հարավում՝ Հալեպի վիլայեթի հինգ գյուղ, որոնք Սուեդիեի ծոցում գտնվող եվրոպական ռազմանավերի ներկայության շնորհիվ չեն ենթարկվել ոչ կողոպուտի և ոչ նույնիսկ հարձակման, կորցրել են 97 մարդու, որոնց կացնով սպանել են անտառում, իսկ 61 այլը՝ անհետ կորել են: Կարող ենք նշել համանման շատ դեպքեր, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել՝ երբ հաշվառում ենք սպանված մարդկանց: Այսպիսով, մենք կարող ենք վստահ լինել, որ չենք չափազանցնի, եթե սպրիլի 14-ից 30-ն ընկած ժամանակահատվածում ընդունենք սպանված և հրկիզված հայերի՝ նվազագույնը 20000-ի հասնող թիվը: Բայց մտայլ թվարկումը դրանով չի ավարտվում: Հարկ է դեռ այդ ցուցակում ընդգրկել բոլոր նրանց, ովքեր փախչելով մարդասպաններից և հրձիգներից, ավելի ուշ մահացել են վերքերից, սովից և հատկապես դիախոտից վարակված գյուղերում և

ճամբարներում բռնկված համաճարակներից, որտեղ կենտրոնացված էին վերապրողները:

Օգոստոսի 11-ին պ[արոն] Դաուրի-Ուայլին անձնական նամակներից մեկում գրում էր, որ «միայն Ադանա քաղաքում կային 19000 սովյալ»: Պ[արոն] Չեմբերսն օգոստոսի 5-ի թվակիր նամակում նշում էր. «7000 հայ մահվան սպառնալիքի տակ են»:

Ահա մի հատված կաթոլիկ առաքելության՝ Փարիզի «Արևելքի բարեգործական ընկերությանը» հղած զեկուցագրից.

«Այնտեղ՝ մի դաշտում, առանց ծածկի կուտակվել են հազարավոր անձինք: Այս դժբախտները մնացել են առանց հացի, առանց հագուստի: Ամեն օր կարմրուկից, տենդից, ջրծաղկից, հատկապես սովից մահանում են քսան, երեսուն երեխա: Վիրավորները խնամքի պակասի հետևանքով հոգևոր են ապրում...»:

Ահա մի հատված ամերիկյան առաքելության զեկուցագրից.

«Մենք անցնում ենք դաշտով... Գիշերը կանայք ծածկում են իրենց երեխաներին խոճուկ ցնցոտիներով կամ խոտերով: Այլք՝ կքված, ցրտից դողահար ձեռքերով ամուր գրկում են իրենց երեխաներին... Մի մարդ փորձում է քամուց պաշտպանել չորս որբի՝ նրանցից յուրաքանչյուրին տալով պարկի մի կտոր... Երեկ տասնհինգ երեխա մահացան կարմրուկից, երկու նորածին՝ սովից...»<sup>62</sup>:

Շրջանների ճամբարներում և գյուղերում առկա էին միևնույն տեսարանները:

Հոկտեմբերի 31-ին պ[արոն] Լեոպոլդ Ֆավրը գրում էր Մարաշից.

«Երեկ չէ առաջին օրը գերմանական հիվանդանոցի ղեկավար սարկավագուհին մի քանի ժամ անցկացրեց Մարաշից չորս կիլոմետր հեռավորության վրա գտնվող գյուղերից մեկում: Դա 70 տնից բաղկացած գյուղ է: Յուրաքանչյուր տան կային դիզենտերիայի ամենասուր համաճարակով վարակված՝ տարբեր տարիքի չորս կամ հինգ հիվանդ: Այս մարդիկ վաղուց ի վեր սնվում էին արմատներով և ինչ-որ մի հաստ տեսակի խոտով: Նրանց գյուղը հրկիզվել էր, իսկ նոր տները կամ ավելի ստույգ՝ ապաստարանները, շատ վտանգավոր էին

<sup>62</sup> Մեկ այլ վկայից. «Մի քանիսը կիսով չափ այրված փայտի կտորներ են բերում ճամբարներում մի քիչ կրակ վառելու համար: Նրանք, այդպիսով, կսկիծով այրում են այն, ինչը մնացել է իրենց տներից և կահույքներից: Ինչպես մուրացկաններ՝ նրանք հավաքում են նաև արյունոտ կամ սևացած ցնցոտիներ, որոնք նրանց կատարյալ ընչազրկության պայմաններում արժեքավոր մնացորդներ են...»

... Այս վերջին օրերին նրանց սովեցին մի քանի վրաններ, որտեղ նրանք սեղմվում են միմյանց՝ շնչասպառ լինելու աստիճան, բայց այս մարդկանց համար դա քիչ է: Այլք պատկում են բաց երկնքի տակ, գետնին՝ ծառերի կամ տարածած վերարկուների տակ, ցողից պաշտպանվելու համար, քանի որ Արևելքի ցերեկային ճնշող տապից հետո ձյունապատ լեռներից սառը զովություն է սփռվում դաշտավայրի վրա և թափանցում՝ հարմարավետությանը սովոր, այս խեղճ քաղաքարևակների մարմինները: Իսկ հիվանդությունները նրանց հնձում են: Եթև սա երկար տևեր, ապա որոշ ժամանակ անց նրանցից այլևս ոչ ոք չէր մնա...»: Au pays des massacres, par Jean d'Annezay [ , p. 13, 18].

առողջության համար: 400 բնակչի համար նրանք միայն քսան ներքնակ ունեն և գրեթե ոչ մի ծածկոց: Շատ շրջաններում այս հայերը կմահանան թշվառությունից, վատ սննդից, ցանկացած հիվանդություններից և այդուհանդերձ նրանք անհավատալիորեն տոկուն են: Դա խոցում է մարդու սիրտը: Ցանկանում էինք բոլորին օգնության հասնել, բայց զգում էինք, որ այն ինչ անում էինք՝ ժամանակավոր լուծում էր»:

Օգոստոսի վերջին Կոստանդնուպոլսի «Բայրլ Հաուզն» Ադանայից մի ցուցակ է ստանում, ուր նշված էր սովյալների և օգնության կարիք ունեցող չքավորների թիվը: Ահա մի քանի թվեր. Ադանայում կային 20000-ը, Մարաշում՝ 14000-ը, Ալեքսանդրետում և Դյորթ Յուլում՝ 9000-ը, Քեսաբում՝ 3000-ը, Բայսեզում՝ 1500-ը, Տարսուհի, Մերսինի և Անտիոքի միջև՝ բազում հազարներ և այլն, և այլն:

\*\*\*

Ջոհերի սյունակում հարկ է նաև ներառել բոլոր նրանց, ովքեր այդ դժոխքից փրկվել են խեղված կամ հաշմանդամ և ցանկացած աշխատանքի համար ոչ պիտանի դարձած, նրանց, ովքեր խելագարվել են, ինչպես նաև դավանափոխ կանանց և երեխաներին, առևանգված, անարգված, դաժան և անասնական ճակատագրի արժանացած՝ մեկընդմիջտ փակի տակ պահվող երիտասարդ աղջիկներին: Կիլիկիայում երիտասարդ աղջիկների առատ «հունձք» է կատարվել, որոնցից ոմանք վաճառվել են խմբովի կամ առանձին: Կոտորածից մեկ ամիս անց Սվազ է եկել (ուր Ադանայից կարելի էր հասնել ինն օր քայլելուց հետո), իբրև ստրուկներ գնված կույսերի մի թափոր: Կենդանի մարդկանցից բաղկացած այլ ուղեբեռներ ուղարկվել են Անատոլիայի տարբեր վայրեր: Ավելի ուշ, հայկական հոգևոր իշխանությունների բողոքների արդյունքում, կողոպտիչներն ու առևտրականները հարկադրված են եղել վերադարձնել իրենց ավարի մի մասը: Սակայն ինչպիսի ողբալի կացության մեջ էին գտնվում մեծ մասամբ դեռատի մանուկներից բաղկացած այս դժբախտները<sup>63</sup>: Գրեթե բոլորը ճաշակել էին պատվազրկության պտուղը: Նրանց թվում կային այնպիսիք, որոնք ինքնասպան են եղել, այլոց՝ խնամելու համար հավաքել են աղքատանոցներում: Կոստանդնուպոլսում հայկական ընկերության կանայք կազմակերպել են բարեգործական մի հաստատություն, որտեղ Կիլիկիայի որբերը, որոնցից շատերը հազիվ տասներկու տարեկան են, սպասում են իրենց ազատագրմանը:

<sup>63</sup> «Ցածր խավի մահմեդականները, - գրում է պ[արոն] Ժան դ'Անգեն, - անամոթաբար պարծենում են իրենց գործած յուրաքանչյուր ոճրով: Երևելիները, որոնք ավելի զգույշ են, դրանց մասին խոսում են միայն նեղ շրջանակներում: Նրանցից մեկը մի եվրոպացու ներկայությամբ ծիծաղելով ասում էր, որ սկսած տաս տարեկանից՝ հայ աղջիկներ այլևս չկան, կան միայն կանայք»: Նույն տեղում [ , էջ 29-30]:

\*\*\*

Մինչ կոտորածը շարունակվում էր՝ ծովափնյա բնակչության մի մասը երկրից փախուստի դիմեց: Ոչինչ չէր կարող ավելի խղճահարույց տեսարան ներկայացնել, քան այս ժողովրդի մասը կազմող՝ բախտի քմահաճույքին մատնված, իրենց ապաստանած նավերի հայեցողությանը թողնված այս թշվառ մարդիկ:

«Սարսափից, հոգնածությունից և սովից կիսամեռ մարդկանց մեծ մասն այլևս շատ բան չէր հիշում: Բազմաթիվ մարդկանցից երկար ու ձիգ օրեր պահանջվեց հիշողությունը վերականգնելու համար: Ոմանք չգիտեին, թե ողբերգությունից առաջ քանի հոգուց է բաղկացած եղել իրենց ընտանիքը և հաճախ անհրաժեշտ եղան շաբաթներ՝ ոչ թե քանդված, այլ պարզապես ցրված օջախը վերակազմելու համար: Մահացած համարվող մի մարդ հասել էր Եգիպտոս, այն դեպքում, երբ նրա կինը փախել էր Կիպրոս, իսկ երեխաները՝ Սիրիա»<sup>64</sup>:

Չնայած երկիրը լքելու արգելքին՝ Կիպրոս, Լիբանան, Եգիպտոս, Ամերիկա են հասել նաև նրանք, որոնց հաջողվել է խառնակությունների հաջորդ օրը փրկվել: Ամռան ընթացքում Կահիրեի և Ալեքսանդրիայի հայկական եկեղեցիները լի էին գաղթականներով, «որոնցից շատերը չէին կարողացել փոխել իրենց անկողինն ապրիլ ամսվա իրադարձություններից ի վեր»<sup>65</sup>: Դրանից հետո նրանց մեծ մասը որոշեց վերադառնալ հայրենի երկիր և փորձել այդտեղ վերսկսել իր կյանքը: Նրանք այդտեղ հազիվ գտան այն, ինչով կարելի էր պատսպարվել:

«Վատ եղանակը և ավելի ցուրտ գիշերները թույլ չեն տալիս այլևս ապրել վրանների տակ, ինչպես լավ օրերին: Այսպիսով, ընտանիքների մասնատված կամ ցրված այս բոլոր ծվեններն աստիճանաբար հեղեղեցին Ադանան, որն իր բնակիչներին ընդունելու և բնակեցնելու համար միայն տձև ավերակներ ուներ: Այս բոլոր դժբախտներն այժմ վխտում են աղտոտ խրճիթներում:

Քսան քառակուսի մետրից փոքր մի բակում ես հաշվեցի վաթսուն մարդու. այդտեղ որպես հատակ էր ծառայում գետինը, չկար նույնիսկ խսիր, որն ամենուր, նույնիսկ ամենադժար տներում էր լինում: Ծածկի դեր էր կատարում մի վնասված տանիք, որը մաղի պես ջուր էր թողնում: Խեղճ մարդիկ: Բաց դաշտում ավելի լավ կլիներ. այնտեղ բորբոսն ավելի քիչ կլիներ և շնչելու ավելի շատ օդ կունենային:

Եթե դուք այրված թաղամասերն այցելելու հետաքրքրություն ունենայիք՝ անակնկալի կգայիք, ինչպես ամռանը ես, տեսնելով ավերակների խորքից ի հայտ եկող կքված ստվերների, որոնք խմբվել էին սև ու ցածր տանիքի նման ինչ-որ մի բանի տակ, որի ցածր դիրքն այն պաշտպանել էր հրդեհից և որն այժմ ծառայում էր իբրև թաքստոց ու ապաստան իր սեփականատերերի համար: Բվերի այս բնում է, որ

նրանք պետք է սարսուռն ձմռանը և սպասեն լավ օրերի»<sup>66</sup>:

Ադանա քաղաքում հրի են մատնվել 1190 տուն, հինգ դպրոց, վեց եկեղեցի, հայկական ամբողջ շուկան: Մենք տեսանք, որ Տարսնում՝ 800, Հասան-Բեյլիում՝ 416, Բախչեում՝ 115, Լափաջլում՝ 120, Ինջիրլիկում՝ 145, Օսմանիեում 200 տներ էին հրկիզվել, բազմաթիվ գյուղաքաղաքներում, գյուղերում և ավաններում այլևս ոչ մի տուն կանգուն չէր մնացել: Միայն Ջերբե Բերեբեթի շրջանում 915 կացարան (չհաշված կրպակներն ու արհեստանոցները), վեց եկեղեցի, 12 դպրոց հրի ճարակ են դարձել: Պատգամավոր Յուսուֆ Բեմալն իր զեկուցագրում նշել է, որ հարկ է Կիլիկիայում վերակառուցել 5189 շինություն: Այս թիվը դեռ շատ ավելի նվազ է իրական պատկերից: Ադանայում հետաքննություն իրականացրած մի երիտթուրք՝ ցանկանալով մեղմել արհավիրքի լրջությունը, ինձ բացատրեց, որ այդ տների մեծ մասն աղյուսից և ցեխից կառուցված ողորմելի՝ անարժեք խրճիթներ էին: Դա ինչ նշանակություն ունի, երբ դրանք ապաստան էին ծառայում ընտանիքի համար: Բացի այդ, ոչ միայն այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են Ադանան, Տարսնը կամ Անտիոքը, այլև նույնիսկ՝ այսօր փլատակների վերածված գյուղերում, ոչ հեռավոր անցյալում խոյանում էին քարակերտ գեղեցիկ տներ, որմնապատ ամուր շինություններ: Վերջապես չմոռանանք, որ խոսքը միայն ավերված օջախների մասին չէ, այլև անայացած դաշտերի, գողացված երկրագործական մեքենաների, անասունների, ապրանքների, կահույքի, կարճ ասած՝ ոչնչացման, սարսափելի ամայացման: Բարեկեցիկ, հարմարավետ, բարգավաճ կյանքով ապրած այս ժողովուրդն այսօր գտնվում է կատարյալ ընչազրկության և թշվառության մեջ, որն առավել ևս տագնապալից է, եթե նկատի ունենանք, որ հարվածել են նրա գլխին, նրան զրկել հատկապես հայրերից և ընտանիքի նեցուկներից:

<sup>66</sup> Կաթոլիկ առաքելության զեկուցագիր (« Œuvre d'Orient » de Paris):

<sup>64</sup> « La Revue », 1<sup>er</sup> nov[embre] 1909, Les Vêpres ciliciennes, par Georges Vayssié.

<sup>65</sup> Կաթոլիկ առաքելության զեկուցագիր (« Œuvre d'Orient » de Paris):

Կիլիկիայում տեղի ունեցած վայրագությունների հաջորդ օրը [Բարձր] Դուռը պաշտոնանկ է արել գլխավոր կառավարիչ Ջևահիրն, զինվորական հրամանատար զեներալ Ռեմզիին, որոնց փոխարինել են համապատասխանաբար՝ քուրդ Ջիհնի փաշա Բաբան-գադեն (որի նշանակման դեմ բողոքել է Հայոց պատրիարքությունը) և երիտթուրք գնդապետ Մեհմեդ Ալի բեյը: Կոտորածին մասնակցած զինվորներին և անկանոն զորքը ցրել են, կարգ ու կանոնը որոշ չափով վերահաստատվել է, հայտարարվել է պաշարողական դրություն: Տեղեկացվել է նաև հանցավորներին շատ խիստ պատժելու մտադրության մասին: Իրականում, իրադարձություններն ահա, թե ինչպիսի ընթացք են ստացել:

«Դժբախտաբար ավելի քան ստույգ է, որ նոր կառավարիչները շատ ավելի զբաղվեցին հայերին մեղադրելով, քան իրական հանցավորներին փնտրելով: Հայերին ձերբակալեցին հարյուրներով, մինչդեռ կոտորածների սաղորդիչները մնում են անպատիժ և նույնիսկ համարձակորեն ղեկավարում արդարադատությունը»<sup>66</sup>:

Վկայություններն առ այն, թե ինչպես հետամուտ եղան արդարադատությանը՝ բազմաթիվ են և համանման: Ահա տ[իլի]ն Դաուրի-Ուայլիի վկայությունը.

«Թուրքական իշխանությունների ամբողջ գործունեությունը հանգեց խեղճ և անմեղ հայերի ձերբակալությանը և խոշտանգումների կիրառմանն այնքան, մինչ կարողանային նրանցից խոստովանություններ կորզել՝ նրանց կարծեցյալ հանցանքների վերաբերյալ: Երեկ մի հաշմանդամի, որին ինձ մոտ էին բերում, ճանապարհին ձերբակալեցին և բանտ տարան: Չեմ համարձակվում խորհել նրա ճակատագրի մասին...»:

Հայոց պատրիարքության նշանակած հանձնաժողովը, որին հանձնարարվել էր մայիսին հետաքննություն իրականացնել, իրավիճակի մասին հաշվետվություն է ներկայացրել հետևյալ ձևակերպումներով, որոնք (հետո կտեսնենք), բացարձակապես չափազանցված չէին:

«Մենք իրավասու ենք ձեզ վստահեցնել, որ ռազմական օրենքը

բացահայտորեն կիրառվել է միայն հայերի նկատմամբ: Թուրքերը և, մասնավորապես, կոտորածների հիմնական նախաձեռնողներն ազատ շրջում են քաղաքներում: «Իթիդալ» թերթը շարունակում է հայերի դեմ թուրքերին հրահրելու բնույթ կրող հողվածներ հրատարակել: Մենք դիմեցինք իշխանություններին խնդրանքով՝ վերջ դնել այս թերթի վտանգավոր արշավին, սակայն մեր բողոքը մնաց անարդյունք: Մենք կազմեցինք մի հատուկ հանձնաժողով, որը մեզ օգնեց մեր առաքելության իրականացման հարցում: Բայց տեղական իշխանությունը ձերբակալեց և բանտարկեց այս հանձնաժողովի անդամներից մեկին՝ պ[արոն] Գևորգ Գույումջյանին: Միաժամանակ ձերբակալեցին Մերսինի երևելիներից մեկին՝ պ[արոն] Տիգրան Աշիկյանին...

... Մի վայրից մյուսը տեղափոխվել ցանկացող հայերին որևէ դյուրամատչելիություն չընձեռվեց: Նրանք գուրկ էին փոքր-ինչ անվտանգությունից: Աղանայում գտնվող՝ հետաքննությունն իրականացնող հանձնաժողովը, կշամբեց կաթուղի և հույն արքեպիսկոպոսներին՝ տիրող իրավիճակի վերաբերյալ փոխանցած ճեպագրերի համար: «Միություն և առաջադիմության» տեղական կոմիտեի նախագահը<sup>68</sup>, որը երկաթուղիների տնօրինության գործակալ է, շատ վատ է իրականացնում իր պարտականությունները»<sup>69</sup>:

Կոտորածների գլխավոր հեղինակներից Աբդուլ Քադերը, նրա որդի Իհսան Ֆիքրին<sup>70</sup>, Իսմայիլ Սեֆան, Գյուլեթլի Թյուֆիքը, Բոշնակզադե Սալիհը, Բաթումլու Օսմանը և այլ թուրք ղեկավարներ, մարդասպաններ, ծառայողներ ու պաշտոնյաներ, նրանց հանցակիցները, բոլորն ազատության մեջ էին: Ճակատագրի նուրբ հեգնանքով Աբդուլ Քադերին հանձնարարվել է նախագահել տուժածների օգնության օսմանյան կոմիտեի նման ինչ-որ մի բան: Այդ առիթով մի եվրոպացի իր զարմանքն է հայտնել կուսակալ Ջիհնի փաշային, ուստի վերջինս կրքոտությամբ պատասխանել է, որ Աբդուլ Քադերն Աղանայի ամենահարգարժան քաղաքացին է:

Այն մասին, թե ինչպես են գործել որոշ «օգնության կոմիտեներ», վկաներից մեկն ինձ պատմեց հետևյալը.

«Կանայք ներկայանում էին նպաստ ստանալու համար: Նրանք հարցրին.

<sup>66</sup> Ջեկուցագիր Մերսինից:

<sup>69</sup> Խոսքը ոմն Օսման բեյի մասին է, որն ակտիվ մասնակցություն է ունեցել Տարսոն-Մերսինի տարածաշրջանում տեղի ունեցած կոտորածներին:

<sup>70</sup> «Իհսան Ֆիքրին գլուխը կորցրել էր, ինչպես որսորդն իր վարի առջև: Այդ երեկո բազմաքանակ մահմեդական հանրության առջև նա արտասանեց Սալջիլարի իր հայրնի ճառը, որը կարծես գորավարի կոչ լիներ ուղղված իր բանակին: Ես կարող եմ ձեռք սրտիս դրած ասել, որ կոտորածի գլխավոր պատասխանատուն Իհսան Ֆիքրին է»: (Այս ամբողջ գործի ընթացքում իրեն հիանալի դրսևորած օսմանյան պաշտոնյա Հուսեյն Դայիմ բեյի՝ Աղանայի նախկին «պաղի» բեյի (alai-bey), հայտարարությունները Կահիրեի «Լուսաբեր-Արևիկ», 1-ը նոյեմբերի 1909 թ.):

- Ո՞րտեղ է ձեր ամուսինը:
- Սպանված է:
- Ձեր որդին:
- Սպանված է:
- Անհնար է պաշտպանել ձեր իրավունքները, որովհետև տղամարդու կողմից չեք ներկայացված»:

Նրանք ետ ուղարկվեցին առանց այլևայլության:

Այլ կոմիտեների հանձնարարվել է տուժած բնակավայրերում իրակա-

նացնել ավարը վերադարձնելու դժվարին գործողության հսկողությունը: «Ձևացնում էին, թե վերադարձնում են գողացված իրերի մի մասը, սակայն այն ամենը, ինչն արժեքավոր էր, ուղարկվել էր հեռու և պահվել ապահով վայրում: Շատ դեպքերում հայտնի կողոպտիչները նույնիսկ չեն անհանգստանում և բացահայտորեն ու անպատիժ օգտագործում են, օրինակ, տնային գույքը՝ դրանց սեփականատերերի աչքի առջև: Քանի որ շատ վայրերում այս կամ այն ընտանիքի բոլոր անդամները ոչնչացվել էին, հաճախ էին դեպքերը, երբ չկար կողոպտված որևէ մեկը՝ որ գանգառվեր»:

Ամերիկյան զեկուցագրի այս հատվածը հաստատում են տարբեր միսիոներների և միջազգային օգնության կոմիտեների պատվիրակության անդամների նամակները: Այնուամենայնիվ հարկ է նշել որոշ թուրք պաշտոնյաների գործադրած ջանքերը՝ միտված թալանված իրերը կողոպտիչներից ետ վերցնելուն: Քեսարում Հալեայի զինվորական կառավարչի քարտուղարն արտասովոր եռանդով հետապնդել է մեղավորներին և կարողացել հայ գյուղացիներին հանձնել գողացված ունեցվածքի մի մասն ու ոչխարների մեկ քառորդը:

Բարեխիղճ և առավել ևս գովեստի արժանի պաշտոնյաների այս գործողությունները, որոնք անդրդվելի կերպով, կանխամտածված՝ թե ոչ, հակադրվում էին կառավարական անձնակազմի մեծամասնությանը, շատ չեն եղել: Ընդհանրապես, հնարավոր չէ ներկայացնել իշխանությունների վերաբերմունքը չքավորների, սովյակների, հիվանդների և վիրավորների նկատմամբ: Այս բոլոր թշվառների վիճակը շատ ավելի ցավալի կլիներ, եթե չգտնվեին տղամարդիկ և կանայք (կոտորածների ժամանակ քաջության ապացույցներ ի հայտ բերած այդ նույն միսիոներները և մի քանի վաճառականներ ու արտասահմանցի կամ տեղացի արդյունաբերողներ), որոնք փորձել են օգնել նման արհավիրքների հետևանքների վերացմանը: Մայր Դաուֆի-Ուայլիի և նրա հիասքանչ տիկնոջ գլխավորությամբ ստեղծվում է կոմիտե, որը կազմակերպում է հիվանդանոցներ, որբանոցներ, համակենտրոնացման ճամբարներ: Դրանց դրամական միջոցներն ստացվել են Անգլիայից, Ֆրանսիայից, Շվեյցարիայից, Ամերիկայից և Կոստանդնուպոլսից: Օսմանյան խորհրդարանն իր կողմից որոշումներ է ընդունել ի նպաստ տուժածների՝ հաջորդաբար 30000 և 200000 թ[ուրքական] ո[սկու] սահմանում

վարկեր տրամադրելու մասին, ինչպես նաև՝ դպրոցների և տների վերակառուցման համար: Դժբախտաբար այդ օգնություններն ամենևին բավարար չեն և չնայած միջազգային բարեգոթության պոթեկումին, կոմիտեի անդամների հիասքանչ նվիրվածությանը, մարդիկ բառացիորեն մահացել են քաղցից: Ավելացնենք, որ 30000 թ[ուրքական] ո[սկու] հասնող գումարի միայն կեսն է բաժանվել: «Մյուս մասը,– օգոստոսի 11-ին գրում էր Անգլիայի հյուպատոսը,– պարզ չէ, թե ինչ է եղել»: Չարաշահումներ են եղել նաև որոշ վայրերում՝ կապված 200000 թ[ուրքական] ո[սկու] հասնող գումարի օգտագործման հետ, որտեղ «դրամը մնում է պաշտոնյաների մատներին սոսնձված»,– գրում է մեկ այլ վկա: Ներկայիս կուսակալ Ջեմալ բեյն անկեղծորեն դա ընդունեց:

Ջեմալ բեյն իր պարտականություններն ստանձնել է օգոստոս ամսին: Նա նշանավոր պաշտոնյա է, նոր դպրոցի ներկայացուցիչ, բարյացակամորեն տրամադրված, որը զսպել էր՝ մինչ այդ հզոր մահմեդական խռովարարներին և եռանդաբար վերականգնողական աշխատանքներ ձեռնարկել: Եթե նրա ջանքերը գործնականում առավել բավարար արդյունքների չեն հանգեցրել, ապա այն պատճառով, որ բախվել են նյութական մեծ դժվարությունների, իսկ Ջեմալ բեյի տրամադրության տակ գտնվող անձնակազմը չի փոխվել: Դեռևս հոկտեմբեր ամսին կառավարությունը ոչինչ չէր արել տների վերակառուցման համար և բացի այդ, կտրականապես արգելել էր կառուցումները՝ քաղաքային իշխանությունների կազմավորումից խուսափելու նպատակով: Դրանից ի վեր Ադանայում, Մարաշում, Անտիոքում և շատ այլ շրջաններում որոշ թվով տներ վերակառուցվել են միջազգային օգնության կոմիտեի ջանքերով և Ջեմալ բեյի աջակցությամբ: Սակայն այն ամենն ինչ արվել է՝ շատ քիչ է, և սովն ու թշվառությունը սարսափելի են Կիլիկիայի ամբողջ տարածաշրջանում, որտեղ անվտանգությունը, ի դեպ, հեռու է կատարելապես վերահաստատված լինելուց:

\*\*\*

Այժմ քննարկենք, թե այդ աղետի հանդեպ ինչպիսին էր Օսմանյան խորհրդարանի, սահմանադրական կառավարության, երիտթուրքական կուսակցության վերաբերմունքը:

Շենք որ Ջոյունիայում հայտնի դարձավ առաջին կոտորածի լուրը, այդ քաղաքի «Միություն և առաջադիմություն» կոմիտեն արագ Ադանա ուղարկեց մի հանձնաժողով, որը փորձեց հանդարտեցնել կրքերը: Արդուլ Համիդից ձերբազատված Կոստանդնուպոլսի կոմիտեն, իր հերթին, ուշադրությունը բևեռեց Կիլիկիայի վրա և իր մտադրությունը հայտնեց տեղում կարգը պահպանողների արշավախմբեր կազմա-

կերպելու մասին: [Բարձր] Դուռը հայտարարեց նաև, որ վճռականորեն է տրամադրված ամբողջ խստությամբ գործելու և իր պարտականությունը կատարելու հարցում. «Վստահեք փոքր-ինչ մեզ,– ասում էր ներքին գործերի նախարար Ֆերիդ փաշան,– շուտով ամենուր կարգ կհաստատեն»:

Ինչ վերաբերում է Օսմանյան խորհրդարանին<sup>71</sup>, որը երիտթուրքերի կիրառած երկրաչափական ընտրական համակարգի շնորհիվ ճնշող մեծամասնությամբ բաղկացած է թուրքերից, ապա այն ավելի շրջահայաց գտնվեց: Պաշտոնական առաջին ճեպագրերը, որոնք հրապարակվեցին, մահմեդականներին վերագրում էին շատ ավելի մեծ թվով գոհեր, քան հայերին, ինչից հանգեցին միանգամայն օրինաչափ եզրակացության, այն է՝ նախահարձակները վերջիններն էին: Հարկ եղավ մի քանի հայ պատգամավորների, մասնավորապես պլարոնայթ Ջոհրապի և Վարդգեսի եռանդուն միջամտությունը, որպեսզի քննարկմանն ավելի լուրջ շրջադարձ հաղորդվի: Ներքին գործերի նախարարությունում պետական փոխքարտուղար Ադիլ բեյը, որը մեղադրվում էր իր՝ «Մի դիպչեք եվրոպացիներին» ճեպագրի համար, իրեն պաշտպանեց զուսպ ձևով: Երկու կամ երեք երիտթուրք հոռետորներ գովերգեցին ազգությունների միջև եղբայրության առավելությունները, միայն մեկ թուրք պատգամավոր՝ Արիֆ Իսմեթը դատապարտեց Ադանայի իշխանությունների դիրքորոշումը և խորհրդարանը դրանով բավարարվեց: Այնուհետև այն բոլոր նիստերին, երբ փորձ արվեց այս հարցն արծարծել, խորհրդարանն այլևս պատրաստակամություն չի հայտ չբերեց այն, ըստ էության, քննարկելու համար: Նա բավարարվեց ի նպաստ տուժածների, կառավարության առաջարկած վարկերը վավերացնելով: Վերջապես, նա երկու պատգամավորի՝ հայազգի Պապիկյանին և երիտթուրք Յուսուֆ Քեմալին, հանձնարարեց գնալ և տեղում հետաքննություն իրականացնել: Երկու պատվիրակներն Ադանա ժամանեցին մայիսի 29-ին: Երեք օր անց Պապիկյանը գործընկերոջը հնարավորություն ընձեռեց անցկացնելու իր հետաքննությունը, իսկ իր հետաքննությունն իրականացրեց առանձին: Երեք շաբաթ անց նա վերադարձավ Կոստանդնուպոլիս: Տեղական մամուլում նրա արած հայտարարություններն ուժգին տպավորություն չգործեցին և թուրքական որոշ թերթերի դրդեցին զգալիորեն փոխել Ադանայի հարցի շեշտադրությունը: Ըստ Պապիկյանի զեկուցագրի եզրակացության՝ հայերն անմեղ էին, իշխանություններն ու մահմեդական տարրը պատասխանատու, և վերջապես զինվորական դատարանը կողմնակալ էր: Օգոստոսի առաջին օրերին Պապիկյանն այն պետք է ընթերցեր խորհրդարանում: Օգոստոսի 1-ին, կարճատև հիվանդությունից հետո, նա հանկարծամահ եղավ և ոչ ոք այլևս չիստեց նրա զեկուցագրի մասին:

<sup>71</sup> Հայերն այնտեղ ունեին տասը պատգամավոր:

Ինչ վերաբերում է Յուսուֆ Քեմալին, նրա զեկուցագիրը, որը մեծապես զանազանվում էր նրա գործընկերոջ զեկուցագրից, միտում ունի պատասխանատվությունը բարդել գլխավորապես հայերի վրա, իշխանություններին մեղադրել թուլության մեջ, իսկ Ադանայի մահմեդական բնակչության համար ենթադրում էր մեղմացուցիչ հանգամանքների առկայությունը: Սակայն այս փաստաթուղթը ևս անարդյունավետ էր: Թողնելով պատգամավորի իր լիազորագիրը՝ Յուսուֆ Քեմալը նշանակվեց Փարիզի օսմանցի ուսանողների տեսուչ... Այս կերպ օսմանյան խորհրդարանը հուղարկավորվեց Ադանայի հարցը:

Ինչ վերաբերում է [Բարձր] Դռանը, արյունալի խառնակությունների կրկնությունը կանխելու համար այն հատուկ միջոցներ ձեռնարկեց: Բայց հեռու լինելով պատասխանատվությունը բացահայտելու մտադրությունից, նա միայն կարգադրեց ձևական հետաքննություններ անցկացնել՝ մտահոգված հատկապես այն տպավորությունը մեղմելու խնդրով, որ Ադանայի կոտորածները կարող էին թողնել արտասահմանյան երկրներում: [Բարձր] Դուռը քողարկեց զոհերի թվաքանակը, խառնակությունների ծագման և դրանց վրա առկա դրոշմների առնչությամբ կեղծեց ճշմարտությունը, պնդեց, որ ճիշտ չէ, թե հայերին պարտադրել են դավանել իսլամը, այլ նրանք հավատափոխ են եղել կամուլին<sup>72</sup>: Հիլմի փաշան նույնիսկ պնդեց, որ «երբեք երկրորդ և երրորդ կորսուսների զինվորները» («սահմանադրական» զինվորները, որոնց դերը հայտնի է Ադանայի երկրորդ կոտորածի ժամանակ), «ընդունակ չեն նման չարագործությունների»<sup>73</sup>: Վերը ներկայացված ճշգրիտ փաստերը մեզ թույլ են տալիս կասկածի ենթարկել այս պնդումը: Ի դեպ, այս առնչությամբ մենք ունենք Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար պլարոն] Պիշոնի հստակ հայտարարությունները պատգամավորների պալատում, 1909 թ. մայիսի 17-ի նիստում.

<sup>72</sup> Ի սկզբանե օսմանյան դիվանագիտությունն այնքան լավ օգտագործեց ճշմարտությունը պարբերաբար հերքելու գործընթացը, ինչև ավանդական է [Բարձր] Դռան քաղաքականության համար, որ հեղինակավոր լրագրերից շատերը, ինչպիսիք են «Տանը» կամ «Թայմսը», մոլորության մեջ ընկան: Առաջին կոտորածից վեց օր անց «Տանն» ապրիլի 21-ին գրում էր արտասահմանի իր տեղեկաթերթիկում. «Փոքր Ասիայից ստացված լուրերը, եթե երեկվանից զգալիորեն լավը չեն, շատ վատն էլ չեն: Կոտորած տեղի չի ունեցել, եղել են ընդամենը՝ սպառնալիքներ...»: Ամսի 25-ից 28-ը կոտորում էին Ադանայում և «Թայմսը» 27-ին տպագրում էր Կոստանդնուպոլսից մի ճեպագիր, որը հայտնում էր, թե «Մահմուդ Շեքեֆ փաշան Ադանայից և Մերսինից ստացել էր գոհացուցիչ հեռագրեր»:

<sup>73</sup> Այս խոսքերից հետո, ահա, խորամանկությունից գերծ մի խտտովանություն: Այն պատկանում է մի զինվորի, որը մայիսի 20-ի թվակիր՝ Մերսինից իր ծնողներին հղած, սակայն առգրավված և ըստ «Ֆրանկֆուրտեր Ցայթունգի»՝ հյուպատոսներից մեկի ձեռքում գտնվող նամակում, գրում էր. «Մենք մեկնեցինք Ադրիանապոլսից քառասուն օր առաջ, գնացինք Գալիպոլի, հետո Մերսին, այնտեղից Ադանա: Այնտեղ հայերին մենք պատերազմ հայտարարեցինք, սպանեցինք այս անհավատ շներից 50000-ի (sic), որոնց արյունը հեղեղեց փողոցները, մենք կալանավորեցինք փրկվածներին և նրանց հանձնեցինք կառավարությանը» (Frankfurter Zeitung, 20 juin 1909):

«Դժբախտաբար եղավ այնպես, – ասել է պ[արոն] Պիշոնը, – ինչպես պ[արոն] Դեմի Կոշենն այդ մասին զեկուցեց, այն է՝ հանցափորձերը կանխելու և ճնշելու համար ուղարկված զորքերը, ընդհակառակը՝ մասնակցեցին դրանց: Փաստը ստույգ է: Այն արձանագրվել է խառնակույթյունների հենց սկզբում՝ ապրիլի 25-ին»:

Մյուս կողմից օսմանյան կառավարությունը, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, գիտակցելով հետադիմական կուսակցության ուժը, մեղավորներին խստորեն պատժելու փոխարեն, նախընտրեցին ուռձացնել հայկական հեղափոխության թեման: Սա այն բանաձևն է, որից Ելդըզում օգտվում էին կոտորածներն արդարացնելու համար: Հայերը, որոնք պաշտպանվել էին մի քանի վայրերում, այնտեղ՝ որտեղ ի վիճակի էին եղել դա անել, ներկայացվել են իբրև նախահարձակներ և ապստամբներ: Բացի այդ, փորձել են ապացուցել, որ մահմեդական մոլեռանդությունը սոսկ առասպել է և վերջապես, ժխտել են, որ իշխանությունները կարող էին որևէ մասնակցություն ունենալ կոտորածներին:

Այս բոլոր վկայակոչություններն ամբողջությամբ չեն համապատասխանում ոչ միայն փաստերին, այլև միմյանց: Ադանայի վայրագությունների վերագրումը հայ հեղափոխականների մեքենայություններին նշանակում է հանձնին դրանց տեսնել պատժամիջոց, ճնշման գործողություն, ըստ այդմ՝ դրանց վավերացում և ինչ որ ձևով օրինականացում, ինչպես նաև դրանց ճնշմանը՝ միևնույն պաշտոնյաների ունեցած մասնակցության խոստովանում, որոնց հավակնում էին արդարացնել:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեն ևս քաջություն չի ունեցել բացեիքաց քննարկել և ընդունել ճշմարտությունը: Այս կողմից ևս ջանացել են աղետի պատասխանատվությունը բարդել հայերի վրա: Կոմիտեի երիտաբուրք ազդեցիկ անդամներից Հակի բեյը, որը Վիեննայում օսմանյան դեսպանության ռազմական կցորդն է, ներկայացնում էր իր գործընկերների կարծիքը՝ երբ «Տանի» (28-ը մայիսի, 1909 թ.) թղթակցին Վիեննայում ասում էր հետևյալը.

«Չափազանցում են: Ձեր եվրոպական մամուլը մեր նկատմամբ երբեք մեծ բարյացկամություն չի ցուցաբերում: Իրականում, մենք այսօր գիտենք, որ Ադանայի խառնակությունները Կոստանդնուպոլսից են հրահրվել: Մենք առգրավել ենք ճեպագրեր, որոնք փաստում են, որ հայկական կոմիտեն նախանձախնդիր էր Եվրոպայի միջամտությանը»:

Երբ հայերը պահանջեցին ապացուցել այն, ինչ նա հենց նոր հայտարարեց՝ ներկայացնելով այդ ճեպագրերի պատճենները, Հակի բեյը նախընտրեց լռություն պահպանել:

Կիլիկիայում պաշարողական դրություն հայտարարելուց, այն է՝ մայիս ամսից ի վեր, գործել են չորս զինվորական առյաններ. երկուսը՝ Ադանայում, երրորդը՝ Էրզինում և մեկ ուրիշը՝ Մարաշում: Մի թուրք

պատգամավոր ինձ ասաց, որ դրանց անդամներն «ընտրվել էին բժախնդրորեն», նրանք «հաստատուն համոզմունքներ ունեցող և փորձառու երիտաբուրքեր էին»: Ռազմական դատարանի՝ հուլիսին [Բարձր] Դռանը հանձնած առաջին զեկուցագրում գտնում ենք հետևյալ հատվածը.

«Անկախություն ձեռք բերելու հույսով հայերն ուշադրությամբ հետամուտ էին հեղափոխական բարոզության գործակալների ցուցումներին, որոնք ապստամբություն նախապատրաստելու համար Ադանայի՝ բազմաթիվ օտարերկրացիներով բնակեցված ծովափնյա շրջանը դիտում էին իբրև շատ ավելի նպաստավոր տարածք, քան Քուրդիստանը»:

Այս ուսումնասիրության սկզբում տեսանք, թե որքան միտումնավոր էր այս առնչությամբ հայերի դեմ նյութված մեղադրանքը: Այս հարցի շուրջ Անգլիայի հյուպատոս Դաուֆի-Ուայլիի զեկուցագիրը հստակ է.

«Ես չեմ հավատում հայկական որևէ հեղափոխության, որն ակնկալում է օտար միջամտության հովանու ներքո անկախ թագավորության ստեղծում: Եթե հայերը համանման նպատակ հետապնդեին, ապա զանգվածաբար նահանջած կլինեին լեռները, որտեղ կկարողանային ավելի լավ պաշտպանվել: Նրանք երբեք թողած չէին լինի այդքան հազարավոր անզեն հնձվորների՝ ցրված դաշտում, որոնցից շատերն Ադանայի հայերի եղբայրներն ու բարեկամներն էին: Բացի այդ, ծիծաղելի է ենթադրել, որ նույնիսկ ատրճանակներով և որսորդական հրացաններով զինված հայերը կարող էին հավատալ, որ ի վիճակի էին դիմակայել օսմանյան բանակին: Ինչ վերաբերում է օտար միջամտությանը, ապա քաղաքականությանն առնչվող նվազագույն գիտելիքները նրանց կհամոզեին նման զաղափարի անհեթեթության մեջ»:

Այս նույն զեկուցագրում մայր Դաուֆի-Ուայլին պատասխանատու է ճանաչում տեղական կառավարությանը, «որը հենց սկզբից կարող էր արմատախիլ արած լինել անկարգությունների նախանշանները»:

Ձիջելով պատրիարքության և հայ պատգամավորների փաստարկներին՝ նախարարների խորհուրդն ի վերջո պաշտոնապես ներկայացրեց Կիլիկիայի հայերի դեմ ուղղված մեղադրանքները, նահանգների կառավարիչներին հղած՝ օգոստոսի 1-ի թվակիր շրջաբերականում հայտարարելով, որ սահմանադրության հաստատումից ի վեր «Դրոշակ» և «Հնչակ» կոմիտեների գործունեությունը որևէ հեղափոխական նպատակ չէր հետապնդել, որ ընդհակառակը, դրանք ի հայտ են բերել իրենց հավատարմությունը «մի վարչակարգի նկատմամբ, որի հաստատմանն աջակցել էին», որ հայերն «օսմանյան հզոր կառավարության հանդեպ ունեցած իրենց հավատարմությունից ամենևին չեն հրաժարվել», որ «սարսափելի աղետը» հետևանք էր «թյուրիմացության» և «մի քանի տգետ անձանց սխալ մեկնաբանության այն

զանգատներին, որոնք՝ ազատության և սահմանադրության հիման վրա, հայերը ներկայացրել էին բացարձակ միապետության բռնակալական գործելամիջոցներով ոգեշնչվածների դեմ, ովքեր ցանկացել էին խախտել օսմանյան տարրերի միջև առկա եղբայրական համաձայնությունը», որ «աղետի ծագումը վերագրելի էր պաշտոնյաների պարտականությունների կատարման թերացմանը», որ «այս ամենը բխում էր զինվորական ատյանի հետաքննություններից», և որ «այս տխուր իրադարձությունների իրական հրահրիչները կպատժվեն ըստ օրենքի»:

\*\*\*

Չնայած պաշտոնական այս հայտարարություններին, զինվորական ատյանները շարունակեցին դատել հայերին իբրև ապստամբների, առանց նրանց թույլատրելու, ի դեպ, ապացուցել հակառակը, նրանց հետաքննությունը վարել ամենաակնհայտ ձևով վարկաբեկված պաշտոնյաների աջակցությամբ, թույլատրել, որ իրենց ղեկավարեն զանգվածային կոտորածների հրահրիչներն ու կազմակերպիչները, վերջապես, հիմնվել կեղծ ցուցմունքների վրա՝ երբ խոսքը վերաբերում էր քրիստոնյային մեղադրելուն և չընդունել հայերի ցուցմունքները՝ երբ դրանք վերաբերում էին մահմեդականին կամ երբ կարող էին արդարացնել իրենց հայրենակիցներին:

Զինվորական ատյանների կողմնակալության մասին ունենք բազմաթիվ վկայություններ<sup>74</sup>: Սահմանափակվենք ամերիկյան առաքելության զեկուցագրերից փոխառված մի քանի մեջբերումներով, որոնք խիստ ճշգրիտ են:

«Երբ հայը համարձակվում է վկայություն տալ մահմեդականի դեմ՝ լուրջ վտանգների է ենթարկվում: Մեղադրող վկայից նա իսկույն վերածվում է մեղադրյալի և քանի որ ցուցմունք տալու համար գտնում են բազմաթիվ, կարևոր չէ, թե ինչպիսի վկաներ, հայերն ավելի խոհեմ են համարում մեղադրանք ներկայացնելուց հրաժարվել և լուրջություն պահպանել»:

Մեկ այլ զեկուցագրից.

«Բանտում պահվում են կեղծ մեղադրանքների թիրախ դարձած շատ մարդիկ: Թվում է, թե յուրաքանչյուրը կարող էր ձերբակալված և բանտարկված լինել մահմեդականի արտասանած մի խոսքի հիման

<sup>74</sup> Մհա Հուսեյն Դալիմ րեյի՝ վերը նշված թուրք պաշտոնյայի վկայությունը, որը բաջություն է ունեցել անելու հետևյալ հայտարարությունը Կահիրեի «Լուսաբեր-Արևի» (1-ը նոյեմբերի 1909 թ.) խմբագրին.

«Ատյաններն արդարության գործին ամենուրեք ընթացք տվին միմյանցից զանազանվող ուղղությամբ և ոգով: Հայերն արդեն այնքան էին ընկճված, այնքան ահաբեկված, որ ռազմական ատյանների առջև ներկայանալու փաստը նրանց համար երկրորդ խոշտանգում էր: Կարճ ասած՝ դատավճիռները հայտարարվում էին ոչ իրական փաստերի հիման վրա, սակայն նախօրոք կայացված վճիռները հայտարարելու համար փնտրում էին ու հորինում փաստեր»:

վրա: Ինձ հայտնի չէ որևէ դեպք, երբ ցուցմունքներ տալու համար կանչված հայի վկայությունն ընդունված լիներ»:

Հայերին հապճեպ մեղադրելու այս պայմաններում՝ դատական գործ էին հարուցում խառնակություններից բազում ամիսներ առաջ մահացած անձանց դեմ: Կենդանի մնացածների թվում միայն իրենց և իրենց ընտանիքի կյանքն ու պատիվը պաշտպանողները չեն կարճատև դատավարությունից հետո բանտ նետվել, այլև նրանք, ովքեր կոտորածի ժամանակ չեն մոռացել թաքնվել:

«Մի հայ դատապարտվել է տասը տարվա բանտարկության: Նա վկաներ ուներ, որոնք պատրաստ էին հայտարարելու, որ կոտորածների ժամանակ նա ապաստանել էր ճիզվիտների դպրոցում: Նրա վկաները դատարան չեն կանչվել: Դրա փոխարեն՝ նրան դատապարտելու համար հիմնվել են երեք մահմեդականի կեղծ վկայության վրա»:

Հղենք մեկ այլ փաստ՝ արձանագրված բազմաթիվ զեկուցագրերում. ապրիլի 14-ին՝ այն պահին, երբ բռնկվում էին առաջին խառնակությունները, հայազգի Կիրակոս Քեշիշյանը գտնվում էր օսմանյան բանկի շենքում (որը եվրոպական հաստատություն է), որտեղ նա գնացել էր ստանալու 400 թ[ուրքական] ռ[սկու] սահմանում կանխավճար՝ քընջութի մի մասի հաշվին: Նա այնտեղ մնաց չորս օր, մինչ սպանվելու վտանգը կվերանար: Սակայն, չնայած հաստատության տնօրենի և անձնակազմի վկայությանը, իր երկու մահմեդական թշնամիների կողմից խառնակություններին մասնակցություն ունենալու մեջ մեղադրվող Քեշիշյանը դատապարտվեց մահվան:

Կարծեք ավելի լավ ապացուցելու համար, որ հայերն էին ապստամբել, ռազմական դատարանն իբրև ապստամբների առաջնորդ ներկայացված Ադանայի եպիսկոպոս Ն[որին սրբազնություն] Մուշեղին հեռակա կարգով դատապարտեց 101 տարվա տաժանակիր աշխատանքի: Հանցափորձի պահին գտնվելով Եգիպտոսում՝ նա, այդուհանդերձ, անմիջապես նավով ճանապարհ էր ընկել իր հոգևոր թեմին հասնելու համար, սակայն նրան արգելել էին մուտք գործել օսմանյան երկրի տարածք:

Այլ հոգևորականներ, ինչպիսիք են Դյորթ Յուլի եպիսկոպոսական փոխանորդը, Հաճնի եպիսկոպոսը, բնութագրվել են իբրև շարքային հանցագործներ: Վերջինս՝ Ն[որին սրբազնություն] Ներսես Դանիելյանի, պարագան խիստ հատկանշական է: Խառնակությունների ժամանակ այս բարձրաստիճան հոգևորականը մեծ ջանքեր էր գործադրել, որպեսզի խոչընդոտեր, որ Հաճն քաղաքի մահմեդականներին թվով գերազանցող հայերը տուրք տալին վրիժառությունների: Նա մի հայկական պահակախումբ էր կանգնեցրել մզկիթներից մեկի մուտքի առջև և կազմակերպել թուրք ընտանիքների պաշտպանությունը:

Մահմեդականներն, ի դեպ, վկայություն լին տվել նրա օգտին Մարաշի ռազմական դատարանում: Այնուամենայնիվ, նա կալանավորվեց և միայն երկու ամսվա բողոքներից ու ակտիվ գործնական քայլերից հետո հայոց պատրիարքը կարողացավ հասնել նրա ազատ արձակմանը:

Հաճնի առնչությամբ միսիոներուի օլրիորդ Ռեզ Լամբերի նամակում կարդում ենք, որ Հաճնի արվարձաններն արյամբ հեղեղած կոտորածներում ներգրավված մահմեդականներից մի քանիսը Մարաշի դատարանի կողմից հարցաքննության ենթարկվելուց հետո ընդունել են, որ սկսել էին գործել Հաճնի թուրքերի բարձրացրած կեղծ աղմուկի հիման վրա, ըստ որի՝ հայերը հարձակվել էին նրանց վրա: Բավարարվել են բոլոր այս մարդասպաններին բարի խորհուրդներ տալով, որից հետո նրանց ընդամենը ետ են ուղարկել: Փոխարենը՝ ձերբակալություններ են իրականացվել մեծ թվով հայերի շրջանում:

«Նույնիսկ նրանք, ովքեր հաց էին բաժանել քաղաքի պահպանությունը ստանձնած հայերին կամ նրանք, ովքեր առաջին օրը խորհուրդ էին տվել փակել շուկայի կրպակները, ստիպված եղան ներկայանալ դատարան: Շատերը մեղավոր ճանաչվեցին և ուղարկվեցին Էրզրոմի գերագույն դատարան, որը նրանցից 22-ին դատապարտեց բանտարկության Պայասի ամրոցում: 33 այլ սպասում են դատավորների դատավճռին»<sup>75</sup>:

Հաճնի դեպքերի առնչությամբ՝ մեկ այլ միսիոներ, պ[արոն] Ֆաուլը, օգոստոսի 3-ին գրում է.

«Հաճնի հայերի հանցանքն այն է, որ մի քանի բարձրաստիճան հոգևորականներ հաց և վառոդ էին մատակարարել՝ թուրքերից քաղաքի պաշտպանությունը ստանձնած մարդկանց, ինչպես նաև այն, որ այս պահապանները ժամանակ առ ժամանակ հակահարված էին տալիս պաշարողների արկերի տարափին՝ նրանց տարածության վրա պահելու համար մինչ այն պահը, երբ տեղ հասնեին կառավարության ուղարկված զորքերը: Երբ այս զորքերը տեղ հասան՝ նրանց դիմավորեցին ուրախության և երախտագիտության բացականություններով: Սակայն այս մարդիկ, որոնց շնորհիվ քաղաքը պաշտպանվել էր և փրկվել, դատապարտվեցին, կարծեք թե խառնակությունների մեղավորները կարող էին նրանք եղած լինել: Ինչ վերաբերում է Հաճնի դեմ ուղղված հարձակումը ղեկավարած թուրքերին՝ գտան, որ նրանք արժանի են արգարացման... Այս պահի դրությամբ 54 հաճնցի հայեր գտնվում են բանտում: Ոչ մի թուրք չի դատապարտվել»:

Կանադացի միսիոներ պ[արոն] Լուուսն Չեմբերսն իրավիճակը հակիրճ ամփոփում է այսպես. նա հավաստիացնում է, որ կրիստոսությունից սկսած խորին համակրանք է տաճում, այնուամենայնիվ պարտավորված է զգում ընդունել, որ «նրանց ձեռնարկված առաջին

<sup>75</sup> Այս նամակը թվագրված է հուլիսի 31-ով:

քայլը հանգել է կոտորածներից խույս տված հայերին բանտ նետելուն»:

«Այս ամենին ներկա եղածներիս համար, — գրում է մեկ այլ միսիոներուի՝ օլրիորդ Է. Վերը, — անարդարությունը ճշացող է»:

Բաց ահա թե ինչն է ավելի կարևոր, քան հենց նոր հիշատակված պարագաները: Բազմաթիվ հանգամանքներում իշխանությունները դիմել են տարբեր դաժան միջոցների, մասնավորապես, մահակների միջոցով ծեծի՝ կամ «ստիպելու համար անմեղներին գրավոր իրենց մեղավոր ճանաչել, կամ կեղծ վկայություններ տալ»<sup>76</sup>, կամ կորզելու համար այս կամ այն հայտարարությունը:

Միջազգային օգնության կոմիտեի անդամներից մեկի՝ օգոստոսի 20-ի թվակիր հեռագիրը.

«Դյորթ Յոլի տասնյոթ հայ առաջնորդներ բանտարկվել են Պայասում և վեց օր շարունակ նրանց նկատմամբ ճնշում է գործադրվել՝ ստիպելու համար նրանց համընդհանուր ներում խնդրել և հրաժարվել կրած վնասների համար հատուցման բոլոր պահանջներից»:

Միևնույն սկզբնաղբյուրից մեկ այլ ճեպագիր.

«Դյորթ Յոլի մարդկանց հետ շատ դաժան են վարվել. նրանց նետել են բանտի՝ առողջության համար ամենավտանգավոր վայրերը և խոշտանգել»:

\*\*\*

Այդուհանդերձ չէին կարող արդարության խստությունը վերապահել միայն անմեղներին, ուստի հարկ եղավ ձերբակալել, բանտարկել կամ կախաղան բարձրացնել մի քանի մահմեդականների: Վերջիններս ընտրվել են ոչ թե կազմակերպիչների, այլ լսել՞ ու կրակ չբավորների թվից, որոնք, չնայած արդեն բավականին հանցանքներ էին գործել, այնուամենայնիվ այնքան մեղավոր չէին, որքան իրենց կոտորածի հրահրողները: Բացի այդ, հոգացել էին որոշ թվով հայերի նրանց միացնելու մասին, որոնցից ոմանք անհավանական համարձակություն էին ունեցել՝ պաշտպանվելու իրենց վրա հարձակվողներից, այն դեպքում, երբ այլ նույնիսկ այդ չէին արել, ինչի հիման վրա հնարավոր կլիներ նրանց հանդիմանել: Թվում է, թե այլ կերպ չէին կարող վարվել, քան բավության նոխագներին ներգրավել համընդհանուր՝ կարծեցյալ ճնշման գործընթացում, և այդ ամենը՝ հանուն թուրքական տարրի գանգատների մեղմացման, որի համար անսովոր էր տեսնելը, թե ինչպես են իր հավատակիցները պատժվում քրիստոնյայի արյունը թափելու համար: Բացի այդ, դա թույլ էր տալիս հաստատել հայերին՝ իբրև խառնակությունների կրահրիչներ ներկայացնող առասպել:

<sup>76</sup> Ամերիկյան առաքելության գեկուցագիր

Այս կերպ, հունիս ամսին Ադանայում մահապատժի ենթարկեցին ինը թուրքի և վեց հայի: Քենան փաշայի ղեկավարությամբ գործող առաջին ռազմական խորհուրդը սկզբից ևեթ՝ այլոց դաս տալու համար կիրառելով այս պատիժը, իր առաքելությունն ավարտված համարեց, այն դեպքում, երբ մյուս կողմից բանտերը լցնել էր տվել հայերով:

«Մենք, - նշվում է հանձնաժողովի պաշտոնական զեկուցագրում, - մահապատիժ կիրառեցինք 15 անձանց նկատմամբ, որոնցից ինը թուրք էին և վեցը հայ: Բայց եթե մենք ցանկանանք նույն խստությունը կիրառել բոլոր հանցավորների նկատմամբ, հարկ կլինի մահվան դատապարտել 7000-ից 8000-ի, տաժանակիր աշխատանքների՝ 10000-ից 15000-ի և ավելի մեղմ պատիժների՝ ավելի քան 80000 մարդու: Եթե դուք անհրաժեշտ եք համարում երկրագործությունը զրկել ձեռքի աշխատանքից, մենք քաղաքի շուրջը կստեղծենք զինվորական գոտի և կսահմանենք այդ պատիժները»:

Այսպիսով, երիտթուրք դատավորներն ավելի քան 100000 անձից՝ մարդասպաններից, կողոպտիչներից կամ հրձիգներից, նպատակահարմար գտան մահվան դատապարտել միայն իննին, ինչպես նաև նրանց հավելել վեց անմեղ քրիստոնյաների: Ճիշտ է, որ եթե ցանկանալին պատժել բոլոր ռճրագործներին, հարկ կլիներ հազարավոր կախաղաններ կանգնեցնել: Սակայն նվազագույնը կարելի էր հուսալ, որ արդար վճիռ կկայացվեր մի շարք անձանց համար, որոնցից ոմանք ղեկավարել էին և կազմակերպել կոտորածը, այլը՝ հանդուրժել այն կամ աջակցել դրան: Դրանից ոչինչ չստացվեց: Կոտորածից երեք ամիս անց, և Հայոց պատրիարքության անընդմեջ բողոքների արդյունքում, [Բարձր] Դուռը կարգադրեց արդարադատությանը հանձնել հիմնական մեղավորներից մի քանիսին: Նրանց հանդեպ կիրառված պատիժները ոչ միայն ծիծաղելի էին, այլև պատռոնական: Կուսակալ Ջևադ բեյի դատապարտումը հանգեց վեց տարի վարչական պաշտոններ զբաղեցնելու արգելքին, այնուհետև պատրիարքության բողոքների արդյունքում նա ցմահ արժանացավ միևնույն պատժին: Ռեմզի փաշան դատապարտվեց երեք ամսվա բանտարկության, ինչից նա, ի դեպ, խուսափեց: Իհասն Ֆիքրին համարվեց տարագիր. իրականում ունենալով ազատ ճամփորդելու իրավունք, նա գնաց նախ Կահիրե, այնուհետև վերադարձավ Կոստանդնուպոլիս:

Արդուլ Քաղերն արդարացվեց, նրան միայն խնդրեցին որոշ ժամանակով հեռանալ Ադանայից և նույնպես ճամփորդել: Յուրահատուկ է Ջերեթ Բերեթեթի նահանգապետ Ասաֆ բեյի պարագան: Այս պաշտոնյան ակնհայտորեն և բացահայտորեն կազմակերպել էր իր իշխանության ներքո գտնվող շրջանների կոտորածը: Նա էր զինել և ղեկավարել հայկական գյուղերը նետել 30000 ջարդարարի և ղեկավարել այդ բանակը, ինչպես զորավարն արշավանքի ժամանակ: Վերստին նա է Ադանայի ջարդարարների եռանդը բորբոքելու համար հեռագրեր

ուղարկել, որոնցով հայ գյուղացիներին ներկայացնում էր իբրև ղեկավար քաղաք շարժվողների: Էրզինում նիստեր գումարող զինվորական խորհուրդն այս մարդուն արդարացրեց: Չնայած նախարարների խորհրդի՝ պատրիարքությանը տված կրկնվող խոստմանն առ այն, որ հետամուտ կլինի Ասաֆի դատական գործի վերանայմանը<sup>77</sup>, վեր-

<sup>77</sup> «Թավլիի-Էֆքիար» երիտթուրքական օրգանը, որը ղեկավարում է Աթալիայի պատգամավոր Էրուվիա Թևֆիկը, 1909 թ. հուլիսի 6/19-ի համարում այդ որոշումը գնահատում էր հետևյալ կերպ. «Կարծում ենք, որ զինվորական դատարանների ընդունած՝ արդարացնող և դատապարտող վճիռները ենթակա չեն վերանայման: Ուստի մենք բողոքում ենք նրանց դեմ, ովքեր անարդարության կամ կողմնակալության մեջ են մտնողում Էրզինի դատարանին, որի նկատմամբ բացարձակ վստահություն ունենք, և որը, դրանում հանդգնած ենք, դատավճիռները կայացրել է միայն ըստ իր խղճի»:

Բացառությամբ հազվադեպ դեպքերի, զրկառնը, որով Ադանայի գործերի առնչությամբ արտահայտվում էր երիտթուրքական մամուլը, խղճուկ էր: Պատասխանելով հայկական թերթերի ներկայացրած բողոքներին՝ «Իթղամը» (օգոստոսի 28/սեպտեմբերի 9-ին) նշում էր.

«Ռազմական խորհուրդներ ուղարկելով խառնակությունների վայրերը՝ սահմանադրական մեր կառավարությունը հոգաց հնարավորինս արդարություն կիրառելու համար»:

Մեջբերում «Սանջակից» (30-ը մայիսի/12-ը հունիսի).

«Եր այս համաքաղաքացիները, ձգտելով Ադանայի ստարաններն աշխարհին ի ցույց դնել իրենց ամբողջ սարսափելիությանը և վայրագությանը, գրեթե ամենուրեք ցրել են այրի կանանց և որբերի: Բայց միթե կոտորածների ժամանակ սպանված թուրքերը փայտից էին և նրանց թողած որբերը չպետք է հաշվի առնվեն: Մենք՝ այլ թուրքերս, որ մեր բոլոր գործողություններում մեզ դրսևտրում ենք իբրև իսկական օսմանցիներ, իբրև օսմանցիներ ենք դիտում մեր բոլոր համաքաղաքացիներին: Դժբախտաբար վերջիններս չեն կիսում մեր կարծիքներն ու զարգափարները»:

Այդուհանդերձ, թուրքական որոշ օրգաններ խստագույնս խարազանյ են կիլիկիայի հանցավորները: «Սիփերի-Սաիքայ Հուրիեթի»՝ հուլիսի 6-ի համարում, 1895 թ. հայկական կոտորածների մասին հիշատակելուց և 1909 թ. կոտորածների պատասխանատվությունը համիդյան վարչակարգին վերագրելուց հետո, հողվածագիրը, որը մի թուրք պաշտոնյա է, գրում է իր.

«Սովահար և ռտաբորիկ որբերը, այրիները թափառում են այստեղ ու այնտեղ, հազարավոր ընտանիքներ փախչում են հայրենիքից: Մենք հանդգնած ենք, որ կառավարությունը կատարում է իր բոլոր պարտականությունները, բայց այն, ինչ կատարվել է, այնպիսի մեծ աղետ է, որ բավական կլիներ, որպեսզի կառավարությունը տարիներ շարունակ զբաղվեր դրանով: Չկան այնպիսի գոհողություններ, որոնք մենք մեզ չպարտադրեցինք այս աղետի հետևանքները վերացնելու համար, որովհետև հայրենիքի բարձրավաճումը պահանջում է, որպեսզի նման վերքերը հնարավորինս արագ բուժվեն»:

Ահա ամենատարածված երիտթուրքական «Թանին» թերթում մի երևելի կնոջ՝ ա[իլին] Խալիդև Սալիիի հողվածքը.

«... Զեզ են դիմում, հայեր: Ազատությունն ապահոված ազգության անունից՝ վշտայից և ամոքահար ներողություն են խնդրում ձեզնից այն չտեսնված դժբախտությունների համար, որոնք ձեզ հանգիստ չեն տալիս: Իմ ազգության անունից կարիք ունեմ ձեզնից լալ այն մեծերի ու փոքրերի գերեզմանների առջև, որոնք նահատակվել են և կիսում են նրանց վիշտը, որոնց այս սարսափելի աղետը ստիպեց հուղարկվորել իրենց սիրելիներին»:

... Այժմ խոսքը բրնն է մեծ և երիտասարդ օսմանյան ազգ... Առաջ, հայրենակիցներ, այնտեղ մեր հայ եղբայրներն են, պայքարի ձեր գործընկերները, ովքեր իրենց արյունն են հեղել ազատության համար... Եթե դուք վրեժխնդիր չլինեք նրանց համար, նրանց կանգն և երկխաների համար, եթե չպատժեք ոճրագործներին, որոնք պատվազրկել են մեր ազգը, ինձ թվում է, որ Երիտասարդ Թուրքիան արտավարված կմնա հավերժական անոթի բժով...»:

Ահա թե ինչ է գրում միևնույն թերթի («Թանին», 10-ը հուլիսի) տնօրեն, պատգամավոր Հուսեյն Զահիդը.

«... Տղամարդիկ, կանայք, երեխաները կոտորվեցին, հրկիզվեցին, սրախոտիտող արվեցին

չինս շարունակում է մնալ ազատության մեջ: Նոյեմբեր ամսին նա այցելեց Փարիզ: Թեև դրանից հետո նրան կարող էին միանգամայն հանգիստ կերպով դատապարտել, քանի որ նրա բնակության վայրում նրա նկատմամբ կալանքի ցանկացած կիրառում բավական դժվարին էր, չի թվում, թե այդ հարցում կարող էին վճռականորեն տրամադրված լինել:

Անհրաժեշտ հատուցման բացակայության պայմաններում՝ Հայոց պատրիարքությունը բողոքների, քայլերի և խնդրանքների միջոցով, չնչին արդյունքի հասավ: Ռազմական առաջին ատյանի նախագահ Քենան փաշային հուլիս ամսին փոխարինեց Իսմայիլ Ֆադիլ փաշան: Մոտավորապես 200 մահմեդական դատապարտվեցին բանտարկության կամ արքորի Անատոլիայի այլ նահանգներ, քառասուն այլք, մեծ մասամբ երկրորդական անձինք, մահապատժի՝ կախաղանի միջոցով: Այս անգամ մահապատժ էին սահմանել նույնիսկ հիմնավորապես վարկաբեկված երեք մուֆթիի համար: Սակայն չնայած որևէ հայի մահապատժի չենթարկելու վերաբերյալ մեծ վեզիր Հիլմիի՝ պատրիարքությանը տված և բազմիցս կրկնված երաշխիքներին, հինգ այլ հայերի դատապարտեցին մահվան: Պատրիարքության նոր բողոքների հիման վրա [Բարձր] Դուռը հետաձգեց այդ դատավճռի իրականացումը և անվերջանալի բանակցություններից հետո մեղմացրեց որևէ հանցանքի հետ առնչություն չունեցող հայերի մահվան դատավճիռը՝ այն փոխարինելով ցմահ բանտարկությամբ, մահմեդական մարդասպաններին ևս հնարավորություն ընձեռելով օգտվել նույն հնարավորությունից: Մյուս կողմից, էական հարցերում [Բարձր] Դուռը չկատարեց իր խոստումներից և ոչ մեկը: Նա սահմանափակվեց ձևական հատուցումներ շնորհելով, թույլ տվեց, որ բանտերում փթեն զրպարտչական մեղադրանքների զոհ դարձած հայերը, այն դեպքում, երբ հակահայկական շարժման մասնակից բազմաթիվ թուրք երևելիներ, սպաներ, պաշտոնյաներ, գտնվում էին ազատության մեջ և դեռևս ազատ են: Այս բոլոր պատճառները դրդել են Կոստանդնուպոլսի լուսավորչական պատրիարք Նորին սրբազնությունն [Բարձր] Դուռյանին՝ չափավոր և հաշտվող մարդու, եթե նա այդպիսին եղել է, վերջին սեպտեմբեր ամսին ներկայացնել իր հրաժարականը: [Բարձր] Դուռանը հղված հուշագրում Նորին սրբազնությունն [Բարձր] Դուռյանը գրում էր.

«... Մենք հույս ունեինք, որ այս սարսափելի աղետի հրահրիչների

դաժան անգթությամբ: Մեր հայրենակիցներից շուրջ 20000-ը ոչնչացվեց, բնաջնջվեցին ամբողջ բնտանիքներ, որրերը մնացին անպաշտպան: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհի տհաճությամբ երես է շրջում այդ տեսարանից...»:

Այդուհանդերձ, երբ վրա է հասել գոհերի իրավունքները ճանաչելու պահը, թուրքական մա-մուլը, ներառյալ միևնույն «Թանիս», կառավարության և Աղանայի դատավորների պաշտպանությամբ հանդես է եկել այնպիսի արտահայտություններով, որոնք չէին կարող փոքր-իսկ պատրանքի տեղ թողնել այն իրական զգացումների համար, որոնցով կայսրության քրիստոնյա ազգությունների նկատմամբ համակված և ազատական կոչվող օսմանյան կուսակցությունը:

ու կազմակերպիչների նկատմամբ կկիրառվեր լուրջ դատավճիռ և նրանք մեկընդմիջտ կհեռացվեին: Դժբախտաբար, կառավարության պաշտոնական հայտարարությունը գործնականում մնաց անհետևանք: Ընդհակառակը, հրապարակված դատավճիռները, որոնք հակադրվում էին արդարության և օրինականության ամենահստակ սկզբունքներին և անհամատեղելի են անառարկելի իրավունքների հետ, հավանության արժանացան: Դա հայերին, որոնք բոլոր ժամանակներում կայսրության ամենահավատարիմ տարրերից են եղել, խորին հուսալքության գիրկը նետեց...»: «Այս իրադրությանն ի տես, - եզրակացնում է պատրիարքը, - ես ստանձնում եմ մի տխուր պարտականություն՝ ներկայացնելով իմ հրաժարականը»:

Ահա [Բարձր] Դուռան պատասխանը՝ փոխանցված արդարության և պաշտամունքների նախարարի կողմից.

«Նախարարների խորհուրդը ծանոթացավ մեծ վեզիրությանը ներկայացրած ձեռ երկու «թաքրիքին»\*, որոնցում՝ Աղանայի իրադարձությունների հետ կապված որոշ հայտարարություններ անելուց հետո, հայտնում էք ձեր հրաժարականի մասին:

Կառավարության միակ նպատակն է տեսնել, թե ինչպես են օսմանյան բոլոր տարրերը՝ առանց ազգային և կրոնական խտրականության, օգտվում արդարության և անվտանգության բարիքներից: Կառավարությունը նվազագույն իսկ չափով հանդուրժողականություն չի ցուցաբերի նրանց հանդեպ, ովքեր համարձակվում են երկրում խախտել կարգուկանոնն ու հանդարտությունը և սերմանել երկպառակություն ու թշնամանք տարբեր տարրերի միջև: Հենց այսպես է, որ կառավարությունը ոչ մի ջանք չի խնայել, որպեսզի արդարության շրջանակներում և ըստ օրենքների՝ օրինակելիորեն պատժի Աղանայի ցավալի իրադարձությունների մեղավորներին և կազմակերպիչներին: Ձեռնարկված արդյունավետ միջոցների շնորհիվ տարրերի միջև միությունն ու համաձայնությունը վերահաստատվեց և կարգադրություններ արվեցին նման ցավալի իրադարձությունների կրկնությունը մեկընդմիջտ կանխելու համար: Ուրեմն, այս տեսանկյունից հայերը, որոնք կայսրության հավատարիմ տարրերից են, հուսալքության ոչ մի լուրջ պատճառ չունեն: Եթե նույնիսկ իրադարձությունների վերաբերյալ տեղում ընդունված որոշումների դեմ բողոքներ լինեն, նախարարների խորհուրդը, որը խորհրդարանի առջև պատասխանատվություն է ստանձնել, իր պարտքը կհամարի վերանայել այդ որոշումների ճշմարտացիությունը:

Գործադիր իշխանությունն իր բոլոր ենթակաների նկատմամբ ի հայտ բերեց հոգատարության ամենասակնառու ապացույցներ՝ նրանց շնորհելով ցանկացած կարգի արտոնություններ և Աղանայի կտտ -

\* Թուրք. - տեղեկագիր - Վ. 7.

քաճներից տուժածների տառապանքներն ամոքելու և մեղմացնելու համար համաձայնվեց դիմել նյութական զոհաբերությունների: Գործադիր իշխանությունը՝ հավատարիմ իր պարտականություններին և ստանձնած պատասխանատվությանը, ապագայում ամենևին չի հրաժարվի նման վարքագծից:

Ըստ վերոհիշյալ մանրամասն բացատրությունների՝ Ձերդ Շնորհույունը բնականաբար կհամոզվի, որ հրաժարականի հարցում համառելը չի կարող համապատասխանել հայրենասիրական զգացումներին, որոնցով նա ոգեշնչվում է: Ուրեմն նախարարների խորհուրդը համոզված է, որ դուք կցանկանաք ետ վերցնել ձեր հրաժարականը և, ինչպես անցյալում, վերստին ձեռնամուխ կլինեք ձեր *հոգևոր գործին*: Այսպիսին է, բնականաբար, պետական խորհրդի որոշումը, որը ես պատիվ ունեմ սույնով ձեզ հղել»:

Այս պատասխանը կարող էր ամենևին չզոհացնել պատրիարքությանը, քանի որ այն միայն վերստին կրկնում էր արդեն նախապես տրված լայնածավալ հավաստիացումները, որոնք մինչ այդ մնացել էին և, ի դեպ, առ այսօր մնում են իբրև մեռյալ տառ: Բացի այդ, այս փաստաթղթում [Բարձր] Դուռը պնդում էր, որ խառնակությունների իրական մեղավորները պատժվել էին, դեռ ավելին՝ վերսկսում էր պատրիարքությունների արտոնություններին և քաղաքացիական իրավասություններին առնչվող խիստ կարևոր մի քննարկում, որը սահմանադրության վերահաստատումից ի վեր Թուրքիայում բազմիցս խոսակցության նյութ էր դարձել:

Հայտնի է, որ ըստ իսլամի հիմնարար վարդապետության և մահմեդական պետության ու քրիստոնյա հպատակների միջև դարերից ի վեր հարաբերությունները կարգավորող զիջումների, վերջիններս, ըստ այն դավանանքի, որի շարքն են իրենց դասում, համախմբված «ազգերի» մեջ, օգտվում են հոգևոր և կրթական ինքնավարությունից, պահպանելով իրենց սոցիալական կազմակերպությունն ու անձնական կարգավիճակը, որը, մահմեդականի կարծիքով, անբաժանելի է կրոնից: Այս առավելությունների հիման վրա, որոնք եթե հաշվի առնենք իսլամական պետության զուտ աստվածապետական բնույթը՝ անօտարելի իրավունքներ են, ի դեպ, բազմիցս հաստատված կայսրական հրովարտակներով և հենց ներկայումս գործող՝ 1876 թ. սահմանադրությամբ, պատրիարքը՝ հույն, հայ, թե որևէ մեկ ուրիշը, անկախ իր հոգևոր պարտականություններից, օժտված է փոքրիշատե աշխարհիկ լայն իրավասությամբ. կառավարությունում նա պաշտպանում է իր հոտի շահերը և, ընդհանրապես, ներկայացնում այն ազգը կամ համայնքը, որի ղեկավարն է: Ի դեպ, սա այն իրավունքն է, որը երիտթուրքերը զուր կերպով ջանում էին վերացնել: Նրանց թեզը հանգում էր նրան, որ քրիստոնյաների այս արտոնությունները չեն համապատասխանում նոր հաստատությունների ներդաշնակ ամբող-

ջությանը, որ սահմանադրական Թուրքիայում արդարությունն անխտիր հավասար է բոլորի՝ մահմեդականների կամ ոչ մահմեդականների համար, ուստի ազատության շրջանակում արտոնություններ չպետք է լինեն: Այս խոսելաճին, որով առաջնորդվում էին պանօսմանիզմի ոգով ոգեշնչվող երիտթուրք բարենորոգիչները, պատրիարքությունները պատասխանում են՝ ըստ իրենց շահերի օգտագործելով կանոնակարգերի անսասան բնույթը, և իրենց հոտերի՝ քաղաքացիական բնույթի իրավունքներից հրաժարվելու անհնարինությունն այնպիսի մի պետությունում, որը չնայած սահմանադրությանը, որքան որ հեռու գնա աշխարհականացման ուղով, մնում է և ընդմիշտ կմնա մահմեդական աստվածապետություն: Այս օրինական պատճառներին կարելի է հավելել այլք, մասնավորապես գործնական նշանակություն ունեցող այն փաստը, որ Թուրքիայում քրիստոնյաներին առնչվող հարցերում շատ բան չի փոխվել, որ վերջիններս դեռևս չեն վայելել ազատական վարչության և դրան արժանի՝ արդարության բարիքները: Ադանայի դատարանի վճիռները դրա լավագույն ապացույցն են:

Պատրիարքության և [Բարձր] Դռան միջև մեկ այլ՝ Ադանայի որբերին վերաբերող նրբանկատ հարցը, տեղիք է տվել երիտթուրք նախարարների ազգայնամոլությանը: Աշխարհականացման և դավանական չեզոքության պատրվակով կառավարությունը պահանջեց մի որբանոց ստեղծել, որտեղ կոտորածների ենթարկված քրիստոնյա զոհերի երեխաները պետք է դաստիարակվեին թուրք երեխաների հետ և, բնականաբար, ստանային զուտ թրքական կրթություն: Ադանայի ներկայիս կուսակալ Ջեմալ բեյը հղացավ պանօսմանական միտում ունեցող այս ծրագիրը խիստ եռանդազին ձևով պաշտպանելու տհաճ գաղափարը: «Եթե, — հայտարարում է նա, — երեխաներն այլևս ոչ հայր ունեն և ոչ մայր, կառավարությունն իրավունք ունի նրանց դաստիարակելու այնպես, ինչպես ինքը նպատակահարմար է գտնում, և ոչ ոք չի կարող նրան ոչնչում հանդիմանել»: «Ո՛չ, — պատասխանում է Հայոց պատրիարքությունը, — այս որբերը հայ երեխաներ են և նրանց դաստիարակության հոգսը բարդվում է ոչ թե թուրքական, այլ հայկական համայնքին պատկանող հաստատությունների վրա»: Բացի այդ, հայերը հայտարարում են, թե թուրքերը չեն կարող անհրաժեշտ կայունության երաշխիքներ տալ նման հաստատության ստեղծման համար: Ի դեպ, նրանք բազմիցս խոսել են որբանոցներ հիմնադրելու մասին, սակայն առ այսօր նպաստել են միայն որբերի ի հայտ գալուն: Վերջապես, ավելացնում են հայերը, եթե ենթադրենք, որ կառավարությունը կկարողանա իրականացնել իր ծրագիրը, համատեղ որբանոցը համարժեք կլինի երկրորդ՝ այս անգամ բարոյական կոտորածի: Նրանք մերժում են այս ծրագիրը՝ կշտամբելով երիտթուրքերին ոչ թե Կիլիկիայի

քրիստոնյաների վշտալի կացությունն ամօքելու, այլ, ընդհակառակը, ի նպաստ այդ նահանգի թուրքական տարրի այն օգտագործելու համար: Արդյոք չեն խորհել այդտեղ մահմեդական վերաբնակներ հաստատելու մասին, որպեսզի թուրքական զանգվածի մեջ տարալուծեն կոտորածից վերապրած հայերի բեկորները: Արդյոք չեն հայտարարել, որ այս վերաբնակներն Ադանայի տարածաշրջանում կգտնեն, թե որտեղ հաստատվեն, և որ բացի այդ, նրանք հնարավորություն կունենան այնտեղ ամուսնանալ հողատեր այրիների հետ...

\*\*\*

Պատրիարք Դուրյանի և [Բարձր] Դռան միջև առճակատումը դեռևս ավարտին չի հասել<sup>78</sup>: Ամիսներ ի վեր բանակցում են ապարդյուն: Հայկական կողմն ակնհայտորեն բարի կամեցողություն է դրսևորել: «Դաշնակցություն» հայկական կոմիտեն, որը ղեկավարում են շրջափայլ քաղաքագետներ դարձած նախկին հեղափոխականները և որոնցից մի քանիսն այսօր օսմանյան խորհրդարանի պատգամավորներ են, հաշվի չառնելով դատապարտումն անցյալում, հասել է մինչ այնտեղ, որ համաձայնության է հանգել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հետ, որի ծրագիրն ամբողջությամբ որդեգրել է և վճռականորեն սատարել դրա քաղաքականությունը: Պատրիարքության խորհրդի աշխարհիկ տարրը ևս հոգևորականների ցանկությամբ իրեն խիստ հաշտվողական ձևով դրսևորեց: Ինչ վերաբերում է [Բարձր] Դռանը՝ այն վարանում է, խոստանում, հրաժարվում իր իսկ խոսքերից, կրկին գեղեցիկ խոստումներ տալիս և արդյունքում ոչինչ չի անում:

Այդուհանդերձ, զիջումից զիջման դիմելով՝ Հայոց պատրիարքությունն ի վերջո սահմանափակում է իր պահանջները: Ներկայումս նա համառում է միայն երկրորդական՝ հրկիզված դպրոցների և եկեղեցիների վերակառուցման, մահմեդականների կողմից հափշտակված ունեցվածքն ու հողերն այրերին և որբերին վերադարձնելու, նեցուկ չունեցող և ցանկացած եկամուտից զուրկ ընտանիքի մայրերի համար արհեստանոցների հիմնադրման և որոշակի նյութական օգնության սահմանման հարցերի շուրջ: Նախարարների խորհուրդը դեռևս քննարկում է այս խնդրանքներին տրվելիք պատասխանը:

<sup>78</sup> Այս էջերը տպագրության հանձնելու պահին, Կոստանդնուպոլսից ճեպագրերը հաղորդում են, որ ցանկանալով ավելի ակնառու դարձնել իր բարյացակամությունը՝ պատրիարքը ետ է վերցրել իր հրաժարականը (1910 թ. փետրվարի 12-ին), այնուամենայնիվ հայտարարելով, որ կվերադառնա իր որոշմանը, եթե Հակիի կառավարությունը՝ հետևելով Հիլմիի կառավարության քաղաքականությանը, համառորեն շարունակի կեղծ խոստումներով իրեն հիմար վիճակի մեջ դնել:

Մյուս կողմից, Քրդական Հայաստանից նամակներն ու հեռագրերը հայտնում են Ադիջևազում, Վանում, Խնուսում, Մանազկերտում, Մուշում նոր փոքրածավալ կոտորածների մասին:

\*\*\*

Այն, ինչը մեծապես նպաստել է օսմանյան կառավարության անտարբերությանը՝ անատարկելիորեն Եվրոպայի դիրքորոշումն է: Կոտորածների ընթացքում տերությունները նավեր ուղարկեցին Կիլիկիայի և Սիրիայի ափերը, և այս ռազմանավերի ներկայությունը բնականաբար բոլորովին ապարդյուն չանցավ: Բավական էր, որ անգլիական մի վաշտ Ալեքսանդրետի ափ դուրս գար, որպեսզի այնտեղ իսկույն անդորր տիրեր: Մերսինի նավահանգստում օտար նավերի հայտնվելն անմիջապես միևնույն արդյունքին է հանգեցրել: Նույնը վերաբերում է Բեյրութին, Լաթաքիային և դրանց արվարձաններին: Սակայն այս միջամտությունը մնաց խիստ սահմանափակ և նպաստեց միայն ծովափի հարևանությանը գտնվող մի քանի բնակավայրերի պաշտպանությանը: Ադետի ավարտից հետո տերությունները սահմանափակվել են [Բարձր] Դռանը բարեկամական խորհուրդներ տալով: Նրանք չէին կարող ավելին անել: Նրանք անշրջելիորեն երկփեղկված են թուրքական գործերի հարցում: Նրանց ներկայացուցիչները Կոստանդնուպոլսում ավելի քան երբևէ կլանված լինելով գործերի, պատվերների, կոնցեսիաների ընթացքով՝ զբաղվում են միայն երիտթուրքերին շողոքորթելով գրեթե այնպես, ինչպես շողոքորթում էին Ելզըզ-Քոչքին:

Արևմուտքի խորհրդարանական շրջանակներում գտնվել է միայն մի մարդ՝ պլարոնի Դենի Կոշենը, որը հօգուտ զոհերի ծայն է բարձրացրել՝ հայտարարելով<sup>79</sup>. «Մեր պարտականությունն է ասել, որ համաձայն ենք աջակցել երիտթուրքական վարչակարգին միայն այնչափ, որչափ նա պատրաստակամություն կցուցաբերի ապացուցել իր կամեցողությունը քաղաքակրթության կանոններին հետևելու խնդրում: Կարելի է ափսոսալ, որ մեր դեսպանը, որն այս հանգամանքներում կարող էր գործել բավականաչափ հստակ ձևով, այդպես չի վարվել»:

Ադանայի գործում օսմանյան կառավարության քաղաքականության համար արևմտյան մամուլի հեղինակավոր օրգանների գրելառճը պակաս քաջալերող չի եղել: Ակնհայտորեն ոգեշնչված հողվածներից մեկում, որի հրատարակումը համընկնում էր Մահմուդ Շեքթեֆաշայի ժամանմանը Փարիզ (նախաճաշ Ելիսեյան պալատում, այցելություն Կրյուզո և այլն), «Տանը» (1909 թ. սեպտեմբերի 30-ին), անդրադառնալով հայ-թուրքական տարածայնությանը, նշում էր, որ «փաստարկներն ու պատճառները, որոնք թուրքերին՝ ըստ նրանց դիրքորոշման շահերի, ներկայացնում են նրանց համար բարենպաստ լույսի ներքո, անգոր և անարժեք չեն... Կոտորածները բացատրվում են տարածաշրջանի հայերի և մահմեդականների տրամադրվածության հակադրությամբ: Հայերը խանդավառությամբ էին դիմավորել ազատու-

<sup>79</sup> 1909 թ. մայիսի 17-ի խորհրդարանի նիստում:

թյան դարաշրջանը: Նրանք գենքեր են գնել, ցանկացել են ամուսնանալ մահմեդական աղջիկների հետ, Մերսինում բեմադրել են հայկական թագավորությունը փառաբանող մի թատերերգություն»: Այն, որ հայերը կարող էին խանդավառությամբ ընդունած լինել ազատության դարաշրջանը՝ անառարկելի է. բայց արդյո՞ք երիտթուրքերը դրա համար էին նրանցից բողոքում: Այն, որ նրանք կարող էին գենքեր գնած լինել և հայկական թատերերգություններ բեմադրած լինել՝ նույնպես ճիշտ է, բայց ինչ վերաբերում է մահմեդական աղջիկների հետ ամուսնանալուն՝ դա երևակայության արգասիք է<sup>80</sup>: Բացի այդ, եթե նույնիսկ հայերի դեմ ուղղված բոլոր մեղադրանքները հիմնավորված լինեն, ոչինչ չէր կարող արդարացնել կոտորածները, առավել ևս այն անպատժելիությունը, որից օգտվում էին ջարդարարները:

\*\*\*

Կիլիկիայի հողոքոստը, անտարակույս, երիտթուրքերի գործը չէ: Այս հրեշավոր հանցավորձի պատասխանատվությունն ամբողջությամբ բարդվում է համիդյան հետադիմական վարչակարգի վրա: Սակայն երբ վերականգնվեց երիտթուրքերի իշխանությունը, նրանք պարտավոր էին, ինչը և համապատասխանում էր նրանց շահերին, հայ ազգին հատկացնել անհրաժեշտ փոխհատուցումներ և իսկույն ևեթ ապացուցել, որ «հավասարություն» և «եղբայրություն» բառերը, որոնցով ցանկացած առիթով լի էին նրանց բոլոր ելույթներն ու գրությունները, դատարկ խոսքեր չէին:

Այս, ինչպես և շատ այլ հարցերում, նոր վարչակարգը հիասթափեցրել է ամենաչափավոր հույսերն իսկ: Օսմանյան խորհրդարանի, երիտթուրքական կուսակցության և սահմանադրական կառավարության դիրքորոշումը տեղիք է տալիս ամենախիստ քննադատության: Այս առնչությամբ ոմանք կարծեցին, թե երիտթուրքերի քաղաքական անփորձությունը կարող է արդարացում լինել: Ասում են, թե նրանք նոր են գտնվում իշխանության դեկի մոտ, որի շատ զսպանակներ վրիպում են նրանց ուշադրությունից: Տվյալ պարագայում այս պատճառը ժամանակի տեսանկյունից չի կարող շահեկանորեն վկայակոչվել: Խոսքն այստեղ տարրական արդարության մասին է, որը չի ենթադրում բացառիկ գիտելիքների առկայություն կառավարման արվեստում: Արդարության ավելի ճշգրիտ հայեցակարգ, փոքր-ինչ բարի կամք՝ պարտականության կատարման հարցում, ահա այն ամենը, ինչ պահանջվում էր երիտթուրքերից: Անկասկած, նրանց իշխանությունն անկայուն է, իսկ կացությունը՝ դժվարին: Օրինական էր, նույնիսկ անհրա-

<sup>80</sup> Եթև բարյացակամ մահմեդականներն ըստ կրոնական օրենքի՝ կարող են ամուսնանալ քրիստոնյա աղջիկների հետ, ապա փոխարենը, անհավատը կարող էր օրինականորեն ամուսնանալ մահմեդական աղջկա հետ միայն իսլամ ընդունելուց հետո: Այս ձևականությունը բավարարելու բացակայության դեպքում սրբապիղծ գույգր քարկոծմամբ մահվան և դատապարտվում:

ժեշտ, որ նրանք զգուշաբար վերաբերվեին մահմեդական Փոքր Ասիային, ապագայում իրենց սեփական գործի համար նվազ կարևոր չէր, որ պատժելով կոտորածների իրական հեղինակներին և խոչընդոտելով անմեղ հայերի վրա մեղադրանքների բարդմանը և նրանց դատապարտմանը՝ նրանք արդարացնեին իրենց նկատմամբ տածվող վստահությունը:

Արդարության սուկալի ուրացումը, որից հայերը զանգատվում են տասն ամիս ի վեր, չէր կարող պատճառաբանվել միայն այն երկյուղով (որով համակված էր սահմանադրական կառավարությունը), թե մեղավորների հանդեպ ուժի գործադրումն առիթ կտա մոլեռանդներին ըմբոստանալու: Կառավարությունը չերկյուղեց ապստամբությունից, երբ Աբդուլ Համիդի գահընկեցության հաջորդ օրն իսկ Ստամբուլի հրապարակներում կախադաններ բարձրացրեց, որոնց վրա պաշտոնատարները, հոջաները, պաշտոնյաները քավեցին՝ ապրիլի 13-ի հետադիմական դավադրության մեղքը: Եթե Ադանայում օսմանյան արդարադատությունն այլ կերպ գործեց, եթե այս գործում երիտթուրքական կառավարության դիրքորոշումը հիշեցնում է գլխավորապես հին վարչակարգի մեթոդներն ու սխալները, նշանակում է, որ անկախ այն բանից, թե օսմանյան ազատականները, հաճախ բարյացակամորեն, ինչ կասեն, նրանց մեծամասնությունն այն համոզմունքին է, որ մահմեդականը, հատկապես թուրքը, պետք է մնա արտոնյալ ժողովուրդ:

Այս ժառանգական, անխորտակելի համոզմունքին հավելվում է հայերի, Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների նկատմամբ ավանդական անարդարացի թերահավատությունը: Եթե առանձին երիտթուրքեր, որոնց ազատականությունն անկեղծ է, զղջում են Կիլիկիայի կոտորածների համար, ապա շատերը, ովքեր իրենց դասում են նոր դպրոցի հետնորդների շարքում, ամենևին շատ չեն զղջացել այն բանի համար, որ հայերը կարող էին «փոքր-ինչ խիստ» պատիժ կրած լինել: Թուրք պատգամավորները, խորհրդարանական պատվիրակության անդամները, որոնք, ի դեպ, շատ պատվաբաժան մարդիկ են և անցյալ ամառ այցելել են Փարիզ և Լոնդոն, Ադանայի կոտորածի առնչությամբ ինձ բազմիմաստ հայտարարություններ արին: Նրանցից մի քանիսն ի դեմս դրա տեսել են «ցավալի թյուրիմացություն, որը կարող էր վարկաբեկված լինել սահմանադրական կառավարության բարի համբավը»: Երկու այլ անձինք ինձ հավաստել են, որ կոտորածը եղել է «անհրաժեշտ մի չարիք, քանի որ հայերը չէին հրաժարվել իրենց անջատողական ձգտումներից»:

Նման մտածելակերպը չպետք է մեծ զարմանք պատճառի: Նրանք, ովքեր համիդյան ամենագեղեցիկ ժամանակաշրջանում հետևել են արտերկիր արքստրված երիտթուրքերի քարոզչությանը, պետք չէ, որ

զարմանան՝ հավաստելով, որ այսօր Թուրքիայում, մասնավորապես քրիստոնյաների համար, շատ բան չի փոխվել: Թերթեր «Մեշվերեթի» հավաքածուն, այն փոքր լրագրի, որն Ահմեդ Ռիզան և նրա բարեկամները հրատարակում էին Փարզում՝ Արդուլ Համիդի վարչակարգի դեմ պայքարելու համար: Սուլթանի և նրա խորհրդականների դեմ ամենաուժգին և ամենացասկոտ, ի դեպ, միանգամայն տեղին հարձակումների կողքին, այնտեղ կարելի է գտնել յուրօրինակ պաշտպանական ճառեր՝ ի նպաստ իրենց համակարգի, երբ խոսքը վերաբերում էր թուրքական շահին, և նույնիսկ ի նպաստ իրենց ոճիրների՝ հենց որ խոսքը վերաբերում էր օսմանյան ոչ թուրք հպատակներին: 1904 թ. Ելզըզ-Քոչըր Սասունում կազմակերպում էր փոքրածավալ կոտորած:

«... Անկեղծ ասած, - գրում էր «Մեշվերեթը»<sup>81</sup>, - ինչ կարող էին պատասխանել տերությունները, եթե սուլթանը նրանց տված լինեք դիվանագիտական այս հակիրճ պատասխանը. «Ես պատժում եմ ընթուստ հպատակներին»:

Նույն ձայներանգը, նույն գրելաոճը բնորոշ է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի թուրքալեզու օրգան «Շյուրա-ի ումեթին», որը հանդես էր գալիս Թուրքիայում բանականություն արթնացնելու առաքելությամբ: Ահա, օրինակ, մի հատված Երիտասարդ Թուրքիայի ամենալուսավոր դեմքերից մեկի՝ բանաստեղծ և փիլասոսան Մեզայ բեյի ստորագրությամբ տպագրված հոդվածից<sup>82</sup>.


«Մենք հայերին ասում ենք. դուք բողոքում եք համիդյան վարչակարգից և ներկայիս կառավարական համակարգից, դուք իրավացի եք: Միավորվելով մեզ, իբրև միևնույն հայրենիքի զավակներ՝ փոխենք այս վարչակարգը և այս համակարգը: Սակայն, դժգոհելով թուրքերից՝ դուք սխալվում եք:

Եթե, թուրքերը, ով հայեր, որոնց հետ այդքան դարերից ի վեր ապրել եք, զվարճացել են ձեզ կոտորելով, որը դուք պնդում եք, համաձայնեք, որ պետք է դադարած լինեիք գոյություն ունենալուց: Ձեր գոյությունը լավագույն ապացույցն է, որ թուրքերը չեն կոտորում»:

\*\*\*

Այսպիսին էր երիտթուրքերի մեծամասնության տեսակետը սահմանադրական դարաշրջանի հռչակման նախօրեին: Թվում է, թե այն այդպիսին է առ այսօր: Անկասկած, վրա չի հասել այն ժամանակը և այն, հավանաբար, երբեք վրա չի հասնի, երբ Թուրքիայում քրիստոնյայի իրավունքը հավասարակշռի մահմեդականի շահի հետ:

1909 թ. դեկտեմբեր



<sup>81</sup> 1904 թ. հունիսի 1-ին:

<sup>82</sup> Մեջրեթկյ է «Մեշվերեթը» 1904 թ. դեկտեմբերի 1-ին:

Ա Ն Ճ Ն ա ն ո լ Ն Ն Ե Ր

Արգարյան – 34  
 Արդուլ Համիդ II – XII, XVI, 1-2, 11-12, 91-92  
 Արդուլ Քաղեր – 15, 19, 71, 82  
 Ադիլ, բեյ – 24, 74  
 Ադոսիդես Ա. – X-XIX  
 Ազարիկեան Է. – XI  
 Ազնավուր Պ. տես Բրեզոլ Ժ.  
 Ալեքսանդր Մեծ – 5-6  
 Ալի Ռահմի – 28  
 Ահմեդ Ռիզա – 92  
 Անզե Ժ. դը – 67  
 Աշիկյան Տ. – 70  
 Ապիկյան – 59  
 Ապիկյան, տիկին – 41  
 Ասաֆ, բեյ – 39, 82-83  
 Ատոսիտիս Ա. տես Ադոսիդես Ա.  
 Արաբ Մուլա – 11  
 Արիֆ Իսմեթ – 74  
 Արթին – 50  
 Արսեն – 18  
 Արտաքսերքսես – 6  
 Բաթումլու Օսման – 71  
 Բահրի, փաշա – 7  
 Բաղդադի Ջադե Արդուլ Քաղեր – 11  
 Բաղդադյան – 44  
 Բաղդադյան Ա. – 44  
 Բայազեդ II – 7  
 Բենուա, հայր – 26, 30, 35

Բոչնակզադե Սալիհ – 71  
 Բրայս Ջ. – XIX  
 Բրեզոլ Ժ. – X  
 Բուք Ժ.-Լ. – 45  
 Բուրդիկյաններ – 27  
 Գիբոնս Հ. Ա. – 17-20, 23-24  
 Գյուլեթլի Թյուֆիք – 71  
 Գյուլեթլի օղլու Վելի – 11  
 Գույումջյան Գ. – 71  
 Գյուլեզդերեյան – 44  
 Դանիելյան Ն., Նորին սրբազնություն – 79  
 Դարեհ III – 6  
 Դաուրի-Ուայլի – 12-13, 17, 22-24, 26, 28, 35, 45, 63, 66, 72, 77  
 Դաուրի-Ուայլի, տիկին – 70, 72  
 Դորիս Գ. տես Ադոսիդես Ա.  
 Դուրյան, Նորին սրբազնություն – 84, 88  
 Ջաքարիա, բեյ – 41  
 Ջեհնի փաշա Բաբան-զադե – 70-71  
 Ջոհրապ Գ. – 74  
 Էբուզիա Թեֆիկ – 83  
 Էսադ, բեյ – 41  
 Էքիզ օղլու – 46  
 Էքիլի Հովսեփ – 59

Թերզյան, Նորին սրբազնություն – 29  
 Թոզջյան – 46  
 Թոզջյան Ա. – 46  
 Թորոսյան Շ. Թ. – XVII  
 Թրոուրիջ Ա. – 23, 30, 56, 58  
 Ժոզեֆ, հայր – 40  
 Իբրահիմ Եզիպտացի – 6  
 Իհսան Ֆիքրի – 12, 32, 71, 82  
 Իսմայիլ – 43-44  
 Իսմայիլ Հաքի – 11  
 Իսմայիլ Սեֆա – 12, 33, 71  
 Իսմայիլ Ֆադիլ, փաշա – 84  
 Լաբարդեն, հայր – 48  
 Լամբեր Ռ. – 80  
 Լենկ Թեմուր – 6, 10  
 Լեփսիուս Յ. – XIX  
 Խալիդե Սալիհ – 83  
 Կլեոպատրա – 5  
 Կիաքսար – 6  
 Կիբարեն օղլու Մեհմեդ – 43-44  
 Կյուրոս Կրստեր – 6  
 Կոչեն Դ. – 76, 89  
 Հալիլ – 28  
 Հակ Բարա – 49  
 Հակի, բեյ – 76, 88  
 Հակոբ – 43-44  
 Հակոբյան – 47  
 Հակոբյան Ա. – 47  
 Համլետ – 10  
 Հաջի, բեյ – 50-51  
 Հասան Հուսեյն – 57  
 Հիլմի, փաշա – 11, 75, 84, 88  
 Հովհաննես – 44  
 Հովհաննես Յափուջի – 15  
 Հուսեյն Դայիմ, բեյ – 28, 71, 78  
 Հուսեյն Ջահիդ – 83  
 Մ. Գ. – 28-29, 42-43  
 Մ. Ջ. – 44  
 Մահմուդ Շեքեթ, փաշա – 32, 89  
 Մանդելշտամ Ա. – XIX  
 Մանուկ – 47  
 Մարի-Սոֆի – 21, 26, 35  
 Մարիամ, Սուրբ Կույս – 27  
 Մարկոս Անտոնիոս – 5-6  
 Մարթին Ջ. – 54-56  
 Մեհմեդ V – 36  
 Մեհմեդ Ալի, բեյ – 70  
 Մխիթարյաններ – 7  
 Մորեր – 24  
 Մուավիա, խալիֆ – 6  
 Մուհամեդ – 26  
 Մուհամեդ Նվաճող – 7  
 Մուշեղ, Նորին սրբազնություն – 7, 11, 79  
 Յուսուֆ Քենալ – 64, 69, 74-75  
 Ներսիսյան Մ. – XI  
 Շադրիկյան Ա. – 19  
 Շեփարդ Հ. – 47  
 Չենթերս Լ. – 40, 80  
 Չենթերս Ու. – 16-20, 22, 30, 37, 39, 66  
 Չենթերս, օրիորդ – 59  
 Պապիկյան Հ. – 64, 74  
 Պիշոն Ա. – 63-64, 75-76  
 Պողոսյան Վ. – X, XII. XIX  
 Պոմպեոս – 6

Ջենալ, բեյ – 41, 73, 87  
 Ջուջի, բեյ – 47  
 Ջևադ, բեյ – XV, XVII, 11, 16, 19, 28, 34, 70, 82

Ռենգի, փաշա – 12, 18, 28, 70  
 Ռիզալ, հայր – 40, 45-46  
 Ռոժեր – 24  
 Ռոբեֆերի Ֆ. – 52, 62

Սաբատին, հայր – 24  
 Սաբրի – 41  
 Սահակ, Նորին սրբազնություն – 11  
 Սեզայ, բեյ – 92  
 Սելևկյաններ – 6  
 Միմոնյան Հ. – X, XIII  
 Միսլյան – 12  
 Սկարֆոզլիո Ա. – 27  
 Սուրբ-Ժոզեֆ – 34  
 Սուրբ-Պողոս – 34-35

Վարդգես – 74  
 Վեր Է. – 12, 22, 81

Տրիպանի – 24, 36

Ուալիս – 36  
 Ուրֆայան Դ. – 19

Քենան, փաշա – 82, 84  
 Քենեդի – 51-52  
 Քեշիշյան Կ. – 79  
 Քեոբ Ահմեդ – 11  
 Քերիմ, աղա – 8  
 Քյամիլ, մեծ վեզիր – 11  
 Քյուսե, աղա – 11  
 Քրիսթի – 8, 44-45

Օմար, շեյխ – 59  
 Օսման – 28  
 Օսման, բեյ – 71

Օրեշ – 49

Ֆավր Լ. – 25, 36-37, 40, 55-56, 58, 66  
 Ֆաուլ – 80  
 Ֆերիման Դաքեր – X  
 Ֆրիդրիխ Շիկամորուս – 5  
 Ֆերիդ, փաշա – 74

Տ Ե Ղ Ա Ն Դ Բ Ն Ն Ե Ր

Աբդ օլլու – 43  
 Ադանա – XII-XIII, XV-XVI, 1-2, 6-8, 10-13, 15-17, 22, 24-25, 27-28, 30, 32-33, 35, 37, 39, 42-44, 50-51, 55, 57, 62-63, 65-69, 71, 73-77, 79, 82-85, 87, 89, 91  
 Ադանայի վիլայեթ – 5, 12, 28, 45, 54, 65, 88  
 Ադիլջևազ – 88  
 Աթալիա – 82  
 Աթիբ – 59  
 Ալեքսանդրետ – 5, 51, 54, 57, 59, 67-68  
 Ալեքսանդրետ, ծոց – 5, 36, 52, 89  
 Ալեքսանդրիա – 68  
 Ամանու – 6  
 Ամանոսյան դռներ – 6  
 Ամերիկա – 72  
 Այաս – 40, 50  
 Այնթապ – 47  
 Անատոլիա – 3, 9, 60, 65, 67, 84  
 Անգլիա – 12, 21-22, 24, 44, 51, 54, 63  
 Անդերին – 60  
 Անի – 6  
 Անտիոք – 5, 46, 54-57, 67, 69, 73  
 Ասիա – 3  
 Ասիական Թուրքիա – XVI, 2

Արաբ դ'Էքքեզ – 48  
 Արաբ Շոխի – 52  
 Արջայ – 59  
 Արևելք – 17, 66  
 Արևմտյան Ասիա – 1, 6  
 Արևմուտք – 89  
 Արքեզ – 52

Բազիթ, ծոց – 58  
 Բախչե – 11, 48-50, 67, 69  
 Բաղդադ – 6  
 Բայբուրթ – 65  
 Բեյլան – 5, 59  
 Բեյրութ – 32, 89  
 Բուլանրկ – 11  
 Բուրիան – 65

Գալիպոլի – 75  
 Գեմերեթ – 65  
 Գյոքսուն – 60  
 Գյոքչայիր – 50

Դամասկոս – 32  
 Դիարբեքիր – 60  
 Դյոդթ Յոլ – 51-52, 67, 79, 81  
 Դուզաղաշ – 59

Եգիպտոս – 68, 79  
 Եվրոպա – 2, 32, 76, 89

Երևան – X-XI, XIII, XVII

Ջեյթուն – 60

Ջմյուռնիա – 3, 73

Էլսենոր – 10

Էրզին – 76, 80, 83

Էրզրում – 30, 60, 62, 65

Էքիզուրք – 59

Թուրքիա – XIV, 3-4, 83, 86-87, 92

Ինջիրլիկ – 43, 69

Իսլահիե – 11, 48, 50

Իսուս – 6, 51

Իրան – 6

Լաթաքիա – 5, 41, 58, 89

Լափաջլը – 50, 69

Լիբանան – 68

Լոնդոն – 91

Խառնի – 46-47

Խասսա Յարփուզ – 41, 65

Խարբերդ – 41, 65

Խնուս – 88

Կալադուրան – 57-58

Կալիկադոնոս – 5

Կահիրե – 68, 71, 78, 82

Կասիոս, լեռ – 57

Կարաթաշ – 50

Կարական – 59

Կարաքոյ – 51

Կարս – 51, 60

Կեսարիա – 41, 65

Կիպրոս – 67-68

Կիլիկիա – X-XI, XIII-XVIII, 1-3,

5-8, 11, 26, 39, 50, 62, 65, 67,

69-70, 73, 77, 83, 87, 89-90

Կիլիկյան դարպասներ – 6, 42

Կոզուլուկ – 45

Կոյելսիրիա – XVII, 5

Կոստանդնուպոլիս – XVII, 1-3, 6,

11, 15, 20, 24, 32-33, 63, 67,

72-74, 76, 82, 88-89

Կովկաս – 5

Կրյուզո – 89

Հալեպ – XI, 52, 62, 72

Հալեպի վիլայեթ – 7, 60

Հանն – 11, 42, 50-51, 65, 79-80

Համիդիե – 30, 41, 45-46

Հայաստան – 2, 4, 6, 10, 15

Հասան-Բեյլի – 48-49, 69

Հիսար – 47

Ղազի – 51

Մալաթիա – 27, 60

Մանազկերտ – 88

Մարաշ – 12, 47-48, 60, 65-67, 73,

76, 80

Մեծ Բրիտանիա տես Անգլիա

Մեծ Հայք – 6

Մերսին – 6, 10, 17, 22, 32, 35-36,

41, 67, 71, 75, 89-90

Միջագետք – 6

Միջերկրական ծով – 6

Մսիս – 42-43, 51

Մուշ – 60, 88

Նաջարի – 8

Նարզիզլիք – 59

Շար – 51

Շեֆրին – 65

Շրլսլի – 52

Շվեյցարիա – 72

Չայլու – 51

Պայաս – 46, 54, 80-81

Պարսկաստան – 4, 13

Պիրամուս – 5

Ջերե-Բերեքեթ – 39, 50, 52, 69, 82

Ռումլու – 51

Ռուսաստան – 4

Սալջիլար – 71

Սայ-Գեչիդ – 50-51

Սասուն – 92

Սարոս – 5, 29, 36

Սիհուն – 1

Սինդուս – 5, 44

Սիս – 11, 50-51

Սիրիա – XI, 6, 68, 89

Սոուք Օլուք – 59

Սվազ – 10, 65, 67

Ստամբուլ – XII, 1, 91

Սուեդիե, ծոց – 65

Վան – 88

Վենետիկ – 7

Վիեննա – 76

Տարսուն – 5-6, 8, 17, 44-45, 67, 69,

71, 75

Տավրոս – 5

Տավրոսյան լեռնաշղթա – 6

Փարիզ – 4, 66, 75, 84, 89, 91-92

Փոքր Ասիա – 2, 6, 9, 60, 75, 91

Փոքր Հայք – 6-7

Քանլըդարի – 59

Քարոտ Կիլիկիա – 5

Քեսար – 5, 41, 57-59, 67, 72

Քրրոկիսան – 5, 55

Քիշիֆիլի – 60

Քյուզելի – 59

Քյուլեկ Բողազ տես Կիլիկյան

դարպասներ

Քյունեպեր – 47

Քրդական Հայաստան – 88

Քրիսթիանքոյ – 43

Քուրդիստան – 77

Օգերլի – 50

Օջաքլի – 51

Օսմանիե – 30, 41, 46, 69

Օսմանյան կայսրություն – XII-

XIII, XVI, 4-5, 91

Օրդու – 57

Օրշան օղլու – 60

Օրոնտ – 56-57

Ֆեքե – 51

Ֆրանկֆուրտ – 49

Ֆրանսիա – 32, 72, 75

X Առաջարան

XX Կոտորածների նախօրեին

14 Ադանայի առաջին կոտորածը

31 Ադանայի երկրորդ կոտորածը

38 Կոտորածն Ադանայի վիլայեթում

53 Կոտորածը Հալեպի վիլայեթում



61 Կոտորածների հանրագումարը


70 Կոտորածներից հետո

94 Անձնանուններ


97 Տեղանուններ



Արանայի հրկիզված հայկական թաղամասի ընդհանուր պատկերը




ՔԱՅԵՐ ԵՎ ԵՐԻՏՅՈՒՐՔԵՐ ԿԻՆԿԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ



*Աղանայի երկրաշարժից հայկական թաղամասի ընդհանուր պարսկերը*  
Մ. Փարուզյանի հավաքածու

*Բյուրնես Դ'Ադանա. Eglise et Ecole Syriennes.*



*Աղանայի ասորական եկեղեցին և դպրոցը 1909 թ. ապրիլի կործնից հետո*  
Մ. Փարուզյանի հավաքածու


*Արանայի հրկիզված հայկական թաղամասի ընդհանուր պարկերը*



Մ. Փարոսյանի Լուսինյան

ԱՆՅԵՐ ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐՁԵՐ ԿՐԻԿԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Ադանայում Ֆրանսիայի փոխխյուպարտության թարգմանի հրկիզված տունը Մ. Փարոջյանի հավաքածու



Ադանայի իրադարձությունների ընթացքում հրկիզված «Դրոշակ» կոմիտեի դահլիճը Մ. Փարոջյանի հավաքածու



Ադանայի հրկիզված թաղամասը


Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հավաքածու

Use Visite aux Quartiers brulés, à Adana en Avril 1914



Տեսարան Ադանայի՝ ավերակների վերածված հայկական թաղամասից Մ. Փարոջյանի հավաքածու







Աղանայի ծայրամասում գրեթե փրկված հայերի ճամբարը  
Մ. Փարսեցյանի հավաքածու



Եվեղեցու բակում ապաստանած՝ կորսորածներից փրկված հայ  
մահաբարակները Մ. Փարսեցյանի հավաքածու



Անդրիկյան առաքելության հարևանությանը գրեթե Կրեմլի՝ Արևմտյան հայկական երկրչված թաղամասը Մ. Փարուջյանի հավաքածու



Երկու կողմից միջանկյալ շրջանում ֆրանսիացիների տեղաբնակում և ապիլի 26-ին երկրչված ժամանակակից բուժիկը Մ. Փարուջյանի հավաքածու

1909 թ. ապրիլ, հրկիզված Ադանա, ճամբարի վրանների տակ  
սպասարանած հայեր Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հավաքածու

Avril 1909 - ADANA incendié - Les Arméniens campés sous des tentes



Ադանա քաղաքից դուրս՝ վրանների տակ սպասարանած հայերի  
ճամբարը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հավաքածու

Campement des Arméniens hors de la Ville, sous des tentes



305. Marine Française. JULES-FERRY Croiseur de 1<sup>er</sup> rang

«Ճյուղ Տեղի» զբոսակիր հաճանավել, որը 1909 թ. ապրիլին  
Բազիթի ծոցում սպասարանեց 1450 հայ փախստականների  
Մ. Փարուջյանի հավաքածու

